


ԷԶՄԻԱԾԻՆ



Ե
2002


AM 146



ԾՆ ՏԱՐԻ

ԷԶՄԻԱԾՆԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ
ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱԾՆԻ



Մ յ ի յ
2002

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը «Հայաստան-Սփյուռք» երկրորդ խորհրդաժողովի քացման ժամանակ	3
Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի քարոզը՝ խոսված Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում	7
Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի քարոզը՝ խոսված Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում	10

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

Վեհափառ Հայրապետի Օրհնության գիրը ԱՄՆ հայոց Արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանին՝ թեմի առաջնորդ վերընտրվելու առիթով	13
ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը տեր և տիկին Բեդեյաններին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին	15
ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը տեր և տիկին Զեսուրյաններին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին	17
ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ կոնդակը տեր և տիկին Փինեճյաններին «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով պարգևատրելու մասին	19
Հայրապետական գնահատություն	21
Վեհափառ Հայրապետի շնորհավորական ուղերձը Շուշիի ազապագրման 10-ամյակի առիթով	22
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ծաղկեպսակ դրեց Անհայր զինվորի հուշարձանին	23
Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ Սարգստապարի հերոսների	24
Ամենայն Հայոց Հայրապետն ու Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը ողջունեցին «Հայաստան-Սփյուռք» համաժողովի մասնակիցներին	25
Գերագույն Հոգևոր Խորհրդի երկօրյա նիստ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում	26

ԱՐԱՐԱՏ ՈՒՐԿ. ՆՈՒՐԻԶԱՆՅԱՆ - Շքանշանների հանդիսավոր հանձնում Մայր Աթոռում	27
ԱՐԹՈՒՐ ՍՐԿ. ՎՈՎԱՆՆԻՍՅԱՆ - Գաբրիելա Նասֆեթերի «Լուսո նշան» սպեկտակուլյարության ցուցադրումը Ալեք և Մարի Մանուկյանների անվան Գանձարանը	29

ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

ՆԻԿՈԼԱՅ ԲԵՐԴՅԱՆ - Խորհրդապաշտություն (միսսիկա) և կրոն	31
---	----

ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱԶԳԵՆ ՎԱՐՔԱՐՉՈՒՄՅԱՆ - Հայերեն <i>Աստուած</i> բառի ծագումը	43
ՆԱԿՈՐ ՔՅՈՍԵՅԱՆ - Կիրակոս վարդապետը և նրա նորահայտ ճառը	60
ՆՄԱՅԱԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ - «Դաշին Արարազում» Ավարայրի ճակատամարտի փեղը	73
ՎԵՐՈՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ - Նկարումներ Մարտիրոս Դրիմեցու կենսագրության վերաբերյալ	77
ԱՎԵՏԻՍ ՆՄԱՅԱԿԻ ՎԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ - Հայ գաղթականության փեղաբաշխումը և օգնության կազմակերպումը Արևմտյան Հայաստանում Մեծ Եղեռնի փարիսերին	86
ԱՎԱԳ ՎԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ - Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ներպետական և դիվանագիտական գործունեությունը 1918-20 թվականներին	96

ՄԱՅՐ ԱԹՈՒՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

Վերածվեց Ապարանի Ս. Խաչ եկեղեցին	116
Հայոց Հայրապետի հանդիսապետությամբ կատարվեց Վանաձորի առաջնորդանիստ եկեղեցու հողօրհնեքը	117
Ամերիկայի հայոց Արևելյան թեմի հոգևորականաց փարեկան համագումարը և Խաժակ Սրբազանի վերընտրությունը թեմի 100-րդ փարեկան պարգևավորական ժողովում	119

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Ռաֆայել Հսրբելային	121
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Կանադայի խորհրդարանի «Կանադա-Հայաստան» բարեկամության խմբի անդամներին . . .	121
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Կորեայի դեսպանին	122
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ գլխավոր քննարկողին	123
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Սերգեյ Միրոնովին	123
Գարեգին Բ Կաթողիկոսն ընդունեց Հայ Կաթոլիկ Եկեղեցու պետ Ներսես-Պետրոս ԺԹ-ին	124
Եկեղեցական բնմ. լուրեր	125
“Эчмиадзин” официальный журнал Эчмиадзинского Католикосата . . .	126
“Etchmiadzin” official monthly of Holy Etchmiadzin	129
“Etchmiadzine” organe officiel du Saint-siège d’Etchmiadzine	132

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄԱՅՄՅՈՑՅԱՄ

ԳԳՐԱՄԱՍ

ՑՈՑՄՆ ՄԵՄԴԻՄ

ՄԱՅԹՈՒՆՈՒԹՅՈՒՆ

ՑՈՒՆԱՆ ԴՅՄ

ԴՄԵՄԴՄՅՈՒՆ ԳՈՐԳՍ

11-11

2002

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆ - ՍՓՅՈՒՌ» ԵՐԿՐՈՐԴ

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻ ԲԱՅՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(27 մայիսի 2002 թ.)

Մեծարգո Նախագահ Հայաստանի Հանրապետության,
Սիրելի Վեհափառ եղբայր,
Սիրելի հայորդիներ:

Հուսառապ խնդությունը Մեր հոգում՝ Հայրապետական սիրով ողջունում ենք համահայկական խորհրդաժողովի պարվարածան մասնակիցներին: Հայոց հոգևոր կենտրոնից բերում ենք Ձեզ Միաձնակառույց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությունը:

Ազգահավաք է այսօր Մայր Հայրենիքում: Հայաստանի Հանրապետության հրավերով ազգս ներկայացնող հայորդիներս՝ Սփյուռքից և Հայաստանից, աշխարհական և հոգևորական դասերով, գիտության, արվեստության, կրթության ու մշակույթի փարբեր բնագավառների ներկայացուցիչներով, հավաքվել ենք քննության առնելու համազգային նշանակության խնդիրներ:

Փառք Տիրոջը, որ պարգևում է մեզ շնորհը հայրենի խաղաղ երկնքի ներքո գումարվելու հայրենյաց սիրո միասնությամբ: Այս հավաքը, արդարև, ուզում ենք կոչել «աշխարհաժողով»՝ այն բառով, որով վաղնջական օրերում կոչվում էր հայոց խորհրդակցական հավաքը: Հայոց աշխարհաժողովը Նդպար լեռան լանջին, Արարաշատում, Վաղարշապատում թե մեկ այլ մայր քաղաքում, միշտ գումարվել է հայրենական կյանքի ամենամեծ անհրաժեշտությունների, վճռական որոշումների, շրջադարձային ժամանակների թելադրանքով: «Եղեւ աշխարհս.... միական, միաբան ինքնութեամբ», «իբրեւ զմի փուն երեւեցուցեալ միախոհ, միահաւար ճշմարտութեամբ», - ասում է Ազաթանգեղոսը պարմական այն մեծ ու հեղափոխիչ ժամանակի մասին, որի օրհնյալ պտուղները, իբրև հայոց մշակույթ, հայ հոգու և ոգու հաղթանակ, զարդարում ու փառավորում են մեր ժողովրդի անցած ուղին և կապում մեզ հավերժի հեփ: Այսօր, այո, հայ կյանքի վճռորոշ ժամանակներից մեկն է, երբ մենք պարասխան պիտի փանք ազգային մեր կյանքը հուզող, հրապրալ լուծումների կարող շարք հարցերի, որ պահանջում են մեր միացյալ կամքն ու ջանքերը: Եվ ի՞նչը պիտի խանգարի մեզ ունենալու այդ կամքը և դրսևորելու այն:

Ազապասեր Հայկով «միափոհմ և միալեզու», հավաքի մեր հայր Սուրբ Լուսավորչով մեկ ու միահավաք ազգս որդեգրել է նաև իր առաքելության

մեկությունը, որով դիմակայել է պարմության չարաղեր բոլոր շրջադարձերին: Այսպեղ հավաքվածներս դասագրքերով չէ միայն, որ գիտենք Հայաստանում ազգային պետականության կորստից հետո ավարառու ցեղերից հալածված մեր նախնաց, հայրենի հողից բռնությամբ քված բազմահազար գաղթականության ճանապարհների և հայկական գաղթօջախների մասին:

Մենք այդ ամենը գիտենք իբրև մեր ընդանիքների կենսագրություն, գիտենք իբրև բովանդակություն հայ գրականության ու արվեստի՝ լեցուն ավերի ու հալածանքի ողբերով, պանդխտության ու հայրենյաց կարոտի՝ «Կռունկ, ուստի՝ կուգաս, մեր Հայրենիքն խապրիկ մը չունի՛ս» երգերով, որ մեր մայրերը երգել ու այսօր էլ երգում են իրենց զավակների օրոցքի մոտ: Մենք հիշում ենք, որ մշեցի ենք, սասնեցի ու սեբաստացի, երզնկացի, կարինցի ու վանեցի: Մեր հիշողությունը հարյուրամյակներով հալածված, աստիճանական դարձած և կամ սեփական փան մեջ յաթաղանով սրարված մեր պապերի ու հայրերի արյուն-արցունքով, հառաչանքով ու քրտինքով է գրված: Մեր պարմությունը մեր սրտերում քանդակված-դաջված է նաև ազատագրական պայքարի ձգտումներով, սխարանքներով, հայրնի ու անհայր հազարավոր քաջերի, նահապետ հերոսների անուններով: Այն գրված է քանդված փունը վերակառուցելու, հայրենի ծուխը ծխալու, հայրենի մշակույթ ծաղկեցնելու հայրենասիրությամբ, որի առանցքում հայ հոգուց անջընջելի Արարաբն է՝ ժայռացած մեր ինքնությունը, խորհրդանիշը մեր Հայրենիքի ու արդար դատի, և Սուրբ Էջմիածինը՝ խորին խորհուրդը մեր լինելության:

Այս րեսիլքով, այս հավատով ու գիտակցությամբ հայկական գաղթօջախներում և «ողբի ու ուրբի», բայց նաև «հույսի ու լույսի երկիր» մեր Հայրենիքում մեր նախնիք շարունակեցին եկեղեցիներ կառուցել, դպրոց և մշակութային հասարակություններ բացել, գրքեր փապգրել, գիտություն ու արվեստ զարգացնել: Հեռավոր Հնդկաստանից մինչ Եվրոպա ու Ամերիկա շնչեց ու ապրեց հայ կյանքը, ծաղկեց հայ մարդու սրտեղծագործ փառանդը: Հայ լինելը միայն օգնեց մեր ժողովրդի զավակներին հարգված ու վստահելի անդամները դառնալու իրենց ընդունած երկրների, ազնվորեն ծառայելու իրենց նոր Հայրենիքների փրկեսությանն ու հասարակական կյանքին, իսկ հարկ եղած ժամանակ՝ հավաքարմորեն պաշտպանելու նրանց ազատությունը:

Հայ ենք մենք որպեղ էլ ապրենք, և այն ամենը, ինչ ունենք՝ փառանդ, կառողություններ ու շնորհք, բարոյական կերպվածք, ժառանգել ենք մայր մեր ժողովրդից: Այն ամենի համար, որով մեզ պիտի ճանաչեն իբրև «ազգ փառապանծ», պարտական ենք մեր հայրերի հավաքարմությանը հայրենի հողին ու մայրենի լեզվին և հայոց կեցուցիչ Սուրբ Եկեղեցուն: «Աստուած միշտ ու միաբան զամենայն գիտէ», -ասում է Դավիթ Անհաղթ փիլիսոփան: Աստված մեզ որպես հայ միաբանություն գիտի, Հայ Առաքելական Եկեղեցի, ում խնամել է ու շնորհագարդել և այսօր նոր դարի շեմին, հայոց անկախ պետականությամբ նոր կյանքով ու զարթոնքով ապրելու միջոցը պարգևել:

Այսօր Հայրենիքից սփռվող «խապրիկը» ազապությունն է, Հայաստանի անկախ Հանրապետության և ազապ Արցախի րասնամյա գոյության իրողությունը: Հայոց պետականության վերահասարարման մեր ուրախությունը, սակայն, սրվերվում է երկրում շարունակվող գործազրկությամբ, Հայրենիքից հարկադրյալ ու ինքնակամ արարագաղթով: Մի կողմից ճնշող կարիքը, մյուս կողմից այլազան չարաշահումները մարահոգիչ են իրենց երևից բերող անվսարահությամբ ու միմյանցից օրարացմամբ, և ակամայից թվում է, թե մեզ համար թանկ չէ մեր պետականությունը՝ հանուն որի վճարել ենք մեր զավակների արյամբ ու դիմացել այդքան գոողությունների: Ամենամեծ վրանգը, որ կարող է սպառնալ ազգին և հասարակությանը, բարոյական ուժերի կորուստն է: Արդիականության հոգեզուրկ ընթացքների ու մեր դժվարությունների առջև՝ Հայաստանում թե Սփյուռքում մենք առիթն ունենք անհանգստանալու հոգևոր-բարոյական արժեքների խաթարումից, քրիստոնեական-ազգային ոգու, գաղափարի ու րեսականի մթագնումից, երբ ճանապարհը դառնում է դեպի փակուղի առաջնորդող անձնակենտրոն պրույր:

Համաժողովի մասնակիցներիս պարզքն է այսօր Հայրենիքից դեպի աշխարհի բոլոր կողմերը հնչեցնել ի մի գալու, միաբանվելու հրավերը և խորհել, թե ինչպես միավորենք մեր ուժերը հանուն Հայրենիքի ապահովության, կայունության ու առաջընթացի, Արցախյան խնդրի կարգավորման ու Հայ դարի ճանաչման, ինչպես համագործակցենք, ինչպես գործնականում իրական դարձնենք այն ծրագրերն ու մրածումները, որ ունենք, որպեսզի Երկիր Հայրենին, րնրեսությամբ, գիտությամբ ու մշակությով գորեղ, առողջ ու կենսունակ հասարական կյանքով, քաջարի բանակով պաշարպանված, միշտ լինի փարոսը հայության և շեն ու գրկաբաց րունը հայրական, որպեսզի հայոց Սփյուռքում չլռի երբեք Մաշտոցի հզոր ու հավարաբույր լեզուն, որպեսզի ամենուր հայրենյաց ավանդները դառնան մեր զավակների օրինյալ ու երջանիկ կյանքի ակունքը:

Փառք Բարձրյալին, Սփյուռքը նոր օրհնություն դարձավ հայ կյանքին՝ հակառակ որ իբրև անեծք աշխարհացրիվ սփռեցին մեր ժողովրդին: Մեր ապագան Հայրենիքի և Սփյուռքի ներշաղախ ընթացքն է: Մենք մեկ առաքելություն ունենք ու մեկ ճանապարհ: Միասին պիտի րքենք, որ արագափոփոխ մեր ժամանակներում Հայրենիքն ու Սփյուռքը, հզոր, ազդեցիկ ու կենսունակ, նեցուկ լինեն միմյանց: Արդարև, ի՞նչն է պակասում մեզ. պարմության օրինակը, թե՛ դասը, երկիր շենացնելու ու մշակույթ զարգացնելու փո՛րձը, հոգու կորո՛վը, թե՛ մրքի թռիչքը:

Իբրև Ամենայն Հայոց Հայրապետ, ուզում ենք անդրադառնալ, որ մեր նոր կյանքի լայնահուն այս ճանապարհին Մենք րեսնում ենք Հայ Եկեղեցու որոշակի դերակարարությունը՝ անկախ եկեղեցական կյանքում իր ունեցած բոլոր դժվարություններից: Պետականության բացակայության ձիգ դարե-

րում Հայ Առաքելական Եկեղեցու ծայնն է միավորել մեր ժողովրդին: Հայ Եկեղեցին է համագգային այն կառույցը, որ իրականացնում է աշխարհասփյուռ հայոց կյանքի շաղկապման մեծ առաքելությունը: Այսօր ազգ ու Հայոց Եկեղեցի մեկությունը պիտի գորանա Հայոց պետություն միությանմբ:

Օրը եկել է, բարին՝ հեպը: Աշխարհաժողով է հայոց: Ազգահավաք է Ծիծեռնակաբերդի բարձունքում, ուր հառնում է Եղեռնի մեր նահապակաների հիշարակը ոգեկոչող կոթողը, որը ամփոփում է նաև հայոց նահանգների և Հայաստան-Սփյուռք միասնության խորհուրդը: Այսօր պիտի լինենք իբրև մի րուն, միական ու միախոհ, միմյանց մրցակից միայն հայրենասիրության դաշրում: Հայրենասիրությունը պարտք է, այլ՝ մարդու բնական հարկություն, մարդկային էություն, մարդկային երջանկություն: Հայրենասիրությունը շնորհ է, քանզի կարող է լինել, երբ մեր հոգում կա Աստված, Հայրենիք ու Հայրենյաց սրբություններ: Փառք Բարձրյալին, այդ մեծ ժառանգության րերն ենք մենք: Արդ, Աստծո առաջ, մեր անցյալի ու գալիքի առաջ արդար լինենք մեր ներկայով:

Օրը եկել է, բարին՝ հեպը: Թող ազգս հայոց՝ ի սփյուռս աշխարհի մեկ ու միասնական հայրենի պետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու շուրջ, հավաարա իր նոր կյանքի փառքը բացող արշալույսին:

«Տէր, կնցո Դու գհայս եւ ալրա զնոսա պայծառս. ամէն»:



ԳԵՂՈՒԿԻ ԵՄՈՒ ՇԿԱՐԻՈՒՄՈՒՄ ԴՐՈՒՄԻՆԻՍՏԻՆԻ
ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳԵՂՈՒԿԻ ԼՈՒՍՈՒՄՈՒԹՅՈՒՆԻ ՄԱՅՐ ԵՆՆԵՆԻՍԻ

ՀԱՅԿԱՆԻՍՏԱՆԻ
ԵՐԵՎԱՆԻ
Ս. ԳԵՂՈՒԿԻ
ԼՈՒՍՈՒՄՈՒԹՅՈՒՆԻ
ՄԱՅՐ ԵՆՆԵՆԻՍԻ

ՀԱՅԹԿԱՆՈՒՄԻ ԱՊՈՍՏՈՂՈՍԻԿ ԻՐԱՎԵՆԵՐՈՒՄՆԵՐԻ ՍԿԵՆԱԿ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈՋԸ՝
ԽՈՍՎԱԾ ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՄԱՎՈՐԻՉ

ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(26 մայիսի 2002 թ.)

*«Նախանձ տան քո կերիցէ զիս»:
(Հովհ. Բ 17)*

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի աշխարհասփյուռ զավակներ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու.

Տիրավանդ այս խոսքի ոգին է համախմբել մեզ Հայրենիքում և Սուրբ Պատարագի արարողությամբ մեկտեղել սրբազան աղոթքի:

Ուրախ սրտով և եղբայրական սիրով Մենք ողջունում ենք Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, որ «Հայաստան - Սփյուռք» համաժողովի առիթով եկել է Հայրենիք և այսօր Երևանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ նորակառույց Մայր եկեղեցում մատուցում է Սրբազան Պատարագ՝ հանուն շինության ու պայծառության ազգիս ու Եկեղեցուս, հանուն անսասանության Հայոց երկրի ու պետականության:

Հավաքի մեր հայր Սուրբ Գրիգոր Լուսավորչի նշխարների առջև կանգնած՝ ողջունում և սիրո ու միասնության նվիրական պատգամն ու օրհնությունն ենք բերում այսպեղ ներկա աշխարհական ու հոգևորական Մեր զավակներին և ի սփյուռս աշխարհի համայն մեր ժողովրդին, որի լավատեսական հայացքը այս օրերին ուղղվել է դեպի Երևան, ուր կարողա՞հայաց Արարարի դիմաց, Ծիծեռնակաբերդի բարձունքում գումարվելու է համահայկական խորհրդաժողովը:

Հայրապետական օրհնությամբ ու գնահատանքով ողջունում ենք պետական այրերին, ինչպես նաև՝ Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներին:

Սիրելի բարեպաշտ հայորդիներ.

Մայիսի 26-ը առանձնակի լույսով է բացվում հայության կյանքում, բացվում է Ավարայրի լուսե պսակով, առ Փրկիչը ու առ հայրենի սրբությունները հավատարմության անշեջ ջերմությամբ, «մահն իմացեալ»-ի հավերժական խորհրդով, որ ամեն հայի հոգում 1551 տարի գրում և օրհնում է Վարդանը Կարմիր: Բացվում է Մարդարապարի, Ապարանի ու Վանաձորի հերոսամարտերի պանծալի փառքով, որ հյուսեցին մահապարտի հանդերձն առած

հայ քաջորդիք, եղեռնահար մեր ժողովուրդը՝ պաշտպանելով Սուրբ Էջմիածինն ու Երևանը, որպեսզի հնարավոր դառնար Հայաստանի Հանրապետության հիմնադրումը:

Մայիս 26-յան առավոտն այսօր Հայոց երկնքում բացվել է նաև հուսառափության նոր ճառագումով: Աշխարհի բոլոր կողմերից, Հայաստանի ու Արցախի մարզերից դուր, սիրելիներ, հայրենյաց սերը ձեր սրտերում, եկել եք Երևան՝ մասնակցելու խորհրդածողովի աշխատանքներին: Հայրենիքը այս անգամ կողք-կողքի է բերել մեզ հայոց նոր կյանքի վերաշինության լայն ճանապարհի սկիզբը դնելու առաքելությամբ: Եվ ինչպես Ավարայրի ճակատամարտից առաջ հայոց բանակը, այսօր մենք՝ Անմահ Պատարագի սրբախոս աղոթքով, Սուրբ Գրիգոր Լուսավորչի բարեխոսության հայցումով հավաքվել և ուխտի ենք կանգնած Աստծո ու մեր նախնյաց առջև Երևանի Մայր եկեղեցու նորած կամարների ներքո: Արդարև, այսպիսի սրբազան մի օրվա համար է արևմտահայ մեծանուն բանաստեղծ, հայրենյաց սիրո ու ազատության երգիչ Շահագիզն ասել.

Այնպե՛ղ սուրբ կրօն, ազգ միաբան,

Ազար կամքով ու խղճով,

Այնպե՛ղ Վարդան, անմահ Վարդան

Իր խնկելի քաջերով:

Այսպե՛ղ են մեր հավաքի ու Հայրենիքի համար դարերով ընկած, հայրենի մեր ժառանգության համար դարերով Կրթնած մեր սուրբ նախնիները և Վարդանի շուրթերով այսօր կոչում են մեզ՝ «միայն թե մեր արիությանն ու քաջությանը վստայություն չհառնենք»:

Սիրելի բարեպաշտ հայորդիներ, պակաս քաջություն, նվիրում ու զոհողություն չպիտի պահանջվի այսօր մեզանից Հայաստանի ու Արցախի շինության ու հզորացման, Սփյուռքում հայ կյանքի զորացման ծառայության մեջ: Հիշենք վերստին և ամրագրենք մեր հոգում, որ հավաքն է մեր ծառայության՝ մեր զինվորության գլխավոր գեները, և միասնությունը՝ նրա ուժը: Աստվածապավինությունից և առ Տերը հավաքից են բխում մեր հույսն ու վստահությունը ապագայի հանդեպ, մեր սերը միմյանց, մեր Եկեղեցու ու Հայրենիքի հանդեպ, որով մեզ համար սիրելի ու հեշտ են դառնում նաև մեր պարտականությունները:

Հավաքով ու սիրով զոգված միասնությունից են ծնունդ առել մեր բոլոր հաղթանակները, նաև՝ Հայոց Մեծ Դարձի 1700-ամյակի խորհրդանիշ այս սուրբ եկեղեցին, որ կառուցված է հայաստանաբնակ ու Սփյուռքի հայորդյաց միասնական կամքով ու ջանքերով՝ իբրև վկայություն մեր ժողովրդի նորոգ հավաքի իր խաղաղ ու միացյալ կյանքի շինության ճանապարհին, որը շարունակությունն է մեր բոլոր Ավարայրների ու Սարդարապատների, Արցախի ազատամարտի, Հայաստանի անկախության վերահաստատման:

Վաղը կապարելու ենք հանդիսավոր բացումը «Հայաստան-Սփյուռք» համաժողովի: Սուրբ Գրիգոր Լուսավորչի նշխարների առջև այսօր հասարակունք մեր ուխտը «Նախանձ փան քո կերիցե զիս» վճռականությամբ, որպեսզի գորացած՝ հավարի ու միասնության մեր սուրբ ուխտը իր նոր մարմնավորումները գտնի մեր ծրագրերում ու գործերում:

Մենք հայրաբար օրհնում ենք «Հայաստան-Սփյուռք» երկրորդ համաժողովի գումարման նախաձեռնությունը՝ հավատով, որ այն դառնալու է կարելիոր հանգրվան հայոց համագգային միաբանության ու ներշաղախ կյանքի:

Հայրենապաշտության լույսով փառագարդ այս օրը հայրենակերպումի իղձով ու հայցով միախառնենք մեր աղոթքները «վասն հաւաքոյ, վասն հայրենեաց» մեր հողում հնչած բոլոր աղոթքներին և մայիս 26-ի ոգեղեն խորհրդով հավաքարմության ու միասնության նոր պարգամն առնենք: Հայցենք Բարձրալից, որ հեղի մեր մեջ ճշմարտության Իր Սուրբ Հոգին, որպեսզի մեր ներսից կենդանի ջրերի գետերը բխեն և, ակունքվելով մեր նորոգ հավաքից և ուժականություն առնելով մեր միասնությունից, ոռոգեն հայոց նոր կյանքի բոլոր անդաստանները:

Թող «Հայաստան-Սփյուռք» համաժողովը «Նախանձ փան քո կերիցե զիս» ոգով, կյանք իմացյալի գաղափարականով նոր լույսեր հավելի մայիսյան հաղթանակների խորհրդին:

Թող Աստուծո Արդար Աջը պահապան լինի մեր Հայրենիքին, մեր Սուրբ Եկեղեցուն և ժողովրդին:

Սիրով հրավիրում ենք շնորհագարդ մեր եղբորը՝ Արամ Ա Կաթողիկոսին, իր պարգամը փալու ու մաղթանքը փոխանցելու ուխտանորոգ մեր աղոթքի առիթով:

«Շնորհք Աստուծոյ եղիցի ընդ մեզ այսօր ևս միշտ. ամէն»:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈԶՐ՝
ԽՈՍՎԱԾ ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ
 (26 մայիսի 2002 թ.)

«Տէր պահէ զպոսնն հայրենի»:

«Յանուն Տօր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ. ամեն»:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իր ողջ գոյության ընթացքին, իր կյանքում ու առաքելության մեջ, ոչ միայն հիշեց Հայրենիքը, այլև աղոթեց Հայրենիքի համար, աղոթեց, որպեսզի Հայրենի այս րունը նվիրական, մնա անսասան, մնա պայծառ: Մեր Եկեղեցին աղոթեց՝ ըսելով. «Ազգապոթին եղբարց մերոց գերելոց», մեր Եկեղեցին աղոթեց, որ Հայրենիքը մնա ազապ ու անկախ: Եվ այսօր հոգեկան անհուն ուրախություն է ինձի համար, որ ազապության ոգիով ու րեսիլքով օծուն այս մթնոլորտի մեջ Սուրբ և Ամնահ Պապարագ կմապուցանեմ Երևանի նորած այս Մայր եկեղեցվո մեջ, որպեսզի անգամ մը ևս, քիչ հեւո կապարվելիք Հանրապետական մաղթանքին ընդմեջեն, մենք բոլորս վերահասարպենք մեր հավաքական ուխտը՝ զորեղ, հասարապ, անվթար պահելու Հայրենիքն իր ազապությանը ու իր անկախությանը: Հեւրաբար, ես կուզեմ իմ եղբայրական սերն ու գնահապությունը հայրնել իմ հոգևոր եղբայր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Սրբազնագոյն Կաթողիկոսին, որ եղբայրական ոգիով զիս հրավիրեց այսօրեղ Սրբազան Պապարագին ընդմեջեն աղոթակից ըլլալու Իրեն, մեր եպիսկոպոսական ու հոգևոր դասուն և մեր ժողովուրդին:

Այո, մեր Եկեղեցին ազապության համար աղոթեց, մեր Եկեղեցին ազապության համար պայքարեցավ, որովհեւր կարելի չէ Հայրենիք կերպել ու Հայրենիք ունենալ առանց ազապության, որովհեւր կարելի չէ հասկնալ պապմությունը հայոց առանց մեր ժողովուրդի մնայուն ձգպումի, մնայուն պայքարի ի խնդիր ազապության ու անկախության: Երբ նայինք Հայոց պապմության, կրեսնենք, որ Հայկը «ո՛չ» ըսավ Բելին, որովհեւր ուզեց ազապ ըլլալ, Գրիգոր Լուսավորիչ Խոր Վիրապ իջավ, որովհեւր րեսավ ու հավապաց, թե քրիստոնեական հավապը ազապության ու անկախության հավապը է:

Մեր թարգմանչաց սերունդը մշակույթ սրելծեց, «Այր, Բեն, Գիմ» սրելծեց, որովհեւր ուզեց, որ իր ժողովուրդն ազապ ըլլա իր հոգեմապվոր կենսագործունեությամբ, իր մշակութային ինքնությամբ: Վարդան ու Ղևոնդ

միասնաբար «ոչ» ըսին, որովհետև ուզեցին, որ մեր հավատքն ու Հայրենիքը միշտ մնա անկախ ու ազատ: Եվ այսպես, սիրելիներ, մեր պատմության բովանդակ ընթացքին՝ Վարդանանց պատերազմից մինչև Սարդարապատ, մինչև 1918 մայիս 28, հայ ժողովուրդը աղոթեց, երգեց, փազնապեցավ, հավածվեցավ ու իր արյունը թափեց իր Հայրենիքի ազատության համար:

1918-են հետո ևս մեր ժողովուրդը Հայաստանին մեջ, ամենապիստ օրերուն մեր պատմության, ամենեն խեղճ պայմաններուն մեջ ազատության երազը միշտ վառ պահեց իր հոգիի մեջ: Սփյուռքին մեջ և Հայրենքին մեջ մեր ժողովուրդը փարբեր եղանակներով, փարբեր ձևերով, փարբեր հանգրվաններով միշտ նայեցավ ազատության արևին ու պայքարեցավ ազատության համար: Տակավին փաստամյակ մը առաջ մենք այս երկրին մեջ, այս սրբազան հողին վրա վերակերպեցինք ազատությունը մեր Հայրենիքին: Եվ Հայրենյաց հողեն անբաժան, Հայաստանին մեջ մենք վերահաստատեցինք ազատությունը հայոց: Այո, դուրին չէ ազատություն կերպել, դուրին չէ ազատության համար պայքարիլ. մեր ժողովուրդը արյուն թափեց, որպեսզի ազատ-անկախ Հայրենիք ունենա: Ղարաբաղի մեր ժողովուրդը արյուն թափեց, որպեսզի Ղարաբաղն ըլլա ազատ ու անկախ: Եվ այսօր, փառք Աստուծո, մենք նորից ունինք անկախ Հայրենիք, մենք ունինք անկախ Ղարաբաղ: Ահա թե ինչու մեր Եկեղեցվո այս պարզ ու խորունկ աղոթքը այսօր անգամ մը ևս կինչե մեր ականջներուն դիմաց: Եկե՛ք այդ աղոթքը ուխտի վերածենք՝ ըսելով. «Տեր, պահե քոնը այս նվիրական, Տեր, պահե մեր Հայրենիքը ազատ ու անկախ, մեր Հայրենիքը միակամ իր ժողովուրդով և իր բոլոր կառույցներով»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, մեր Հայրենիքի ազատության պայքարի մեջ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ունեցավ իր վճռագործ աջակցությունը, իր կենսական դերակատարությունը: Կարելի չէ ըմբռնել պատմությունը հայոց առանց Հայ Եկեղեցվո: Կարելի չէ հասկնալ թե՛ պատմության մեծ իրադրությունները՝ հոգևոր, մտավոր, մշակութային, ազգային, և թե՛ նույնիսկ քաղաքական՝ առանց Հայ Եկեղեցվո:

Հայ Եկեղեցին իրական ներկայություն դարձավ իր ազգային դերակատարությամբ մեր ժողովուրդի ազգային պատմության մեջ. թագավորը իր կողքին ունեցավ կաթողիկոսը, իշխանը իր կողքին ունեցավ եպիսկոպոսը: Այսպես Ս. Եկեղեցին և իշխանությունը միասնաբար պայքարեցան Հայրենիքի ազատության համար. Տրդատ, Լուսավորիչ, Վարդան ու Ղևոնդ Երեց այն փիպար օրինակներն են, որոնք ցույց կուտան մեզի. թե Հայրենիքի հզորության, անսասանության մեջ Եկեղեցին ունեցած է և պետք է ունենա այսօր իր վճռական դերակատարությունը:

Այո, Հայ Եկեղեցին պետական Եկեղեցի չէ, սակայն Հայ Եկեղեցին ազգային Եկեղեցի է, մեր ազգին Եկեղեցին է, մեր ազգին բոլոր զավակները մեր Եկեղեցու կյանքին մեջ փեղ ու դեր ունին: Մեր Եկեղեցին մեր ազգը իր ամ-

բողջության մեջ կներառե իր կյանքին և առաքելության շուրջ: Ներկաբար այսօր, առավել քան երբեք, մենք Հայրենիքին հետ ենք, մենք Հայաստանի պետության հետ ենք:

Ամեն անգամ, երբ իմ հոգևոր եղբայրը՝ Գարեգին Վեհափառը, Իր արարահայություններում մեջ կըսե, թե նեցուկ կկանգնի Հայաստանի պետության, մենք ևս Անթիլիանի մեջ երբեմն մեր հայտարարությամբ կամ այլապես նույնը կկրենք՝ մենք Հայաստանի Հանրապետության հետ ենք, մենք Հայաստանի պետության հզորացման հետ ենք, որովհետև այս Հայրենիքը մենք պետք է պահենք, մենք պետք է զորացնենք:

Մեր պապերը իրենց արյունը թափեցին Հայրենիքի ազատության ու անկախության համար: Այսօր մեզմե կսպասվի, որ մենք մեր քրտինքը թափենք, մեր մասնակցությունը բերենք Հայաստանի հզորացման նվիրական առաքելության: Ես վստահ եմ, որ ինչպես քիչ առաջ Վեհափառը ըսավ՝ «Հայաստան-Սփյուռք» երկրորդ խորհրդաժողովում այս գիտակցությամբ, այս հանձնառությամբ, այս տեսիլքով, Հայրենիքի հզորության, անասանության, պայծառության տեսիլքով պիտի մրաժենք, պիտի որոշենք ու մանավանդ պիտի գործենք:

Մենք այլևս պետք է հեռու մնանք մեր խոսքերեն, մեր մրաժումներեն, որքան ալ գեղեցիկ ըլլան անոնք, մեզի համար մեր պարմության այս հանգրվանին կենսականը գործն է, գործն է, ինչպես ըսած է հայրենի մեծ բանաստեղծ Նովիաննես Թումանյան. «Գործն է անմահ, լավ իմացեք, որ ապրում է դարեդար»: Հայրենիքը պիտի ապրի դարեդար մեր ծառայությամբ, մեր հանձնառությամբ, մեր աղոթքով և մեր հավատքով ու մեր գործերով: Ներկաբար, եկեք, սիրելիներ, երկու Վեհափառ Հայրապետներու ներկայությամբ, մեր հոգևոր դասու ներկայությամբ վերանորոգենք մեր ուխտը սրբազան՝ հավատարիմ մնալու մեր Հայրենիքին, ուր որ ալ ըլլանք, ինչ պայմաններու մեջ ալ ապրինք, հավատարիմ մնալու մեր Հայրենիքին ու հզորացնելու մեր Հայրենիքը այսօր, վաղը և միշտ:

Այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն:



**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ
ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ
Տ. ԽԱԺԱԿ ԱՐՔԵՂԻՍԿՈՂՈՍ ՊԱՐՍԱՄՅԱՆԻՆ՝
ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՎԵՐԸՆՏՐՎԵԼՈՒ ԱՌԻՈՎ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ ՍԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՍՊԱՍԱԴՈՐՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՇՆԻ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԽԱԺԱԿ ԱՐՔԵՂԻՍԿՈՂՈՍ ՊԱՐՍԱՄՅԱՆ,
ՈՐ Ի ՆԻՒ ԵՈՐՔ, ԱՄՆ**

Գոհունակությամբ տրեղեկացանք ԱՄՆ հայոց Արեւելեան թեմական պատգա-
մաւորական ժողովի վարչութեան մայիս 4 գրութիւնից, որ Դուք վերընտրուել էք
ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի առաջնորդ՝ ըստ արժանեաց վայելելով բարձր գնահա-
տանքը Տիրախնամ Ձեր թեմի հաւաքաւոր Մեր զաւակաց:

Սիրելի Սրբազան,

Ծանօթ ենք եկեղեցաշէն եւ հայրենանուէր Ձեր գործունէութեանը, որի առանցքը
եղել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Հաւաքարիմ Վազգէն Ա Երջանկայիշապակ
Հայրապետի «Սիրեցէք Սուրբ Էջմիածինը, Էջմիածինն է հայութեան միաւորող հզօր
շաղկապը՝ Սրբալոյս իր Միտունով» պատգամին, Դուք, որպէս հարազատ զաւակը
Մայրականքիս, ազնիւ նախանձախնդրութեամբ Ձեր մեծարժէք ներդրումն էք բերել
Մայր Աթոռիս հեղինակութեան բարձրացման սրբազան գործին:

Մեր բարձր գնահատանքը յաւելելով ամերիկահայոց՝ Ձեր հանդէպ տածած յար-
գանքին ու սիրոյն, եւ ընդառաջ հաւաքաւոր հայորդեաց, որ ի Միացեալ Նահանգս,

Հայրապետական այսու գրով յղում ենք Ձեզ Մեր օրհնութիւնը եւ վաերացնում Ձեր ընտրութիւնը, որպէս առաջնորդի ԱՄՆ հայոց Արեւելեան թեմի:

Աղօթում ենք առ Բարին Աստուած, որպէսզի Տէրն Ամենակալ պարգեւի Ձեզ «յամայն ամս ուղիղ վարդապետութեամբ եւ անարատ վարուք» առաջնորդել մեր ժողովրդին իր բարի երազների լուսեղէն հանգրուանները:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեսնեմք Յիսուսի Քրիստոսի եղիցիւն ընդ Ձեզ եւ ընդ ամենեւեանդ. Ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 7-ն Մայիսի
յամի Տեսնեմք 2002 եւ ի թուին Հայոց ՌՆԾ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 262

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿԱՆ ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԲԵԴԵՎԱՅԱՆՆԵՐԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ
ԱՌ ՍԻՐԵՅՑԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՆԱՐԱԶԱՏ ԶԱՄԱԿՍ
ՄԱՅՐ ԱԹՈՈՒՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ
ՍԱՐԳԻՍ ԵՒ ՌՈՒԹ ԲԵԴԵԲԵԱՆ,
ՈՐ Ի ՆԻՒ ԶԵՐՄԻ, ԱՄՆ**

Համայն հայության Սրբոթին Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր ողջոյնն ու օրհնութիւնն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Մայր Եկեղեցու եւ բարեպաշտ ժողովրդի արժանատր զաւակացոյ:

Սիրելի Տէր եւ Տիկին Բեդեւեաններ,

Անձնապէս ճանաչելով Ձեզ եւ փարիներ շարունակ ականապետ դառնալով հաւաքոյ Ձեր բարի գործերին, Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ գոհութիւն ու փառք ենք մատուցում առ Աստուած, որ ազգս հայոց օրհնուած է Ձեզ պէս բարեգործ զաւակներով, ովքեր հաւաքարիւմ մեր նախնեաց սուրբ աւանդներին, առաջնային նպատակ են համարում Հայրենիքին, Մայր Եկեղեցուն ու հարազատ ժողովրդին ծառայութիւն մատուցելը:

Սիրելի Տէր եւ Տիկին Բեդեւեաններ, աստուածահաճոյ Ձեր իրագործումները բարի համբաւ են բերում Բեդեւեան ընտանիքին եւ պարիւ՝ համայն մեր ժողովրդին: Տարիներ առաջ Դուք առաջիններից մէկը անսացիք Մեր կոչին եւ ամենայն սիրով ու պարտաստականութեամբ Ձեր նիւթական աջակցութիւնը բերեցիք Սեւանի Վազգէնեան Հոգետր Դպրանոցին՝ նպաստելով կրթօջախի կայացմանը: Բարեյիշարակ Հայրապետի անունը կրող հոգետր դպրանոցը ժողովրդի հովիւ ու ծառայ կրթելու կոչմամբ ու առաքելութեամբ այսօր արդեն առաջ քաշուած ենք է մատուցում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն ու հաւաքատր ժողովրդին:

Մեծապէս ուրախ ենք, որ ի յաւելումն Ձեր բազում եկեղեցաշէն գործերի, Դուք անկեղծ սիրով ու իշխանական ոգով ստանձնեցիք նաեւ անկախ մեր Հայրենիքի Վանաձոր քաղաքում Եկեղեցական համալիրի կառուցման հովանաւորութիւնը՝ նպաստելով հայրենի մեր երկրի հիւսիսային շրջաններում հայորդեաց հոգետր վերագարթոնքին: Սրբավայրի լուսատր ու աղօթաբոյր հարկի ներքոյ բարեպաշտ հաւաքացեալները դարեր շարունակ պիտի փառաբանեն Բարձրեալ Տիրոջը, զօրա-

նան հաւաքով ու ազգային մեր արժէքներով՝ իրենց աղօթքներում մշտապէս երախտագիտութեամբ յիշելով եւ Աստուծոյ օրհնութիւնը հայցելով Ձեզ եւ Բեղեւեան ընտանիքին:

Ի գնահատումն Մայր Եկեղեցուն եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին զօրակցելու Ձեր ազնիւ պատրաստակամութեան եւ արդէն իսկ բերած բազում ծառայութեանց, յղում ենք Ձեզ Մեր սէրն ու բարեմաղթանքները եւ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԶ

պարտոյ բարձրագոյն շքանշանը:

Վստահ ենք, որ հայրենապաշտ ոգով ու եկեղեցաւուր գործերով պիտի շարունակէք Ձեր ծառայութիւնը Տիրախնամ մեր Եկեղեցուն եւ հաւատարմոր ժողովրդին:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն է, որ Ամենախնամն Աստուած Իր Աջի հովանու ներքոյ պահի ու պահպանի Ձեզ՝ պարգեւելով քաջառողջ երկար կեանք, գործոց յարաւորոգ յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ եւ ամենեւեակն ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա Կոնդակս ի 22-ն Մայիսի

Յամի Տեառն 2002 եւ ի թուին Հայոց ՌՆԾԱ

ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

ընդ համարաւ 88

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿՏ ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԶԵՍՈՒՐՅԱՆՆԵՐԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**


**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ ՄԻՐԵՅՑԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՍ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ
ՄԵԾԱՐԳՈՅ ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ
ՆՈՒՐԱՐ ԵՒ ԱՆԻՏԱ ԶԵՍՈՒՐԵԱՆՆԵՐ,
ՈՐ Ի ՆԻՒ ԶԵՐՄԻ, ԱՄՆ**

Համազգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր ողջոյնն ու օրհնութիւնն ենք յղում Ձեզ եւ վերստին խնդագին գոհունակութեամբ անդրադառնում Ձեր եկեղեցաշէն ու ազգօգուտ գործունէութեանը:

Միրելի Տէր եւ Տիկին Զեսութեաններ, անձնապէս ծանօթ ենք հաւաքատուր Ձեր ընտանիքին եւ հոգու առանձնակի բերկրանքով յաղորդ Ձեր աստուածահաճոյ գործերին: Արդարեւ երանեալ էք Դուք եւ շնորհ ունէք Ամենախնամ Աստուծոյ, Ով զօրացնում է Ձեզ եւ Ձեր կեանքը լցնում եկեղեցուն, հայրենիքին ու հարազատ ժողովրդին մատուցած ծառայութեան երջանկութեամբ:

Աստուծոյ օրհնութեամբ Դուք տասնամեակներ շարունակ հոգեւոր ու նիւթական Ձեր կարողութիւնները սիրառատ ոգով ծառայեցնում էք հայրենական ու եկեղեցական մեր կեանքի շինութեանն ու զօրացմանը, սրբազան մեր արժէքների անխաթար պահպանմանն ու զարգացմանը: Ձեր գործերը, ծնունդ առած առ Աստուած հաւատով եւ առ հարազատ ժողովուրդը անկեղծատուր սիրով, բարի անուն ու ճանաչում են բերում Ձեզ ինչպէս Սփիւքում, այնպէս եւ Մայր Հայրենիքում:

Ձեր կեանքի տարիները համընկան հայրենի մեր երկրի անկախութեան վերահաստատմանը եւ հայրենաբնակ մեր ժողովրդի հոգեւոր վերազարթոնքին: Միրելի Տէր եւ Տիկին Զեսութեաններ, Դուք անփոխարինելի նպաստ բերեցիք եւ շարունակում էք բերել Սեւանի Վազգէնեան Հոգեւոր Դպրանոցին՝ հիմնադրման օրից առաւելեռ նուիրատուութիւններով աջակցելով նրա կայացմանն ու զօրացմանը: Այսօր կրթօջախի հինգ սերունդ շրջանաւարտները Հայաստանում եւ արտերկրում սպասատրում են բարեպաշտ ու հաւաքատուր մեր ժողովրդին, հաստատութեան լուսատու հարկի ներքոյ ասելի քան հիստուն երկրասարդներ շարունակում են իրենց հոգեւոր կրթութիւնը: Նրանք բոլորն էլ աղօթքով ու երանաբազկութեամբ են յիշում Ձեզ,



գնահատում ի նպաստ իրենց հոգեւոր կրթութեանն ու դաստիարակութեանը բերած Ձեր աջակցութիւնը, որը լաւագոյն վկայութիւնն ու վարձարութիւնն է Ձեր անսակարկ նուիրումի:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնը եւ Ձեր ծառայութեանց ու վաստակի ամենաբարձր գնահատանքով շնորհում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պարտոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով բարեմաղթում ենք, որ Երկնատր Տէրը Սուրբ Գրիգոր Լուսատրցի բարեխօսութեամբ Իր Հայրական հովանու ներքոյ պահի ու պահպանի Ձեզ, Ձեր ազնիւ Տիկնոջը եւ զաւակաց՝ պարգեւելով քաջառողջ ու երջանիկ կեանք եւ յարանորոգ յաջողութիւններ ազգանուէր Ձեր բոլոր իրագործումներում:

«Ողջ լնդութ ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւեր օրհնեալ ի Մենք. ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

Տուալ Կոնդակս ի 22-ն Մայիսի

յամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ

ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի

ընդ համարաւ 89

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԴԱԿՐ ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՓԻՆԵՃՅԱՆՆԵՐԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ**

**ԱՌ ՍԻՐԵՅԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԲԱԿՍ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱՇՆԻ
ՄԵԾԱՐԳՈՑ ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ
ՉԱՐԼԶ ԵՒ ԳՌԵՅՍ ՓԻՆԵՃԵԱՆ,
ՈՐ Ի ՆԻՒ ԶԵՐՄԻ, ԱՄՆ**

Համագգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր ողջոյնն ու օրհնութիւնն ենք յղում Ձեզ եւ վերսփին խնդագին գոհունակութեամբ անդրադառնում Ձեր եկեղեցաշէն ու ազգօգուտ գործունէութեանը:

Սիրելի Տէր եւ Տիկին Փինեճեաններ.

Տիրոջ կամքով աւելի քան փասը փարիներ ուրախ առիթ ենք ունեցել անձնապէս ճանաչելու Ձեզ, հաղորդ դառնալու բազում փարիների Ձեր եկեղեցանապաստ արգասատր գործունէութեանը եւ անկեղծ սիրուն ու հաւաքարմութեանը՝ հանդէպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին:

Բարձրեալի օրհնութեամբ Դուք նախանձախնդիր ոգով ու անխոնջ նուիրումով արդիւնաշատ մասնակցութիւն էք բերում ԱՄՆ Արեւելեան թեմի Սրբոց Ղեւոնդեանց եկեղեցու համայնքային կեանքին: Միացեալ Նահանգներ Մեր բազմաթիւ այցելութիւնների ընթացքին ուրախութեամբ ականատես ենք եղել, թէ որքան հեղինակութիւն եւ յարգանք էք վայելում բարեպաշտ հայորդեաց շրջանում:

Առանձնակի գոհունակութեամբ ենք անդրադառնում Մայր Հայրենիքում Ձեր իրագործած նախաձեռնութիւններին, ի մասնաւորի Արարապետան Հայրապետական թեմի կողմից Սեւանի գեղապետիլ թերակղզում հիմնադրուած Մեզ համար անչափ թանկ ու հոգեհարազատ Վազգէնեան Հոգետր Դպրանոցին մատուցած Ձեր ծառայութիւններին: Հայրենի մեր երկրի անկախութեան դժուարին փարիների հոգետր կրթօջախը կեանքի կոչուեց շնորհիւ Ձեզ պէս նուիրեալ հայորդեաց իշխանական

նուիրապտութեանց՝ մեծագոյն խթան դառնալով խորհրդային փարիսերից յետոյ զօրացնելու Մայր Եկեղեցին եւ վերադարձնելու մեր ժողովրդի հոգեւոր կեանքը:

Միրելիներ, արդարեւ, Ձեր հաւաքը, սերն ու նուիրումը առ Աստուած, առ Հայրենիք ու Մայր Եկեղեցի բազմարդիւն պողատորոտում են ի շահ ազգային-եկեղեցական մեր կեանքի շինութեան, եւ Ձեզ պէս հայորդեաց է ուղղուած անւարանական պատգամը՝ «Երանի այնոցիկ, որ լսեն զբանն Աստուծոյ եւ պահիցեն»:

Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից գոհունակ սրտով բերելով Ձեզ Մեր սերն ու բարեմաղթանքները, «բազում են վարձք Ձեր» խորին գնահատանքով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Մայր Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պապոյ բարձրագոյն շքանշանը:

Մեր ամենաջերմ աղօթքով Բարձրեալ Տիրոջ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ ի խորոց սրտի մաղթում, որ Բարին Աստուած հաւաքոյ մեր հայր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութեամբ մշտապէս առաջնորդի Ձեզ՝ պարգեւելով բաջառոյժ արեւշապութիւն եւ եկեղեցաշէն գործոց նորանոր յաջողութիւններ:

«Ողջ լերութ ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յսէր օրհնեալ ի Մենջ. ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 22-ն Մայիսի

յամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ

ի Մայրաւանս Սրբոյ Էջմիածնի

ընդ համարաւ 87

ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

2002 թվականի մայիս ամսվա ընթացքում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն
Հայոց Հայրապետի Կոնդակով

Օրինության գիր է փոփոխվել.

Վահան Վահանյան (ԱՄՆ Արևմտյան թեմ)

Պերճ Սեդրակյան (ԱՄՆ Արևելյան թեմ)

Արփիար Զանոյան (ԱՄՆ Արևմտյան թեմ)

Ռոբերտ Արելյան (ԱՄՆ Արևելյան թեմ)

Ժիրայր Դևրիշյան (Կանադահայոց թեմ)

Կանադահայոց թեմի Պապզամավորական ժողովին

Ավստրալիայի հայոց թեմի Պապզամավորական ժողովին

ՎԵՏԱՓԱՌ ՎՁՅՐԱԴԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶԸ ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ 10-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Շուշիի ազատագրման 10-րդ փարեղարձի առիթով, մայիսի 8-ին, նամակ է հղել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Արկադի Ղուկասյանին՝ իր օրհնությունն ու շնորհավորանքը հայտնելով ԼՂ նախագահին և ողջ արցախահայությանը: Հեռագրում ասվում է.

Մեծարգո Նախագահ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում և հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք հղում Ձեզ և հավատարմոր համայն արցախահայությանը՝ Շուշիի ազատագրման 10-րդ փարեղարձի առիթով:

Մեր ժողովրդի հազարամյա պատմությանը փառավոր նոր էջ հավելեց Շուշիի հերոսամարտը՝ շրջադարձային դառնալով Արցախի ազատագրության և հանուն հայրենի հողի, արդարության ու իրավունքի պաշտպանության հայոց նոր պարերազմում:

Աշխարհասփյուռ մեր ողջ ժողովրդի հեղ Մենք առանձնակի խնդրությամբ ենք տոնում Շուշիի ազատագրության տասնամյա հոբելյանը՝ աղոթքով հիշելով վասն հայրենյաց իրենց կյանքը նվիրած մեր փառապանծ ազատամարտիկներին, որ երկնքից այսօր ուրախակից են մեզ:

Մեծապես ուրախ ենք, որ Շուշիի հերոսամարտի տասներորդ փարեղարձն իր ազատությունը նվաճած Արցախ աշխարհը դիմավորում է նոր կյանքի կառուցման հաջողություններով և ապագայի հանդեպ վստահությամբ ու լավատեսությամբ: Այսօր առ Աստված մեր աղոթքն է, որ Տերն Իր հանապազ խնամքի և օրհնության ներքո անխորտակ պահի Հայոց արևելյան բերդամրոցը՝ առաքյալների քարոզության հեղեղը կրող սրբավայրերով և հերոսական իր ժողովրդով:

Թող Տերը պարգևի Ձեզ, հարգարժան պրն Ղուկասյան, և Ձեզ ծառայակից պետական այրերին քաջառողջություն և հայրենաշեն գործոց նորանոր հաջողություններ:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՎՁՅՈՑ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԾԱՂԵԿՊՄԱԿ ԴՐԵՑ ԱՆՀԱՅՑ ԶԻՆՎՈՐԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻՆ

Մայիսի 9-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդի գլխավորությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մի խումբ բարձրաստիճան հոգևորականներ ու միաբաններ ուղևորվեցին Երևանի Հաղթանակի զբոսայգի, որպեսզի հոգևորականների հանդիսավոր թափորը շարժվեց դեպի Անհայտ զինվորի գերեզման՝ ծաղկեպսակ ու ծաղիկներ դնելով Անհայտ զինվորի շիրմին:

Հաղթանակի այս հանդիսավոր փոնի առիթով Վեհափառ Հայրապետն ասաց.

Այսօր Երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիզմի դեմ պայքարած հաղթանակի օրն է: Բայց նաև ազգային մեր կյանքում նշանավոր օր է: Այսօր Արցախ աշխարհում մեր ժողովրդի զավակները փոխախմբում են Շուշիի ազատագրության օրը, որը նաև հռչակված է որպես երկրի պաշտպանության բանակի օր: Մենք այս առիթով մեր աղոթքն ենք բարձրացնում, որպեսզի երբեք աշխարհը և մարդկությունը չդիմադրեն պատերազմներ, ապրեն խաղաղության, սիրո համագործակցության մեջ, որպեսզի փառավորվի Տիրոջ անունը, և մարդիկ կարողանան իրենց արդար քրտինքի վաստակով երջանկանալ, ուրախանալ ու շենացնել իրենց կյանքն ու իրենց երկիրը: Մեր աղոթքն ու մաղթանքն է նաև, որ Աստծո զորավոր Աջո միշտ հովանավոր լինի հայոց բանակին, որը պաշտպանում է մեր երկրի սահմանները և Հայոց աշխարհի խաղաղությունը: Տիրոջ բարի հայացքը թող լինի մեզ հեղ, մեր ժողովրդի զավակների հեղ և պարզևի մեզ երջանիկ, խաղաղ կյանքի օրեր:

ՄԱՅՐ ԱԹՐՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՅԱՎ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ Ի ՀԻՇԱՏԱԿ ՄԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՄՆԵՐԻ

Մայիսի 22-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան հայրերի մասնակցությամբ Մայր Տաճարում, Իջման Ս. Մեղանի առջև, կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշարակ 1918 թ. Սարգարապարի ճակատամարտի հերոսների:

Պատմական այս ճակատամարտը շրջադարձային եղավ հայ ժողովրդի կյանքում՝ դնելով Հայաստանի առաջին Հանրապետության հիմքերը:

«Մենք հավատում ենք, որ հայ ժողովրդի հաղթանակների շարքը, որ իմաստ և բովանդակություն է հաղորդում հայ ժողովրդի անկախությանը, կշարունակվի նաև պայքարի ճամնանակներում», - արարողության ավարտին դիմելով ներկաներին, ասաց Ս. Շահե արքեպս. Աճեմյանը՝ հորդորելով շարունակել հայոց պայքարի հերոսների գործը եկեղեցաշինությամբ ու հայրենաշինությամբ:

Անուրանալի է Ս. Էջմիածնի և հոգևորականության դերը պայքարի ճամնանակում: Հուսահատ ու անելանելի թվացող իրավիճակում, երբ Հայաստանի ժամանակի պատասխանատուները հորդորում էին Ամենայն Հայոց Գևորգ Ե Կաթողիկոսին թողնել Մայր Աթոռն ու ավելի ապահով վայրեր մեկնել, Հայոց Հայրապետը, հակառակ այդ հորդորների, ռազմի կոչով եռանդ ու ոգի հաղորդեց հայ ժողովրդին: Ռազմի զինվորներ դարձած հոգևորականները Սարգարապարի դաշտում Ս. Խաչը ձեռքներին առաջնորդեցին մահապարտների գունդը՝ ապահովելով պայքարի հաղթանակը:

ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՆ
ՈՒ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ
ՈՂՋՈՒՆԵՑԻՆ «ՀԱՅՐԵՆԻՔ-ՍՓՅՈՒՌ»
ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ**

Կիրակի, մայիսի 26-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսը, որ Հայաստան է ժամանել «Հայաստան - Սփյուռք» երկրորդ համաժողովի առիթով, Երևանի նորակառույց Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում մատուցեց Ս. Պատարագ:

Ամենայն Հայոց Հայրապետն ու Կիլիկիո Կաթողիկոսը եկեղեցի մուտք գործեցին «Հրաշափառ»-ի երգեցողության ներքո:

Համաժողովի նախօրեին Հայոց և Կիլիկյան Աթոռի Հայրապետները հայ ժողովրդի Մայիսյան պատմական հաղթանակների խորհրդով իրենց ողջույնն ու պատգամը հղեցին աշխարհի քաղաքներ ծայրերից Հայաստան ժամանած համաժողովի մասնակիցներին՝ հորդորելով նրանց հավատքով ու միաբանությամբ լծվել հայրենիքի վերաշինության ու զորացման գործին:

Ամենայն Հայոց Հայրապետը, ողջունելով Արամ Ա Կաթողիկոսին, արարողությանը ներկա հավաքացյալ ժողովրդին, իր օրհնությունը փոխեց «Հայաստան-Սփյուռք» համաժողովին՝ համոզմամբ, որ «այն դառնալու է կարևոր հանգրվան հայոց համագգային միաբանության ու ներշնչալի կյանքի» (տե՛ս էջ 7):

Իր հերթին Արամ Ա Կաթողիկոսը, մատնանշելով, որ Հայ Առաքելական Եկեղեցին մշտապես աղոթել ու պայքարել է հայրենիքի ազատության ու անկախության համար, հավաստեց, որ Եկեղեցին շարունակելու է զորավիգ լինել հայրենիքին ու հայրենի պետությանը (տե՛ս էջ 10):

Սրբազան արարողության ընթացքում Գարեգին Բ և Արամ Ա Կաթողիկոսները կատարեցին Հանրապետական մաղթանք՝ հանուն հայրենիքի անսասանության:

**ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԵՐԿՕՐՅԱՆ ՆԻՍՏ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Մայիսի 29-30-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրիել Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ Կերպարային Հոգևոր Խորհրդի հերթական նիստը:

Երկօրյա նիստերի ընթացքում ԳՆԽ-ը քննարկեց մի շարք եկեղեցական ներքին հարցեր:

Ս. Էջմիածնի Մայր Տաճարը, որի օծումը կատարվել է 303 թվականին, եկող տարի բոլորում է իր 1700-ամյակը: Այս առիթով ԳՆԽ-ն առաջարկեց պարզաձև կերպով նախապարաստվել Մայր Տաճարի նավակալիքի հոբելյանին:

Անդրադառնալով Հայ Եկեղեցու կանոնադրության խնդրին, ԳՆԽ-ը անհրաժեշտ գտավ շարունակել կանոնադրության նախագծի լրամշակման աշխատանքները:

Կարևոր նկատվեց միաբանների պատրաստվածության և նրանց ուսումնառության հարցը: Տեղեկացվեց, որ ներկայումս 11 երիտասարդ միաբաններ շարունակում են հոգևոր կրթություն ստանալ արտերկրի փարբեր բարձրագույն կրթական հաստատություններում: Առաջիկայում նրանց կմիանան ևս 8 միաբաններ:

Ժողովի ընթացքում ԳՆԽ-ի անդամներն իրենց պալատությունները կիսեցին նաև մայիսի 27-28-ը Կերպարային Հոգևոր խորհրդի «Հայաստան-Սփյուռք» համահայկական երկրորդ համաժողովի վերաբերյալ բարձր գնահատելով համայն հայությանը միավորող ու Մայր Հայրենիքի զորացման ուղղված համաժողովի աշխատանքները:

Վեհափառ Հայրապետին նախապես տեղեկացրած լինելով, նիստի աշխատանքներին չէին կարողացել իրենց մասնակցությունը բերել ԳՆԽ-ի արենապետները՝ Երուսաղեմի և Կ. Պոլսի հայոց Պատրիարքները: Նիստը արենապետեցին ժողովին ներկա ԳՆԽ-ի ավագագույն անդամները՝ Տ. Զավեն արքեպս. Չինչիյանը և Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՇՔԱՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՀԱՆՁՆՈՒՄ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՒՄ

2002 թ. մայիսի 25-ին Մայր Աթոռի Վեհարանի հանդիսությունների դահլիճում Հայ Եկեղեցու բարձրագույն շքանշաններով պարգևատրվեցին Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի բազմերախտ հիմնադիր բարերարները: Նրանք առավոտյան Գառնիկ քին. Հալաջյանի ուղեկցությամբ այցելել էին Սևանա թերակղզի, տեսել իրենց նվիրատվության արդյունավորումը, շրջելով շահագործման շեմին հասած ննջարանային նոր համալիրում՝ հանդիպել սաների հետ՝ ողջույնի և երախտագիտության ջերմ խոսքեր լսելով նրանցից:

«Հրաշափառ»-ի հնչյունների ներքո մտնելով դահլիճ՝ Վեհափառ Հայրապետը Տերունական աղոթքով և «Զգործս ձեռաց մերոց» մաղթանքով բացեց հանդիսությունը, և Վազգենյան Դպրանոցի «Լուսավորիչ» երգչախմբի հնչեցրած «Էջ Միածինն ի Հօրէ» օրհներգի կատարման ժամանակ դահլիճ բերվեցին Հայրապետական սրբափառ կոնդակները, որոնք ընթերցեց Տ. Նավասարդ եպս. Կճոյանը:

Տեր և տիկին Սարգիս և Հռութ Բեդկյանները Հայրապետական կոնդակով պարգևատրվեցին «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով (տես էջ 15): Նրանց կյանքական աջակցությամբ է վերանորոգվում Վանաձորի առողջարաններից մեկը, և նախատեսվում է կառուցել մի եկեղեցի՝ Վանաձորում: Բեդկյաններն իրենց նպաստն են բերել նաև Մայր Աթոռին:

Տեր և տիկին Նուբար և Անիտա Զետուրյանները ևս արժանացան Հայ Եկեղեցու բարձրագույն շքանշանի (տես էջ 17): Տիար Նուբար Զետուրյանն իր 70-ամյակին հասնապես է հիմնադրում՝ Դպրանոցի կարիքները հոգալու համար:

Տեր և տիկին Չարլզ և Գրեյս Փինեճյանները, որ հիշյալ հիմնադրամին նվիրել էին 100.000 դոլար և այժմ էլ շարունակում են իրենց նվիրատվությունները, նույնպես արժանացան «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանի (տես էջ 19):

Տեր և տիկին Ռոբերտ և Զուլիետ Աբելյաններն ու Գառնիկ քին. Հալաջյանը, Վազգենյան Դպրանոցին աջակցելու հարցում գործուն մասնակցություն ունենալու համար, արժանացան Հայրապետական օրհնության և գնահատանքի գրերի:

Բարերարների այս սերտ միությունը կանգնած է եղել Վեհափառ Հայրապետի կողքին՝ օգնելով կյանքի կոչելու այն ժամանակ դեռևս երիտասարդ եպիսկոպոսի՝ հոգևոր կրթօջախ հիմնելու երազանքը: Նրանք այսօր էլ շարունակում են նվիրատվությունները Վազգենյան Դպրանոցի վերոհիշյալ հիմնադրամին: Դպրանոցի տեսուչ Տ. Բագրատ վրդ. Գալստյանյանը շնորհավորեց գնահատանքի արժանացած բարերարներին և իր երախտագիտությունը հայտնելով՝ բարերարների անունից խոսք ասելու հրավիրեց Տ. Գառնիկ քին. Հալաջյանին:

Քանի որ հանդիսության մեծաթիվ հյուրերի մեջ էին նաև ԱՄՆ դեսպան Զոն Օրդվեյլը՝ տիկնոջ հետ, ուստի Տ. Գառնիկ քահանան իր խոսքն անգլերենով սկսեց և այն ուղղելով դեսպանին, երախտագիտություն հայտնեց այն հյուրընկալության

համար, որ ամերիկյան պետությունը ցույց է տվել եղեռնագարկ այն հայերին, որոնց սերունդներն այսօր էլ հնարավորություն ունեն իրենց արդար քրտինքով վաստակած գումարներից բաժին հանել նաև հայրենիքին :

Հայերենով շարունակելով իր խոսքը՝ Արժանապատիվ Տեր Հայրն անդրադարձավ Վեհափառի երկրասարդ փարիսերի գործունեությանը, երբ հղացել էր դպրանոց հիմնելու իր ծրագիրը, և մաղթեց, որ Նորին Սրբության հովվապետական մականի ներքո այսօր ուսանող սաները վաղև իրենց աշխատասիրությամբ և ջանասիրությամբ ձգտեն նմանվել Հայոց Հայրապետին:

Այնուհետև ներկաներին ողջունեց նաև ԱՄՆ դեսպանը՝ բարձր գնահատելով ամերիկահայերի հայրենամոլությունը, որոնք իրենց նպաստն են բերում երկրի տնտեսության զարգացմանը՝ օգտակար լինելով նաև իրենց Մայր Հայրենիքին:

Դեսպանի խոսքից հետո Դպրանոցի տեսուչ Հայր Բագրատն օրհնության խոսք ասելու հրավիրեց Հայոց Հայրապետին: Գարեգին Վեհափառն իր երախտագիտությունը հայտնեց հնչած ջերմ խոսքերի և մաղթանքների համար՝ ասելով, որ այդ օրվան սպասել է շուրջ 14 փարի, Դպրանոցի բացվելուց հետո ցանկանալով, որ իրեն նախորդած երջանկահիշատակ Կաթողիկոսներ Վազգեն Ա-ն և Գարեգին Ա-ն պարգևների արժանացնեն ազգային այս բարերարներին, բայց այսօր, երբ Տիրոջ կամքով Հայոց Հայրապետական Աթոռի գահակալն ինքն է, առավել երջանիկ է այդ պարգևներն անձամբ շնորհելու:

Հայոց Հայրապետը ջերմ խոսքերով հիշեց նաև մյուս՝ բացակա բարերարներին, ինչպես նաև ի Տեր հանգուցյալներին, և Տիրոջից հայցեց Իր երկնային օթևաններում հանգիստ պարգևել նրանց հոգիներին: Նրանց զավակները շարունակում են իրենց ծնողների հայրենաշահ գործը՝ նորանոր նվիրատվություններով: Վեհափառը հայտնեց, որ հաջորդ օրը Վանաձորում տեղի է ունենալու փեր և փիկին Բեդկյանների հովանավորությամբ կառուցվելիք եկեղեցու հողօրհնեքը: Վերջիններիս միջոցներով կառուցվել է նաև մի եկեղեցի Նյու Ջերսիում:

Ամենայն Հայոց Հայրապետն իր խոսքի վերջում բարերարներին մաղթեց առողջություն և եկեղեցուն այսուհետև ևս նվիրաբար ծառայելու շնորհ:

Հանդիսության գեղարվեստական մասն սկսվեց Արաբկիրի Հայորդյաց տան կամերային նվագախմբի կատարումներով: Այնուհետև Վազգենյան Դպրանոցի երգչախումբը հնչեցրեց Սուրբ Պատարագից որոշ հավաժներ՝ «Ամեն Հայր Սուրբ» (Մ. Եկմայան), «Օրհնեալ է Աստուած» (Կոմիտաս), ազգային-հայրենասիրական՝ «Բամբ որդուրան» և «Ազգ փառապանծ» երգերը:


Դպրանոցի երգչախմբի ելույթից հետո հանդես եկավ Նորքի Հայորդյաց տան «Հայկազունք» երգչախումբը՝ կատարելով «Գեղաշեն», «Կեցցե Զեյթուն», «Սարդարապատ» և այլ հայրենաշունչ երգեր:

Երեկոն փակվեց երգչախմբերի համատեղ «Հայրապետական մաղթանք»-ով:

ԱՐԱՐԱՏ ՈՒՐԿ. ՆՈՒՐԻԶԱՆՅԱՆ
ՍԵՎԱՆԻ ՎԱԶԳԵՆՅԱՆ ԴՊՐԱՆՈՑԻ Ե ԼՍԱՐԱՆԻ ՍԱՆ



ՎԵՀԱՓԱՆ ՀԱՅԵՐԱՊԵՏԸ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ՀԵՏ ՎԵՀԱՓԱՆԻ ՍՈՒՏԵՐՆ



ԳԱՐԻԵԼԱ ՆԱՍՖԵԹԵՐԻ «ԼՈՒՍՈ ՆՇԱՆ» ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԴՐՈՒՄԸ ԱԼԵՔ ԵՎ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿՅԱՆՆԵՐԻ ԱՆՎԱՆ ԳԱՆՁԱՏԱՆԸ

Մայիսի 22-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ալեք և Մարի Մանուկյան Գանձարանը, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, Կեղի ունեցավ գերմանացի արվեստագետ Գաբրիելա Նասֆեթերի «Լուսո նշան» ստեղծագործության ցուցադրությունը, որն ասես իր ճիշտ ժամանակին, հոգևոր-բովանդակային առումով հոգեզալստյան խորհրդով առնչվեց, կազմակերպվեց Մայր Աթոռում, իսկ մեր Ս. Եկեղեցին նախորդ կիրակի օրն էր փոխել Հոգեգալուստը, որով ցուցանմունքն ասես մի փեսակ փեսաների հոգեգալուստ էր՝ արվեստի ընկալմամբ և ներկայացման արվեստագետի իր ուրույն խոսքով:

Գերմանիայի Ավետարանական Եկեղեցու Մշակույթի բաժնի նախաձեռնությամբ այս աշխատանքը պետք է ցուցադրվի քրիստոնեական աշխարհի հայրնի 12 փառարներում ու սրբավայրերում՝ որպես եղբայրական միասնության և բարեկամության խորհրդանիշ քրիստոնեական փառքեր դավանանք ունեցող ժողովուրդների համար:

Այս գործը, որն արվեստագետն անվանել է «Լուսո նշան», նրբաթել և թափանցիկ գործվածքից հյուսված 4 բուրգերի համադրություն է, որի ճիշտ մեջբերում բացվում է Ս. Խաչի պարկերը: Այն, ըստ ցուցադրության սրահի ճարտարապետական ձևի, կարող է ներկայացվել փառքեր կերպերով՝ մշտապես արտացոլելով բնական լույսը: Գանձարան կամարների ներքո ավելի քան 6 մ բարձրությամբ «Լուսո նշան»-ը կրկնում է Լոնդոնի Ս. Հակոբ եկեղեցում ներկայացված բուրգերի համադրությունը:

Հանդիսության բացմանը նախ խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի թանգարանների պատասխանատու Տ. Փառեն եպս. Ավետիքյանը, որ հանգամանորեն ներկայացրեց ցուցանմունքի արտահայտող լույսի խորհուրդը՝ ի մասնավորի այն համեմատության մեջ դնելով հայ եկեղեցական արվեստում մեծապես արտահայտված լույսի խորհրդի հետ: «Ս. Հոգու էջքի ներկայությունը խորհրդանշող արվեստի այս գործը մեկ անգամ ևս ընդգծում է Ս. Հոգու կենսարար և կենդանարար դերը մարդկության կյանքում, որպեսզի մարդ կարողանա լուսո այս պրիզմաների միջով իր հայացքը երկինք ուղղել, որպեսզի գալիս են հույսի և բարու, հարարության և հաղթանակի միակ և իրական խոստումները»,- ասաց Սրբազան Հայրը: Այնուհետև հյուրերն ունկնդրեցին Գևորգյան Հոգևոր Ճեմարանի երգչախմբի կատարմամբ Հոգեգալուստյան մի քանի շարականներ:

Ապա մի փոքրիկ բանախոսությամբ հանդես եկավ արվեստաբան Հրավարդ Հակոբյանը, որը նույնպես ցուցանմունքը շար բարձր գնահատեց՝ այն համեմատության մեջ դնելով հայ միջնադարյան մանրանկարչության մեջ մեծ փեղ գրավող լույսի և Ս. Հոգու պարկերագրության հետ:

Ցուցադրության բացմանը շնորհակալության և ողջույնի խոսք ասաց նաև ցուցադրության կազմակերպիչ, Բեռլինի Մայր Տաճարի արվեստի ծառայության տնօրեն, Գերմանիայի Ավերարանական Եկեղեցու Մշակույթի բաժնի պատասխանատու պարվելի Մանֆրեդ Ռիխտերը, որը հանգամանորեն ներկայացրեց սույն գործի անցած ճանապարհը, մինչև Հայաստանում հանգրվանելը, ապա խոսեց դրա ստեղծման պարճառների, իր և հենց հեղինակի ընկալման մասին, որից հետո հեղինակը՝ Գաբրիելա Նասֆեթերը, իր երախտագիտությունը հայտնեց Նորին Սրբությանը՝ իրեն նման հնարավորություն ընձեռելու համար, ապա ներկաներին ասաց, որ նախորդ երկու տարիների ընթացքում «Լուսո նշան»-ն արդեն ցուցադրվել է Փարիզի, Բեռլինի, Լոնդոնի, Երուսաղեմի, Կ. Պոլսի, Սպրասբուրգի և այլ քաղաքների նշանավոր տաճարներում, ինչպես նաև Լոնդոնի Ս. Հակոբ հայկական եկեղեցում։ Մայր Աթոռի ցուցադրությունը նվիրվում է Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակին և հայոց հավատ հայր Ս. Գրիգոր Լուսավորչին։

Ինչպես տեղեկացրեց Մանֆրեդ Ռիխտերը, «Լուսո նշան»-ը Կաթոլիկ Եկեղեցու առաջարկով իր վերջին հանգրվանը կգտնի Երուսաղեմում։ Այստեղ նախատեսվում է նաև բացօթյա ցուցադրություն՝ Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքում։

Հանդիսության ավարտին իր օրհնության և ողջույնի խոսքն ասաց Վեհափառ Հայրապետը՝ ի մասնավորի շեշտելով, որ համանման ստեղծագործությունները և արվեստի միջոցով միմյանց հետ շփումները ևս մեծապես նպաստում են քրիստոնյա ժողովուրդների հոգևոր-մշակութային փոխմերձեցմանը։ Նորին Սրբությունը մեծ գնահատանքով արտահայտվեց արվեստագետ Գաբրիելա Նասֆեթերի նմանօրինակ ձեռնարկի մասին՝ հաջող ցուցադրություն մաղթելով նրան աշխարհի բոլոր ծագերում։

ԱՐԹՈՒՐ ՍՐԿ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

ՆԻԿՈԼԱՅ ԲԵՐԴՅԱՆԵՎ

ԽՈՐՀՐԴԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ (ՄԻՍՏԻԿԱ) ԵՎ ԿՐՈՆ *

Ամեն ինչից առաջ ես կուզեմայի մերժել կրոնի բարոյական, կանոնա-տղիստոյական ըմբռնումը, որը բարոյականության մեջ է տեսնում մարդկային բնության բուն էությունը, այն, ինչ մարդուն մարդ է դարձնում՝ Աստծու պատկեր և մասնություն: Մարդկանց մի հսկայական զանգված բարոյականությունը կրոնականության հետ է շփոթում, կրոնի միակ պատգամը բարոյական սխրանքի՝ մեջ է տեսնում, կրոնականության աստիճանը բարոյականությամբ է չափում և բնությամբ ոչ բավականաչափ բարոյական մարդկանց կրոնի իրավունքը չեն ճանաչում: Կրոնի բարոյականացումը հիմնված է միանգամայն թյուր հոգեբանության և բնազանցության** վրա, մարդկային բնության ամբողջական լրությունից բարոյականության վերացարկման և այդ վերացարկված մասին ընծայված ինչ-որ առանձնահատուկ, բացառիկ նշանակության վրա: Բարոյականության սխալը շատ հարազատ է ուսցիոնալիզմի սխալին և նույնիսկ կապված է նրա հետ: Մարդկային հոգու ճշմարիտ հոգեբանությունն ու բնազանցությունը մարդկային բնությունը պետք է ըմբռնի գերազույց կենտրոնի հարաբերությամբ նրա օրգանական կաշկանդվածության և ստորադասության մեջ, այսինքն՝ այն գերբարոյական ճանաչի, ինչպես և գերուսցիոնալ, հատկապես գերբարոյական և ոչ թե ապաբարոյական, որն իռացիոնալիզմի մասն սխալ կլիներ: Հոգեբանությունը, որը հոգու էությունը նրա բոլոր առանձին, անջատ տարրերից շատ ավելի խորը տեսնելով՝ մասերն ամբողջի տեղ չի ընդունում, մասապատրաստված է այս գիտության ողջ զարգացմամբ: Օրգանական հոգեբանությունն արդարացնում է միաստիկան, որովհետև միաստիկան թշնամի է միայն վերացական տարրերը (միտքը, կամքը, զգացումը, ապրումը) էության տեղ ընդունող հոգեբանությանը: Մարդկային բնությունն իր էությամբ բարոյական չէ, մեծավ մասամբ բարոյական չէ, բայց ոչ էլ հակաբարոյական է, քանի որ այն միաստիկ և օրգանական է, որովհետև նրա հիմքը բարոյականությունից անհամեմատ շատ ավելի խորն է: Բարոյականությունն ընդունելի է միայն իբրև ստորադաս գործառնություն, իբրև գերազույց միաստիկ օրգանիզմի գործառնություն, այդ դեպքում այն բացարձակ ճշմարտության մասն է. ինքնաբավ, վերացական, չափազանց մարդկային բարոյականությունը չար սկզբունքի է վերածվում, առաքիճության գայթակղություն

* Թարգմանությունը կադրված է՝ Н. А. Бердяев, Новое религиозное сознание и общественность աշխարհությունից, գլուխ III, Մոսկվա, 1999 թ., էջ 26-39:

** Մետաֆիզիկա [թրգմ.]

է հանդիսանում: Կրոնի մեջ բարոյախոսների սխալը ոչ միայն թույր հոգեբանությամբ մեջ է արմատավորված, այլև՝ մեղանշումի մասին կեղծ ուսմունքի: Բարոյականացնող կրոնական գիտակցությունը մեղանշումը «բարոյական» իրողություն, բարոյական օրենքի զանցառում է նկատում, այդ իսկ պատճառով բարոյականության ամենակից կրոնական հարցադրում մեջ է մարդկության համար միակ փրկությունը փնտրում: Սա ամենակից կրոնական հարցադրում չէ, չափից ավելի սահմանափակ - մարդկային հայեցակետ է: Մեղանշումը *կրոնա* - *բնագանցական* իրողություն է և ոչ թե *բարոյական*, այն անչափակցելիորեն ավելի խորն է բարոյականությունից՝ մարդկային հոգուց (պսիխիկայից) ածանցված և մասնավոր այդ երևույթից: Մեղանշումը տեղի է ունեցել աշխարհի միաստիկ տարերքի հենց խորքում, սա բնագանցական ազատության խորհրդավոր ակտ է, կեցության խզում և նրա բաղադրամասերի ստրկացում, ոչ թե՝ բարոյական օրինականության զանցառում: Մեղանշումի զուտ բարոյական ըմբռնումը չափազանց մարդկային և ռացիոնալ է, ո՛չ կրոնական է, ո՛չ էլ միաստիկ: Աստծուց աշխարհի անկումը, կրոնա - բնագանցական ճեղքումը, կեցության խորհրդավոր անկումը անբարոյականություն, բարոյական օրենքի պարզ զանցառում կոչելը գրեթե ծիծաղելի կլինեք: Բարոյական, ռացիոնալիզացված մորմեր այն նախնական միաստիկ տարերքի մեջ բնավ էլ չկային, որում Արարչի և արարչագործության միջև երկպառակություն ծագեց, որում արարածն ապստամբեց Արարչի դեմ: Այս երկպառակությունը՝ նախասկզբնական ազատության այս ողբերգությունը մարդկային տկար բարոյականությամբ չի հաղթահարվում, այլ՝ համաշխարհային պատմության մեջ Փրկչի կողմից աշխարհի փրկագնումով հայտնված Աստծու երրորդությունական միաստիկ դիալեկտիկայով: Բարոյականությունն իբրև փրկության միակ ճանապարհ՝ Աստծու հետ անպայման միավորություն չէ, այն ինքնընդհանրապես ոչինչ առաջ չի բերում, կեցության էության մեջ ոչինչ չի փոխում և անաստվածության կարող է լինել: Աշխարհի պատմությունն անաստվածյան, մեռած օրենքը կենդանի Աստծուց բարձր-դասող բարոյականությունն է ճանաչում, աշխարհի անկումն Աստծուց օժանդակող, մարդուն աստվածացնող բարոյականությունը: «Բարոյական» մարդիկ հաճախ ամենածայրահեղ և սարսափելի անաստվածներն են, ոչ միայն մտքով, այլև իրենց կամքով և սրտով են խաչում Աստծուն հանուն բարոյականության: Որքան սարսափելի է դպիրների և փարիսեցիների բարոյականությունը, որքան հաճախ են բարոյախոսները լինում դաժան և կեղծավոր: Վերացականորեն վերցված, իր Սկզբնաղբյուրից կտրված բարոյականությունն այս աշխարհում միայն օրինական կարգունկառն է հաստատում և մինչև այս աշխարհի առնչությունն իր իմաստին վեր չի խոյանում, դեռևս աշխարհի մասերը համաշխարհային Լոգոսի հետ չի միավորում: Բարոյականության մեջ երկրի ստորին բանականությունն է տնտեսվարում, ոչ թե՝ վերինը: Բարոյականությունն իբրև այդպիսին, իբրև հատուկ սկզբունք, փորձում է չարի և բարու հիմնախնդիրը, հիմնախնդիր, որ կրոնա-բնագանցական է, բարու և չարի ակունքներից, աշխարհի իմաստից անկախ լուծել: Այս առումով շատ է մեղանշել հին Կանտը և շատերին թունավորել, և նույնիսկ Վլ. Սոլովյովի նման մարդիկ կրոնի մեջ բարոյականության գայթակղությո-

յամը տրվեցին և հաճախ են օգտագործում «կրոնա - բարոյական» կեղծ բառակապակցությունը:

Եվ ինչո՞ւ է, օրինակ, (գեղագիտությունը) ավելի վատը, քան բարոյականությունը, ավելի քիչ փրկագործական, մարդու և աշխարհի էությունն իրենով ավելի մվազ պայմանավորող, չէ որ մեղանչումը կարելի է մահ (գեղագիտորեն) մեկնաբանել, իբրև տիեզերական գեղեցկության կործանում, իբրև անկում էսթետիկական մերդաշնակությունից մեղքը կարելի է այլամղակություն մկատել, որի համար մեծ հիմքեր կան, գեղեցկությունը՝ փրկության ճանապարհ, որի վերաբերյալ օրինակներ կան հենց Ավետարանում: Ծատ են խոսում դիվական, անաստվածյան էսթետիկայի մասին, բայց ճշմարտություն է, որ բարոյականությունն էլ կարող է ոչ պակաս դիվական և անաստվածյան լինել: Ըշմարիտ է, որ կրոնի գուտ էսթետիկական ըմբռնումը կյանքում մեծ անկարգությունների կարող է հանգեցնել, մեր էմպիրիկական կեցության անկայունությանը, բայց դա (օգտապաշտ) պատկերացում է, կրոնի համար գոյություն չունեցող: Ինձ նույնիսկ կրոնի մեջ (փորձով ստուգելը) մվազ վտանգավոր է ներկայանում, քան բարոյականությունը, մվազ պարտադրական, մվազ ընդունակ հակակրոնական բարոյական ինքնաբավության վերածվելու:

Անշուշտ, Քրիստոս ավելի շուտ եկավ մեղավոր Օսկար Ուայլդի փրկության համար, քան այն բարոյական կեղծավորների, որոնք Նրան քարկոծում էին. Քրիստոս այցելել է Ուայլդին բանտում: Մենք շատ կարիք ունենք կրոնական կյանքի էսթետիկական թարմացման, բայց կրոնի մեջ վերացական էսթետիզմն էլ այնպես սխալական է, ինչպես և վերացական բարոյականությունը: Գեղեցկությունն ու բարին կեցության սկզբնաղբյուրում մի են և միայն միասին աղբյուրն է իրավունք տալիս ինչպես գեղեցկությանը, այնպես էլ բարուն:

Գեղագիտությունը և բարոյականությունն ինձ համար բացարձակ համարժեք են և միանման ենթակա գերագույն կրոնական սկզբին: Մեղանչումը ո՛չ բարոյական և ո՛չ էլ գեղագիտական փաստ է, ինչպես մահ ո՛չ էլ ինտելեկտուալ, այլ կրոնական, կեցության անկում, որում վնասված է և՛ գեղեցկությունը, և՛ բարին, և՛ ճշմարտությունը: Փրկության ճանապարհը ո՛չ բարոյական է և ո՛չ գեղագիտական, այլ կրոնական, որին իբրև մասեր ենթակա են և՛ բարին, և՛ գեղեցկությունը: Փրկության ճանապարհը՝ Քրիստոս է և ոչ թե բարոյական օրենքը կամ մարդկային բնական կատարելությունը: Մարդկության փրկությունը միասին - կեցությամբ փաստ է, ազատության և սիրո խորհրդավոր ակտ, գերբարոյական և գերուացիոնալ: Դրանով, իհարկե, բնավ չեն մերժվում բարոյականության պայմանական և հարաբերական իրավունքները, որը ստորադաս պետք է լինի գերագույն կրոնա - մետաֆիզիկական սկզբին, այսինքն՝ ոչ թե բարոյականությունն է հաստատվում, այլ՝ գերբարոյականությունը՝ կրոնական բարոյականությունը: Բարոյականությունը կրոնական կյանքի մասն է, մրա անկապտելի տարրը: Կրոնը, որը չէր հանգեցնի նոր բարոյականության, բարոյական վերածննդի, անկենսունակ և անպետք կլիներ: Բարոյախոսները կրոնի մեջ պետք է այն հանրաճանաչ հոգեբանական փաստի առաջ կանգ առնեին, որ բարոյականությունը և կրոնականությունը չեն համընկ-

նում, բարոյական մարդիկ հաճախ կրոնական չեն լինում և նույնիսկ՝ զուրկ ամեն տեսակի կրոնական զգացումից, իսկ հզոր կրոնական ապրումներով կրոնասեր մարդիկ երբեմն բավականաչափ բարոյական չեն լինում, շատ հաճախ օրինազանցներ են հանդիսանում: Ավելի խորը թափանցումը կրոնականության հոգեբազանցներ են հանդիսանում: Ավելի խորը թափանցումը կրոնականության հոգեբազանցներ են հանդիսանում, գերմարդկային ծարավին, իսկ «բարոյական» բնությունը, բարոյականության հանդեպ հակումը երբեմն փակում են կրոնական ճանապարհին են հանգեցնում, գերմարդկային ծարավին, իսկ «բարոյական» բնությունը, բարոյականության հանդեպ հակումը երբեմն փակում են կրոնական ճանապարհը, այն կարծես թե ավելորդ են դարձնում, կարծես թե փակում են կեցության ողբերգական խորքը: Կրոնական որոնումի և կրոնական գիտակցության հոգեբանական հիմքը կեցության ողբերգականության, բուժման համար սոսկ մարդկային միջոցների, միայն մարդկային բարոյականության անբավարարության, միայն երկրային իրերի խղճուկության ապրումն է: Օրենքը կատարելու մեջ չէ, բարոյական պահվածքի մեջ չէ կրոնականության էությունը, այլ ուրիշ աշխարհների մեջ խորասուզման, վերերկրային լույսը տեսնելու ջանադրության: Քրիստոս սեր քարոզեց և ոչ թե բարոյականություն կամ վերացական պարտավորություն:

Բնութագրական է, որ կրոնի մեջ բարոյախոսները, հաստատում բարոյական հակումների տեր մարդիկ սովորաբար ողբերգությունից չեն ելնում և նույնիսկ քիչ զգացմունքային են դրա հանդեպ. ողբերգական խզումներն ու ձախողումները նրանց բավականաչափ «բարոյական» չեն թվում, բայց հենց կրոնի մեջ նրանք կցանկանային սաստկացնել ողբերգությունը իբրև բարոյական պարտավորություն, իբրև ինքնախոշտանգման պարտք, իբրև բարոյա - կրոնական սխրանք: Ողբերգությունից չեն ելնում (բարոյական հավասարակշռությունը չափազանց մեծ ողբերգությունից է փրկում), բայց հենց կրոնի մեջ ողբերգության են հանգում, իբրև բարոյական իմպերատիվ: Մենք կատարելապես հակադիր ուղիներով ենք ընթանում, ավելի շատ իրերի բնությանը համապատասխանող: Դոստոևսկին բացահայտեց կրոնական հոգեբանության տրանսցենդենտ խորքը և բոլորից լավ ցույց տվեց կրոնի բարոյական մեկնաբանության անկայունությունը: Մենք ելնում ենք մեր կեցության խորը ողբերգականության փաստերից, իրերի իմաստն ենք փնտրում և կրոնի մեջ ողբերգականության վերացմանը, ողբերգականությունից կրոնական ելքի ենք հանգում: Ասկետիկ և բարոյականացնող պատմական քրիստոնեությունն ասում է. Քրիստոս խաչի վրա մահացավ և հարություն առավ, այդ պատճառով մեր կրոնական կյանքը անվերջանալի ողբերգություն է, այդ պատճառով մեր կյանքը ինքնախոշտանգում պետք է լինի: Բայց կարելի է ասել. Քրիստոս խաչի վրա մահացավ և հարություն առավ, այդ պատճառով համաշխարհային ողբերգությունը հաղթահարված է, այդ պատճառով մենք փրկված ենք, երբ մեր ներսում ենք ընդունում Քրիստոսին, երբ միավորվում ենք Նրա հետ և մեր կրոնական կյանքը բերկրալից է: Կրոնական կյանքին մեր մերձեցմանը համաչափ նվազում է ողբերգությո-

յունը, կյանքի սարսափը, վիշտն ու տառապանքը, աճում է բերկրանքը, կյանքի իմաստի զգացողությունը, փրկության նախազգացումը: Սարսափը չէ, որ հզորանում է իմ մեջ, երբ ես լսում եմ Աստծու ձայնը և Նրա հետ միավորվում՝ սարսափը չքանում է: Կրոնը կեցության վերջնական բերկրանքի տրանսցենդենտ զգացողությունն է: Ողբերգությունը, սարսափը, վախը՝ կրոնական կյանքի մեջ չեն, այլ նրանից դուրս, կրոնական կյանքի դեռևս ոչ բավարար իրականության մեջ: Ողբերգական թախիծը չի լքի մեզ մինչև վերջին պահը, աշխարհի չարը հավատացյալների հանդեպ հալածանք է հարուցելու, բայց կրոնական ուրախությունը կաճի: Քրիստոս եկավ մեղավորների մոտ, սիրեց նրանց և մեղքի ողբերգությունն իրեն կրոնական փորձություն գնահատեց, քարոզեց փրկություն և ազատագրում տառապանքից, փրկեց մարդկանց և ոչ թե տանջեց նրանց: «Եվ եթե մեկը լսի իմ խոսքերը և չպահի դրանք, ես նրան չեմ դատապարտի, քանզի չեկա, որ աշխարհը դատապարտեմ, այլ՝ որպեսզի փրկեմ աշխարհը» (Հովհ. ԺԲ 47): Մարդկությունն իր համար նոր գիտակցություն ստեղծեց, Քրիստոսի ճշմարտությունն ավելի լավ բացահայտող, քան դա արել էր պատմական քրիստոնեությունը: Այստեղ մենք մոտենում ենք ժամանակակից կրոնական ճգնաժամի համար հիմնական դարձած ասկետիզմի խնդրին:

Ջուտ բարոյական պաթոսը ժխտական է, այն ստեղծագործական չէ, այն ժղխտում է իր մեջ չարը և այդ ժխտման մեջ է տեսնում բարին՝ խուսափելով չարից, իսկ բարին դրական անելիք չունի: Բավականաչափ ուշադրություն չի դարձվում բարոյականության զուտ ժխտողական բնույթի, նրա սանձահարող, սահմանափակող, զսպող միտումների վրա, ինչպես նաև կրոնի դրական ստեղծագործական բնույթին: Ասկետիզմը բարոյականության հետ է կապված: Ասկետիզմը կյանքին թշնամի, մահվանը սիրահարված յուրահատուկ կրոնական մետաֆիզիկա է. մերժման ուղին ընտրած, դրական ճանապարհից հրաժարված ասկետիզմը հիվանդագին (երկվության) արդյունք է, բաժանում երկնքի և երկրի, հոգու և մարմնի, տրանսցենդենտի և իմանենտի, հավիտենականի և ժամանակավորի, հանդերձյալ կյանքի և երկրավոր կյանքի միջև:

Պատմական սահմանափակության ուժով ասկետիկ գիտակցությունը փորձում է հաղթել մահը հենց մահվամբ, կյանքի ողբերգությունը՝ ողբերգության զորացումով, վերափոխել երկիրը՝ նրա վերջնական մերժմամբ, ազատագրել մարմինը՝ նրա վերջնական մահացությամբ: Պատմական քրիստոնեության մեջ այդքան հզոր ասկետիզմը Աստված-Բանի մարմնացումը չի ընդօրինակում և ոչ էլ Նրա՝ աշխարհը փրկող հարությունը, այլ բացառապես Քրիստոսի մահը, խաչելությունը: Ըստ էության մոայլ ասկետիզմի համար Քրիստոս ամենից քիչ է Փրկիչ, ամենից քիչ է մահը հաղթող, այլ ավելի շուտ՝ մահացության ուսուցիչ: Ծառ հաճախ պատմական քրիստոնեության համար Քրիստոս ոչ թե Ազատագրում և Սեր էր ներկայանում, ոչ թե ներքուստ էր ընդունվում, այլ դեռևս ինքնախոշտանգման կոչ անող արտաքին ուժ էր թվում: Միայն որոշ ընտրյալներ են մտերմիկ հարաբերություն ունեցել Քրիստոսի հետ, սիրո կապ մերձավոր էակի հետ. իշխող գիտակցության մեջ ապրել է հեռավոր Աստված, ոչ այնքան բերկրանք պարզևող, որքան վախեցնող:

Հետևողական ասկետիզմն իբրև սկիզբ՝ «վերացական» ասկետիզմ է, միջոցից նպատակի է վերածվել, իսկ քրիստոնեության պատմության մեջ այն շատ հաճախ հատկապես այդպիսին է հանդիսացել, պետք է հաշտվի աշխարհում եղող կեղծիքի և չարիքի հետ, պետք է դիմանա դիվական բռնությանը, քանի որ այդ չարիքի մեջ տառապանքի, սխրանքի համար լրացուցիչ առիթ է տեսնում, քանի որ կեղծիքով է հագնվում ինքնախոշտանգման ծարավը: Ասկետիկ կրոնասիրությունն իր մեջ աշխարհի, ինչպես նաև երկրի վրա Աստծու Արքայության հաղթանակի համար պայքարելու կարողությունն չունի, քանի որ ասկետիկ մտածողության համար ազատությունն ու երկրային ճշմարտությունը կմվազեցնեն տառապալից սխրանքի առիթների քանակը, կարծես թե ավելորդ կդարձնեն ինքնախոշտանգումը:

Ասկետիզմը չի կարող բավականանալ առանց չարի, աշխարհում չարի գոյության, չարի գայթակղության իրողությամբ է ապրում, որի դեմ պետք է պայքարի, ահա թե ինչու է նրա պաթոսը նշանակալից չափով նիհիլիստական, բուդդիստական: Ասկետիզմը՝ պեսիմիստական և համաշխարհային կյանքին թշնամի, միշտ ավելի շատ չարի գորությանն ու իրականությանն է հավատում, քան՝ բարու գորությանն ու իրականությանը, ավելի շատ սատանային է մոտ գտնվում, քան՝ Աստծուն: Դրական, ստեղծագործական կրոնական միստիկան պետք է հանգեցնի չարի պատրանքայնության ու ոչնչության և Աստծու իրականության ու հզորության զգացողությանը: Ասկետիկ կրոնականությունն ի գործ է միայն պայքարելու մարդու միջի անհատական չարի դեմ, բայց համաշխարհային չարից այն կարող է միայն երես թեքել, դրա պատճառով այն կարող է միայն տառապել. այն գործ չունի տիեզերքի հետ, աշխարհի վերափոխման, աշխարհի ազատագրման և երկրի վրա ճշմարտության հաղթանակի հետ. այդ հին կրոնականությունն անհատական է այդ բառի վատ իմաստով, այն ընդհանրական չէ լավ իմաստով, այլ սոսկ հեղինակության հպատակությանն է տեմչում: Մոռանում են, որ Քրիստոս Ինքն Իրեն չխաչեց, այլ Նրան այս աշխարհի չարը խաչեց, որին Նա եկել էր հաղթելու: Ուզում են, որ ինքններս մեզ խաչենք, չարի գործունեությունը մեր նկատմամբ մեզանից կանխենք: Այո, մենք պետք է կրոնական ճշմարտության համար խնդությամբ մեռնենք, երբ այս աշխարհի չարը սկսի մեզ խաչել, բայց ինքններս չխաչենք, մեր նկատմամբ չարի այդ դերը չկատարենք: Սիրել կյանքի իմաստն ամեն ինչից առավել և այդ ազատ ստեղծագործական սիրով այդ իմաստի հանդեպ գործվող ամեն տեսակի թշնամականը հեռացնենք. ահա մեզ պատվիրված միակ արդար ասկետիզմը: Պետք է Քրիստոսին մեմնվել և ոչ թե նրանց, ովքեր նրան չարչարեցին ու խաչեցին: Քրիստոս կյանք է, կյանքի հաղթանակ մահվան հանդեպ, մարմնացում և հարություն, և մենք պետք է կյանքով հաղթենք մահը, մարմնավորվենք և մեր ու տիեզերքի մեջ իմաստն ու Լոգոսը մարմնավորենք, պետք է նվաճենք մեր և ողջ երկրի հարությունը: Մահվան սկիզբը Քրիստոսի մեջ չէ, ինչպես, ավաղ, շատ հաճախ քրիստոնեությունն է կարծել պատմության ընթացքում իր հոգեհանգստյան և թաղման պաթոսով, այլ՝ համաշխարհային չարի: Մեր ուղղափառ հոգեհանգիստը ինչ-որ միստիկ սիրահարություն է մահվան քաղցրությանը, և նրանում ոչ թե կյանքը,

այլ մահվան կրոնն է զգալի: Բայց ասված է. «Աստված մեռելների Աստված չէ, այլ կենդանիների» (Մտթ. ԻԲ 32. Մրկ. ԺԲ 27, Ղուկ. Ի 38), «Թույլ տուր, որ մեռելները թաղեն իրենց մեռելների» (Մտթ. Ը 22): Գողգոթան ո՛չ տառապանքի աստվածացում էր, ո՛չ տառապանքի քարոզ՝ իբրև գերագույն բարու, այլ հաղթանակ տառապանքի հանդեպ:

Քրիստոսի տիեզերական զոհաբերությունն ազատեց զոհեր մատուցելուց և ընդմիջտ մերժեց Աստծու՝ իբրև զորության հանդեպ վերաբերմունքը, որի գթաարտությունը պետք է շարժել: Կրոնականության պատմականորեն սահմանափակված և մասնավոր ձևերում դեռևս Աստվածության իբրև օտար, մոայլ, գրեթե դաժան զորության, որին միայն արյունալի զոհերով կարելի է գթաշարժել, որը բարկությունը ողորմության սոսկ ինքնախոշտանգման պայմանով է փոխում, այս վաղեմի գիտակցությունն է ապրում: Հիմ, սահմանափակ մտածողությանը Աստվածությունը միայն զորության ասպեկտում է երևում, ահեղ զորության և փրկվելու համար մարդկանց ու կենդանիների արյունով էին ողողում երկիրը: Հեթանոսության և Հիմ Ուխտի մեջ քալության ծարավն արյունալի զոհով էր արտահայտվում: Սիրո Նոր Ուխտն արյունալի զոհն անարյուն Հաղորդությանը փոխարինեց: Մութ ուժի պաշտամունքում հիմ մարդկության դաժանությունն ու վայրագությունն են արտահայտվել: Ինկվիզիցիայի խարոկներում, կրոնական հալածանքներում, միջնադարյան խոշտանգումներում դեռևս Աստված - Ջորությանը արյունալի զոհաբերություններ էին մատուցվում: Բայց չէ որ Քրիստոսից և Նրա զոհաբերությունից հետո Աստված այլևս զորություն չէ, այլ՝ Սեր, օտար չէ, այլ՝ հարազատ, հեղինակություն չէ, այլ՝ ազատություն: «Եկեք ինձ մոտ բոլոր հոգանձներդ և բեռնավորվածներդ, և ես ձեզ կհանգստացնեմ», «Իմ լուծը ձեր վրա վերցրեք և սովորեք ինձանից, որ հեզ եմ և սրտով խոնարհ, և ձեզ համար հանգիստ պիտի գտնեք», «որովհետև իմ լուծը քաղցր է և իմ բեռը՝ թեթև» (Մտթ. ԺԱ 28 - 30): Լծի հենց այս քաղցրության և թեթևության մասին են մոռացել բոլոր ժամանակների հավատաքննիչները: Կարծես թե մոռացել են, որ հեզ և սրտով խոնարհ Որդի Աստված մեզ մեր Հոր հետ է միավորել: Արյունալի մարդկային զոհեր այլևս չեն մատուցվում (այսինքն՝ գրեթե չեն մատուցվում, որովհետև դեռևս հանուն «բարու» մարդկանց մահապատժի են ենթարկում), սակայն ոչ պակաս սոսկալի զոհեր են մատուցում՝ զոհաբերություն կյանքի ողջ հարստությամբ, անհատական կեցության լրիվությամբ: Այս անարյուն, բայց սոսկալի զոհաբերություններին կրոնական սահման դնելու ժամը հասել է, և այդպիսի սահման կարող է լինել միայն առավել ամբողջական, մոր կրոնական մտածողությունը, որը վերջնականապես կհանաչի Աստծուն՝ մեր Հորը, անսահմանորեն մեզ սիրող՝ Ազատության Պարգևատուին, և կմերժի դաժան, մարդկանց խոշտանգող Աստծուն: Կյանքի արյունը կհաղթի մահվան արյանը, Հաղորդության խորհուրդը՝ Քրիստոս-Լոգոսի մարմնի և արյան հետ հաղորդությունը կհաղթի ինքնախոշտանգումին և այլոց խոշտանգման զոհին: Քրիստոս եկավ մեզ փրկելու և ոչ թե պատժելու, և մենք ուզում ենք սիրել Նրան ոչ հանուն վախի: Երկյուղն ու պաշտամունքը պետք է հաղթեն վախն ու հպատակությունը: Աստված մեզանից ստեղ-

ծագործություն է պահանջում, ստեղծագործող ազատ սեր և ոչ թե զոհոթ ու տառապանք: Եվ եթե ես ինչ-որ բանի ամխոս հավատում եմ, ապա դա Աստծու բարությանն է. Նրա սերը և մեր՝ իբրև իր զավակների հանդեպ բարեգթությունը, ազատությունը, որը Նրա հետ միավորում է մեզ, և ավելի շուտ ես պատրաստ եմ կաստությունը, որը Նրա գործության և ամենակարողության վրա, քան Նրան դաժանություն և խստություն վերագրելու: Աստված դաժան է, սարսափելի, Աստված իշխանություն է, Աստված հեղինակություն է. դա մարդկության առաջին օրերի տեսողության տկարությունն է, երևակայության ահաբեկվածությունը, սեփական գազանայնության սահմանափակ արտացոլումը: Մեղանշումից հետո մարդիկ հեռացան Աստծուց և ներքուստ իրենց օտարացած Նրա գործությամբ ապշանք՝ ահել Աստծու կերպարանք ստացավ: Սակայն կրոնի գլխավոր նպատակն է՝ խթանել ամեն տեսակի վախ, և անվեհեր, անվախ վերաբերմունք հաստատել կյանքի նկատմամբ: Զարգացած և լիակատար կրոնական գիտակցության համար Աստված ոչ թե գործություն է, այլ իմաստ, ոչ թե իշխանություն է, այլ սեր, ոչ թե անհրաժեշտություն է, այլ ազատություն: Աստծու և մարդու միջև հարաբերության խորհուրդն անարտահայտելի է, իսկ որպես հպատակություն և սարսափեցում ամենից քիչ է արտահայտելի: Աստծուն մերձենալով, Նրա հետ միավորվելով ես ազատագրվում և բերկրում եմ, Աստծուց հեռանալով՝ ստրկանում և տառապում: Աստծու հետ միությունը կրոնական բերկրալից խորհուրդների մեջ է և ոչ թե բարոյական վարժանքների: Սա ստեղծագործական, ազատ ստեղծարար և ոչ թե բացասական-ճգնական գործընթաց է: Աստվածութագության հանցանքը հաղթահարվում է միայն Աստծու համբի հետ դրական վերամիավորմամբ, Փրկչի հանդեպ անսահման սիրով, Նրա ոտքերն ընկնելով: Միջնադարյան վանականն իր հոգին աշխարհից փրկելով, ճգնավորության ճանապարհով գայթակղություններից երես դարձնելով, կյանքից խուսափելով իր խցում բացասական, չար կերպարներ էր հորինում և դրանցով տանջվում: Քրիստոնյա ճգնավորի առաջ գայթակղությունն էր հառնում, օրինակ՝ կնոջ չար կերպարը, նրա համար սատանան էր մարմնավորվում և այս բոլոր բացասական մարմնացումները նա ինքն էր հորինում: Նրա կրոնական խանդավառությունը բացասական կերպարներով, գայթակղություններով և փորձություններով էր սնվում, նա ապրել չէր կարող առանց «չար» մարմնի, «չար» երկրի: Մեր ժամանակաշրջանի մարդիկ դեռևս այդ երկվությամբ, այդ գայթակղություններով և փորձություններով են թունավորված և, քրիստոնեական հավատքից ազատված լինելով, դեռ քրիստոնեական սնոտիապաշտություններով, պատմական քրիստոնեության ժխտողականությամբ (միհիլիզմով) են համակված: Մարդկությունը պետք է անցներ ճգնավորության միջով, նրանում իսկական ողբերգություն կար: Անկարելի է ժխտել արևելաքրիստոնեական միստիկայի, սրբերի և ճգնավորների անձնութագրության սխրանքի, ինքնահաստատումից կամավոր հրաժարման մեծ, համաշխարհային ճշմանկությունը: Նրանց մեջ մարդու աստվածացումն էր կատարվում: Սակայն պատմական Եկեղեցու ճգնավորությունը դաժան և արյունոտ է, Նրա սպասավորները հաճախ են կյանքն անիծում, արդարացում են մահապատիժներն

ու բռնությունները՝ սրբապղծորեն քողարկվելով Նրա անվամբ, Ով սեր էր և ազատություն և կյանք՝ անվախճան կյանք: Ահավասիկ ասկետիկ գիտակցության սարսափելիությունը, ահա հիմ կրոնականության Նեմեսիդան:

Բայց չէ որ մի ուրիշ ճանապարհ կա: Դրական կրոնական կյանքի և կամքի, առ Աստված ստեղծագործական պոթելումների մեջ կարող է հավերժական կանացիության, աստվածային գեղեցկության կերպարը հայտնվել: Վլ. Սոլովյովը կիսով չափ հիմ, ասկետիկ և բարոյականացնող կրոնական գիտակցությանն է պատկանում, բայց նրանում մահ շատ բան մոր, մարգարեական է: Նրա անձնական կյանքի ամենաապշեցուցիչ իրողությունը դեպի Եգիպտոս նրա ճանապարհորդությունն է՝ ամապատում «գեղեցիկ կնոջ» հետ նրա հանդիպումը, մկարագրված նրա «Երեք հանդիպում» բանաստեղծության մեջ: Կերպարը «Գեղեցիկ կնոջ», հավերժական կանացիության կերպարը չար գայթակղություն կամ փորձություն չէ, այլ դրական ճանապարհով Աստծու հետ միավորվելու միաստիկ փորձառություն, սա չարի ժխտումը չէ, այլ բարու ստեղծարարություն: Մի ուրիշ հիմնալի բանաստեղծության մեջ Սոլովյովն ասում է.

Հավերժական կանացիությունն այսօր
Անաղարտ մարմնով երկիր է ընթանում,
Ամմար լույսում մոր դիցուհու
Երկինքն է ծովանդունդին միաձուլվում:

Ինչ աշխարհիկ Աֆրոդիտեի գեղն է կազմում,
Որ բերկրանքն է տների և անտառների ու ծովերի.
Ողջը կհամատեղի գեղն աներկրային
Առավել ջինջ, զորեղ, կայտառ, ամթերի:

Իսկ պատմական երկրային եկեղեցում՝ ու՞ր է երկնային Աֆրոդիտեն: Հիմ աշխարհիկ Աֆրոդիտեի ունայնությանը հաղթող հավերժական կանացիությունը անշտապ դեպի աշխարհ է ընթանում: Պատմական քրիստոնեության մեջ չկա «տների, անտառների և ծովերի բերկրանքը»: Մենք այդ «բերկրանքին» ենք ապաստում: Ավելի շատ բերկրալից հանդիպումներ, ավելի շատ ստեղծագործական մերձեցումներ Համաշխարհային Հոգու հետ, սրանցում է ճշմարիտ կրոնական կյանքը, իսկական միաստիկ փորձառությունը: Բարոյա-ճգնական կրոնասիրության սարսափելիությունն այն է, որ նրա համար բաց է չարի, սատանայի հետ միավորվելու միաստիկ փորձառությունը, բայց գրեթե փակ է Աստծու հետ դրական միավորման միաստիկ փորձառությունը: Ծնորն չկա, հաղորդակցության բերկրանքը իր Աստծու հետ, կրոնական մտերմություն չկա, կրոնական կյանքն աղքատ է դրական բովանդակությամբ: Բրիստոնեության պատմությունը մեծ մի կերպար է ճանաչում, որի մասին հարկ էր հաճախակի հիշեցնել բոլոր մոլեռանդներին, Ֆրանչիսկո Ասիզացու՝ Բրիստոնի ամենակատարյալ ընդօրինակողի կերպարը: Երբ Ֆրանչիսկո Ասի-

զացի՜ն հայտնվում էր, բերկրանք էր ծնվում, նրանից լուսապսակի լույսն էր տա-
րածվում, գազանները հանդարտվում էին, բնությունն Աստծո հետ էր միավորվում,
երկիրն այս շնորհալի մարդու հայտնվելուց վերափոխվում էր: Իսկ ահա պատմա-
կան քրիստոնեության առավել բնորոշ ներկայացուցիչ Սավոնարոլան սարսափ էր
ներշնչում, ինքնախոշտանգման էր կանչում: Պատմական Եկեղեցու մեծ ոճիրներն
ընդդեմ ազատության, անձի, մշակույթի, եկեղեցու, հակաքրիստոնեական դաժա-
նությունը բխում են ճգնափորության սխալ ընթացումից, թյուր կրոնական մարդաբա-
նությունից կամ դրա լիակատար բացակայությունից: Սակայն հանուն մեծ արդա-
րի՝ «Աստծու աղքատ» Ֆրանչիսկոսի, հանուն մի քանի արևելյան սուրբերի պատ-
մական քրիստոնեության շատ մեղքեր կանգնեմ: Ի՞նչ է առավել առի՞նքնում մեր
Ժամանակաշրջանի մարդկանց, արդյո՞ք Ֆրանչիսկոսն իր հարուստ, դրական
կրոնական կյանքով՝ լի բերկրանքով, Աստծու հետ ազատ, մտերմիկ հաղորդակ-
ցությամբ, թե՞ Սավոնարոլան իր բացասական կրոնական կյանքով՝ ահ ու սարսա-
փով, խավարով և մոլուցքով լցված, առավել մտերմիկ հաղորդակցությամբ սատա-
նայի, քան Աստծու հետ: Միայն Ֆրանչիսկոսի մեջ ենք երկիրը վերափոխելու կամ
լուսավորելու, այն երկնքի հետ միաձուլելու ի զորու կրոնասիրության ձիրք տես-
նում, թեև նա էլ երկվությունը չհաղթահարեց: Կասեն. «Ֆրանչիսկոսը ճգնափոր և
ծայրահեղ ճգնափոր էր, նա իր հարսնացու աղքատության հետ էր պսակադրվել»:
Այո՛, բայց սա այն ճգնափորությունը չէ, որում մենք կրոնական կյանքի ժանտախտն
ենք տեսնում, սա նպատակի վերածված, վերացական ճգնափորությունն է, ինք-
նախոշտանգման, խավարի և ստրկության ճգնափորությունն է: Ֆրանչիսկոսի մոտ
ճգնափորությունն այնուամենայնիվ ենթակա էր գերագույն, դրական, ստեղծագոր-
ծական սկզբունքի, նա *սիրում* էր իր հարսնացուի՝ աղքատությանը, որովհետև
տեսնում էր նրա անհամար հարստությունները: Ֆրանչիսկոսն «աղքատ» էր, բայց
«Աստծու աղքատն» էր և ոչ թե սատանայի, ինչպես ուրիշ մտայն ճգնափորները, որ
անգոյությունը սիրեցին: Նա սիրում էր բնությունը և գազաններին, բերկրում էր սի-
րով, սիրո զորությամբ էր թափանցում «այլ աշխարհներ» և ոչ թե տառապանքով և
տվայտանքներով: Ֆրանչիսկոս Ասիզացու մեջ այս սարսափելի երկվությունը
չկար, նա կարծես թե արդեն վեր էր խոյանում դավանանքի պատմական ձևերի
նկատմամբ և շատ էր գերազանում իր ստեղծած կաթոլիկ ուխտը: Միևնույն բարե-
պարզ կրոնական ոգին դրսևորվեց վաղ քրիստոնեական վերածննդի մեջ, Ֆրա
Բեստո Ամժելիկոյի գեղանկարչության՝ բերկրալից և լուսավոր արվեստի, գեղեց-
կությամբ լեցուն կյանքի կրոնական ստեղծագործության մեջ: Բայց աշխարհի,
տիեզերքի «մարմնի» կրոնական այն հաստատումը, որին սպասում ենք քրիստո-
նեության պատմության մեջ, դեռևս չկար: Հաճախ էին փորձ անում միավորել կրո-
նական ոգին փորձային (Էմպիրիկ) մարմնի, ֆիզիկական կյանքի հետ, բայց միս-
տիկ, կրոնական նվիրագործված մարմին դեռևս աշխարհի քրիստոնեության պատ-
մության մեջ չկար: Ժամանակակից գիտակցությունը դժվարությամբ էր ըմբռնում,
որ այժմ խոսքը «մարմնի»՝ որպես միատիկ տիեզերքի մասին է, այլ ոչ թե՝ ֆիզիկա-
կան երևույթների, փորձային (Էմպիրիկ) նյութի: Ասկետիկ դուալիզմը հատուկ կար-

գի մանքեականություն էր, որն ընդունում էր, որ մյուսի ինքնություն մետաֆիզիկական սկիզբը չար է, Աստծուն հակառակ: Բայց չարիքի ակունքը ոչ թե «մյուսի», այլ մասնատվածության, անմիաբանության մեջ է համաշխարհային կենտրոնից՝ իմաստից անջրպետման արդյունքի: «Մարմնի» հաստատումն մկրագործումը կապված է աստվածամարդության՝ մարդկության *աստվածացված* մարմնի գաղափարի և համաշխարհային պատմության իմաստի հետ:

Քրիստոս ինքը ճգնավոր չէր: Նրա կյանքում մոայլ ինքնախոշտանգման ոչ մի գիծ չկա: «Եկավ Մարդու Որդին. ուտում է և խմում. և ասում եմ՝ ահա ուտող և խմող մարդ, բարեկամ՝ մաքսավորների և մեղավորների» (Մատթ. ԺԱ, 19): Քրիստոս խնջույքների էր հաճախում, գիմի խմում, մեղավորների հետ շփվում և փարիսեցիների՝ ասում. «Մաքսավորները և պոռնիկները ձեզանից առաջ պիտի հասնեն արքայություն» (Մատթ. ԻԱ, 31): Քրիստոս պայմանական աղքատություն էր ուսուցանում հանուն վայրի շուշանների լիակատար հարստության: Քրիստոս օրհնեց կրոնական կյանքի պերճանքը, երբ մեղավոր կինը թանկարժեք յուղով իր ոտքերն էր օծել և իր մագերթով սրբում էր դրանք: Այս շոալությունը Քրիստոս բարձրադասեց աղքատներին օգնելուց: Սակայն համաշխարհային պատմության միստիկ դիալեկտիկայի մեջ ծածուկ խորագույն պատճառներով՝ քրիստոնեական դարաշրջանում կրոնական ճշմարտության լրությունը դեռևս չէր բացվել և պատմության ընթացքում չէր առարկայացել: Քրիստոնեությունը հեթանոսությանը հակադրությամբ բացասական-միակողմանի բնույթ ձեռք բերեց և մախաստեղծ համաշխարհային տարերքից երես դարձրեց: Գիտակցված մահացումի, Գողգոթայի ընդօրինակման դարեր պետք է անցնեին, Եփրեմ Ասորին և քրիստոնյա ճգնավորներն իրենց հրաժարման միստիկ սխրանքը պետք է գործեին, որպեսզի մարդկությունը մոր կյանքի վերակոչվեր, որպեսզի այն հարության ճանապարհով ընթանար: Միջնադարյան կրոնական գիտակցությունն ի գործու չէր միավորել և հաշտեցնել ճգնական վանականության իդեալը, անձ, անձնական պատիվ և ընդդեմ չարիքի՝ դեպի աշխարհ ռազմական արշավանք հաստատող ասպետության իդեալի հետ: Կրոնական իդեալը մնաց երկակի: Եթե վերածննդի դարաշրջանը վերադարձ էր դեպի հեթանոսության *ճշմարտություն*, դեպի երկրային կյանք, ապա մեր ժամանակաշրջանը սկիզբն է կյանքի կրոնական իմաստի վերածնության, քրիստոնեական ճշմարտության հետ հեթանոսական ճշմարտության միավորման, աշխարհի միստիկ հիմքում դիալեկտիկ հեղաշրջման հետ կապված մոր դարաշրջանի:

Բարոյա-ճգնական ժուժկալումն ու բացասումը ինքնին դեռևս կրոնական կյանք չէ, որովհետև այս կյանքն այլևս շարունակ շնորհալից է, շարունակ Աստծու հետ դրական և բերկրալից հաղորդակցություն է: Կրոնական կյանքի հիմքում ոչ թե բացասական սխրանքն (բարոյական զոհ, տառապանքներով ինքնախոշտանգում) է ընկած, այլ՝ դրականը, լուսավոր կերպարների ստեղծարարությունը, աստեղնական կյանքի սահմանափակությունից և ստրկությունից ազատագրումը, Աստծու մեջ մարդկային աստվածացումը: Կրոնն անհաշտ հակադրությունների ողբերգությունից և տանջանքից ելքն է, երկրի և երկնքի, մարմնի և հոգու, մարդկության և Աստ-

ծու, անհատի և ունիվերսումի միավորման սկիզբը: Բանը ճգնական ժուժկալման և գեղեցկության բավարարման մեջ չէ, այլ՝ *անձնավորություն* լինելու, աստվածային Տիեզերքում սեփական *միատիկ* եսը հաստատելու: Նոր միատիկան, որին հանգում են ժամանակակից հոգու ճգնաժամն իրենցով անդրադարձնող «դեկադենտները», այլ աշխարհների հետ հաղորդակցության դրական փորձառությունը, միատիկ զգացողության փորձն է կիսաբաց անույն, և նրա ծառայությունը հին, մեզ համար չացազանց նեղ կրոնական գիտակցության, վերացական ճգնավորության և վերացական բարոյախոսության քննադատության մեջ աներկբայելի են: Մենք միատիկ կրոնավորությունը չէ, որ մերժում ենք: Ոչ թե կրոնը պետք է բարոյախոսական լինի, կրոնավորությունը չէ, որ մերժում ենք: Ոչ թե կրոնը պետք է բարոյախոսական լինի, կրոնականությունը՝ կրոնական և միատիկ: Բայց որպեսզի ժամանակակից ճգնաժամից, որը մշտական ողբերգության վերածվելու վտանգին է ենթակա, կրոնական ելք տեղի ունենա, անհրաժեշտ է կուրությամբ սիրահարված միատիկան հաղթահարել, պետք է մերժել ադոգմատիկ միատիկայի հավակնությունը:

Ռուսերենից թարգմանեցին՝

ԳԵՎՈՐԳ ԱՐԴ. ՍԱՐՈՅԱՆ

ԱՐԱՄ ՍՐԿ. ՀՈՎՀԱՆ ՆԻՍՅԱՆ

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱԶԳԵՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր

ՀԱՅԵՐԵՆ ԱՍՏՈՒԱԾ ԲԱՌԻ ԾԱԳՈՒՄԸ

1. Մարդկությունը թեակոխել է մոր հազարամյակ, և հայ ժողովուրդը մոր հազարամյակի սկզբում մշտում է քրիստոնեական իր հավատքի 1700-ամյակը: Քրիստոնեությունը և ի մասնավորի Հայ Առաքելական Եկեղեցին հայության համար եղել են գոյատևման, հոգևոր ամրացման և միասնական ինքնության ամրակուռ խարիսխ բոլոր ժամանակներում: Այսօր ևս այդ հավատքը մեր հոգևոր գլուխն է, որ ամեն ջանք ի գործ է դնում ավելի ամրանալու և ավելի առաջ գնալու համար:

Սուրբ Գրիգորի ջանք բարձրացել էր մի այնպիսի ժամանակում, երբ թվում էր, թե վտանգվում է մեր ժողովրդի ինքնությունը, կարծես թե մախրող հազարամյակներում ստեղծված մեր մշակութային և մտավոր գանձերը ոտնատակ են լինելու, երկյուղ կար, թե մոռացության են մատնվելու մախրող ժամանակների մեջ երևան եկած մերազնյա արժեքները: Եվ այդ ջանք բարձրացավ, որպեսզի մորույն լուսավորվեր ոչ միայն մեր ապագան, այլև պայծառության մեջ պահվեր անցյալը: Ապագայի և անցյալի տարածությունը մոր լույս էր առնում, լցվում էր Քրիստոսի սիրով: Ավանդությունն ազդեցվում էր ապագային, հոգևոր ունեցվածքին ավելանալու էր մոր ստեղծվելիքը, իսկ երաշխիքը մեծ էր:

2. Արդի հայագիտությունը, մասնավորապես հայոց լեզվի պատմության ավելի հանգամանակից ուսումնասիրությունը, կարծում ենք, կարող է իր որոշակի ներդրումն ունենալ Հայ Եկեղեցու մշակութային ժառանգության մորույն վերհանման ու գնահատման գործում: Նկատի ունենք հատկապես հայոց լեզվի բառապաշարի, մանավանդ տերմինաբանության առանձին, գիտական մոր չափանիշներով վերլուծության և ծագումնային առնչությունների մեկնաբանության կարևորությունը:

Հայ Եկեղեցին ունի հարուստ տերմինաբանություն, որն առաջացել է ոչ միայն համապատասխան գրականության թարգմանության բերումով տեղ գտած փոխառությունների և բառային պատճենումների հաշվին, այլև հայերենի բնիկ, այսինքն՝ հնդեվրոպական (հ.-ե.) ծագման բառերի ու բառային անվանումների մոր իմաստային կիրառության (իմաստային փոփոխության) շնորհիվ: Այդ տերմինաբանության մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայ Առաքելական Եկեղեցին այս հարցում ևս եղել է ավանդապահ: Հայոց լեզվի բառապաշարի շատ երևույթներ ծառանգվում են և մոր պայմաններում դառնում որոշակի հասկացությունների անվանումներ: Ուստի հայ եկեղեցական տերմինաբանությունն այսօր կա-

րող է դառնալ առանձին ուշադրության առարկա՝ կապված հայոց լեզվի պատմության առանձին խնդիրների նորովի լուսաբանման, ըստ հնարավորին առավել ճիշտ լուծման համար:

3. Հայ Եկեղեցու ժամասացությունը, արարողակարգի շատ երևույթներ, ինչպես նաև սրբասացություններն ու փառաբանումները լեզվական առումով արտահայտվում են հատուկ ճշանակումներով: Նկատելի է, որ այնպիսի առաջնային անվանումներ, ինչպիսին են առաօտ, Աստուած, արեւագալ, գիշեր, լոյս, մայրամուտ, տէր, ցերեկ և այլն, ունեն վաղճական ճշանակումներ, գալիս են հետավոր անցյալից: Եվ քրիստոնեական Եկեղեցին այդ անվանումներին ոչ այնքան հաղորդել է բոլորովին նոր իմաստ, որքան որ վերափոխաստավորել է քրիստոնեական հավատքին համապատասխան՝ պահպանելով հնդեվրոպական ծագում ունեցող այդ բառերի ամենամախնակա՝ իմաստներն ու ճշանակությունը: Այսպես, օրինակ, «քրիստոնեության մուտքով դիք բառն ստանում է միայն հեթանոսական աստծու իմաստ՝ ի հակադրություն աստուած բառի. ավելի խիստ հակադրությամբ հեթանոսական աստծու համար ստեղծվում է չաստուած բառը»¹: Բառագիտական և իմաստաբանական այս ճիշտ մոտեցումով էլ կարելի է խոսել մյուս բառերի կամ արմատների մասին, սակայն այստեղ մեր ուշադրության առարկան միայն աստուած բառն է, որին էլ անդրադառնում ենք առաջին հերթին:

4. Հայերեն աստուած բառն ունի հնդեվրոպական ծագում, պատկանում է հայերենի բառապաշարի բնիկ շերտին և ունի մի շարք զուգահեռներ ցեղակից լեզուներում: Սույն ձևակերպումը կարող է ճիշտ լինել, քանի որ ի մկատի ենք ունենում մախկնիում եղած մեկնությունների և բացատրությունների տվյալները, հաշվի ենք առնում այս հարցում մինչև այժմ երևան եկած ստուգաբանական փորձերը: Այնուհետև, այս դեպքում ևս համոզե ենք բերում նոր մոտեցում, այն է՝ տվյալ բառի կազմության, նրա հետ առնչություն ունեցող արմատների և բառաձևերի պարզաբանման դեպքում առաջնորդվում ենք լեզվաբանական տարբերակայնության (վարիատիվության) սկզբունքով և ըստ այդմ քննում աստուած բառի ծագումն ու տիպաբանությունը²:

4.1. Հայ մատենագրության մեջ աստուած բառը գործածվել է բավականին բարձր հաճախականությամբ: Այն Հայ Եկեղեցու տերմինաբանության առանցքային, առավել կարևորություն ունեցող միավորներից է: Այդ բառով կազմվել են բազ-

¹ Տե՛ս Գ. Զաֆուկյան, Հայոց լեզվի պատմություն. մախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 385:

² Հմմտ. G. B. Djahukian, A Variational Model of the Indoeuropean Consonant System. HS (HL), 1990, Band 103: Idem, Variative Modelle des urindoeuropaischen und der begriff der partiellen parallelen (isoglossen), "Studia indogermanica", 1997, 1: Վ. Գ. Համբարձումյան, Ակնարկներ հայոց լեզվի համեմատական բառագիտության, Երևան, 1998: V. G. Hambardzumyan, Linguistic Variations and the investigations of the Phonemic Variants of Old Armenian literary Language. "Sixième Colloque Internationale de Linguistique Armenienne. Abstracts", Paris, 1999.

մաթիվ բարդ և ածանցավոր ձևեր, որոնք ևս կիրառությամբ զգալիորեն տարբեր են, գործածության հաճախականությամբ՝ բավականին յուրահատուկ³:

4.2. Բառի ծագումն ու իմաստաբանությունը ոչ միայն գրավել են անցյալի հեղինակների և համեմատաբար նոր ժամանակի բանասերների ուշադրությունը, այլև եղել են համեմատական լեզվաբանության, հատկապես հայերենի մախագրային շրջանի պատմության տարբեր հարցերի լուսաբանմամբ զբաղված թե՛ հայ և թե՛ օտարագի լեզվաբանների առանձին ուշադրության առարկա⁴:

Մինչև այժմ երևան եկած բանասիրական մեկնությունների, աղբյուրագիտական մեկնաբանությունների և ստուգաբանական վերլուծությունների մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայ. աստուած բառի վերաբերյալ տարբեր ժամանակներում և առանձին հեղինակների կողմից ասվածը չի կարելի համարել անառարկելի և վերջնական: Ավելին, դրանք մնում են զանազան կարգի մեկնաբանության և բացատրության սահմաններում, հանդիսանում են բառի ստուգաբանության, առավել ևս տիպաբանության ամենևին չհաջողված կամ մասամբ հաջողված փորձ:

4.3. Աստուած բառի մեկնության և բացատրության, այլև ստուգաբանության պատմությանն անդրադարձել են տարբեր հեղինակներ, հատկապես Հ. Աճառյանը և Յու. Հիլմարսոնը⁵: Այս հանգամանքը նշում է նաև Գ. Զաֆուկյանը⁶, և կարելի է ավելացնել, որ հետազայում ևս երևան են գալիս նույն խնդրի լուծման նպատակով գրված աշխատանքներ⁷:

ա) Հին հեղինակների մեկնաբանությունները և մեկնությունները այլ բան չէին, քան աստուած բառի արտաքին նկարագրություն (աստուած<աստ ած կամ էած, ազդու ած, ազդուած, նաև՝ հաստիչ կամ աստ, յաստիս ածող, աս «ասել, խոսք, շունչ» և տուած «տվող» և այլն): Ըստ հետագա հեղինակների՝ հայ. աստուած բառը կապվում է իրանական, թրակյան կամ փյունիցիական այս կամ այն ձևի հետ (հմմտ. Աժդահակ, գեմդ. *astavañit*, այլև *astvat*, փյուն. *Asduat* «Աստված», թրակ.-փյուն. *Σαβάθιος*, *Σαβάθιος* և այլն): Կարծում ենք, որ հարցի լուծման առումով համեմատաբար ճիշտ ճանապարհով են գնացել, սակայն վերջնական լուծում չեն գտել այն ուսումնասիրողները, որոնք հայ. աստուած բառի մեջ տեսել են հայ. *տու կամ *տուած բաղադրիչը՝ իբրև առանձին միավոր, այն կապելով հնդեվրոպական մյուս լեզուների այս կամ այն ձևի հետ, այլև բխեցնելով հ.-ե. **diu-* արմատից: Վերջին

³ Տե՛ս Մխիթար Սեբաստացի (և աշակերտներ), Բազմիրք հայկազեան լեզուի, հհ. 1-2, Վենետիկ, 1749-1769. Գ. Ալեքսիքեան, Խ. Սիրմելեան, Մ. Ալեքեան, Նոր բազմիրք հայկազեան լեզուի, հհ. 1-2, Վենետիկ, 1836-1837, էջ 320-333:

⁴ Ավելորդ ենք համարում այստեղ մեկամեկ նշել հարցին վերաբերող գրականությունը, մանավանդ որ դրանց անդրադարձել են մախորդ ուսումնասիրողները (տե՛ս ստորև):

⁵ Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ 280-281: J. Hillmarsson, Armenian astuac "God", "Annual of Armenian Linguistics", vol. 4, 1983, pp. 5-15.

⁶ Տե՛ս Գ. Զաֆուկյան, Հայկական շերտը ուրարտական դիցարանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1986, 1, էջ 51-52:

⁷ E. P. Hamp, Remarks on astuac, "Annual of Armenian Linguistics", vol. 5, 1984. pp. 87-89.

դեպքում նկատի ունենք հմերից՝ Կ. վրդ. Ծահմազարյանի, իսկ մոր հեղինակներից՝ Վ. Պիզանիի մոտեցումը⁸:

բ) Վ. Պիզանիին հայ. աստուած բառի համար վերականգնել է հ.-ե. **ag'-diu* - *ag'* ձևը, որտեղ կարևոր է հ.-ե. **diu* - բաղադրիչի առանձնացումը: Հետագա ուսումնասիրողները չեն ընդունում մեծ վերականգնումը⁹:

գ) Գ. Զահուկյանը հայ. աստուած բառի ստուգաբանությունը տալիս է, մախ՝ երկու կարգի հավանականության սահմաններում. «Թեև ստուգաբանության եղած փորձերը չի կարելի վերջնական համարել, բայց բոլոր դեպքերում էլ գերադասելի են բուն հայերենով մեկնաբանելու փորձերը. մասնավորապես մեզ հավանական է թվում այդ բառի տու-ի (*տիւ) մեջ տեսնել հ.-ե. **diu* - «երկնքի հայր, աստված» արմատը և առաջին մասը կապել հ.-ե. *ansu*- հիմքի հետ, որտեղից ծագում են հհմդ. *asu-ra-*, ավեստ. *ahura* «իշխող» բառերը (վերջինիցս ծագում է Ահուրամազդայի անունը, որից հայկական Արամազդ-ը): Անհավանական չէ նաև (հ)աստուած «ի հաստումն ածող, հաստող, հաստատող» մեկնաբանությունը, եթե ենթադրենք հիմ «ածող, բերող» իմաստով (հմտ. գրաբարյան գթած «գթացող» և ողորմած «ողորմացող»)»¹⁰: Այնուհետև, Գ. Զահուկյանը գտնում է, որ աստուած բառը կարող է ունենալ փոքրասիական ծագում¹¹:

Հայ. աստուած և (հ)աստուած բառերի միջև կապ տեսնելը գալիս է ավելի վաղ ուսումնասիրողներից¹², և մեծ կապն իրոք վերջնական և իրական չէ, այլ մնում է հավանականի սահմաններում: Այնուհետև, մեծ կապ տեսնողները որևէ մախաձև չեն վերականգնում, թեև Հ. Պեդերսենը, ոչ անկախ Ֆ. Կլուգեից, մատնանշում է ցեղակից լեզուների այս կամ այն ձևը¹³:

դ) Գ. Մելիքիշվիլին փորձել է հայ. աստուած բառը կապել ուրարտ. *Aš tiuzi* «աստված, աստծու պատկեր» բառի հետ, որը հանդիպում է Արգիշտիի մի արձանագրության մեջ¹⁴: Կարելի է հակառակը կարծել, այն է՝ ուրարտ. *Aš tiuzi* բառի աղբյուրը հայ. աստուած ձևն է: Այսպես կարծելու հիմք են հանդիսանում ոչ միայն ուրարտական արձանագրությունների բնագրերի մոր մեկնաբանությունն ու դրան-

⁸ Հմտ. Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, էջ 281: V. Pisani, Der Gott als "Verteiler" und armenisch Astuac, "Lingua e Culture, 1969, p. 257-269, տե՛ս նաև «Հանդես ամսօրեայ», 1961, 75, էջ 549-562:

⁹ J. Hilmarsson, op. cit., p. 6-7, B.P. Hamp, op. cit., Գ. Բ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն, մախագրային ժամանակաշրջան, էջ 274:

¹⁰ Գ. Բ. Զահուկյան, Հայկական շերտը ուրարտական դիցարանում, էջ 52:

¹¹ Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն, մախագրային ժամանակաշրջան, էջ 274:

¹² Հմտ. Գ. Ալեքսեյան, Խ. Սիրմելեան, Մ. Ալեքսեյան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, էջ 320:

¹³ H. Pedersen, Zur akzentlehre. "Zeitschrift für vergleichende Sprachforschung", 39, 1906, ss. 239, 243. Idem, Kleine Schriften zum Armenischen, Hildesheim-New York, 1982, ss. 107, 111: Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 281:

¹⁴ G. Melikishvili, Urartu und das südliche Transkaukasien, "Georgica", Jena-Thilisi, 1980, ss. 35-36.

ցում տեղ գտած ձևակերպումների ստուգաբանությունը, այլև խեղական լեզուների ուսումնասիրության, հայասերենին վերաբերող տվյալների մեկնաբանման հետ կապված մոր աշխատանքների արդյունքները¹⁵։ Տվյալ դեպքում ուրարտ. AՏ tiuzi ձևն արտացոլում է հայ. աստուած բառի հնչյունական այն վիճակը (հմմտ. աշ, ու>իու, ծ>զ հակադրությունները), որում կարող էր ինչ-որ չափով դեր խաղալ սեպագրական ստանդարտի հետ կապված առանձնակիությունը։

5. Հայերենը հնդեվրոպական այն լեզուներից է, որի գրավոր աղբյուրների, ինչպես նաև ոչ-գրական տարբերակների (բարբառների) տվյալները հարկադրում են համեմատական ուսումնասիրության այնպիսի մոր մոտեցման մշակման, ինչպիսին է տարբերակայնությունը (վարիատիվությունը)¹⁶։ Հայերենի գործառական և տարածքային բոլոր շերտերին վերաբերող լեզվական միավորների տարբերակային (վարիատիվ) ուսումնասիրությունը մեծապես նպաստելու է ոչ միայն հավաստի ստուգաբանություն չունեցող, այլև ամենևին չստուգաբանված բառարմատների և քերականական ձևերի տարբերակված վերլուծության և ստուգաբանության, տիպաբանական վերականգնման և բնութագրման գործին։

ա) Հ. Հյուբշմանի և նրա հետևորդները հետագա ուսումնասիրողների աշխատություններն այս առումով հասել են ամբողջական և գրեթե սպառիչ մի վիճակի, որն այսօր կարող է միայն ամփոփվել հանդիսանալ մոր մոտեցումներով ուսումնասիրությունների ձեռնամուխ լինելու համար¹⁷։ Ի տարբերություն Հյուբշմանի ուսումնասիրության սկզբունքների, որոնք մեզանում լայն ընդունելություն են գտել և դարձել խիստ ավանդական, հայերենի տարբեր կարգի երևույթների ուսումնասիրության գործում մոր, տարբերակային (վարիատիվ) ուսումնասիրությունը կարող է որոշակի հեռանկար ունենալ հատկապես հայոց լեզվի անհայտ ծագման բառերի առումով։

բ) Հնդեվրոպական ծագման հայերեն մի շարք բառեր ու բառաձևեր երևան են գալիս երկու և ավելի տարբերակներով՝ կապված ոչ միայն ձայնավորների տարբեր աստիճանի փոփոխության (ձայնդարձի), բաղաձայններին մախորդող դիրքում դրանց երկբարբառացման (ձայնավոր +յ կամ ի ձայնորդ), ինչպես նաև բաղաձայնների հերթագայության, պատմական զարգացման ընթացքում դրանց հնչարտաբերական տարբերակվածության հետ։ Այսպես, օրինակ, առու-ոռոգ(անեմ), առոգ(անեմ), արեւ-արեգ(ակն), գաղո «ցեխ, տիղմ» - գոռ «ցեխ, գայո», լիճ - լիկ «ավազան, լիճ», լափու(կ) (բրբռ.) - լեփան (բրբռ.), «տափակ քար», խութ «ծովածայր» - խուչ (բրբռ.), խոչ(ընդոտ), հոլոսեմ -հոռոսեմ «ոռոգել», մայր - մո(այլ) «մութ,

¹⁵ Հմմտ. Գ. Զահուկյան, Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հնարավոր հայկական բնույթի մասին. «Պատմա-բանասիրական հանդես», 2000, 1, էջ 128։

¹⁶ Հմմտ. V. G. Hambardzumyan, Linguistic Variations and the investigations of the Phonemic Variants of Old Armenian literary Language, p. 25։

¹⁷ Նկատի ունենք Հ. Հյուբշմանի և նրա դպրոցին հետևող լեզվաբանների կարևորագույն աշխատությունները, որոնց թվարկումն առանձնապես կարևոր չէ, որովհետև դրանք մեծապես հայտնի են, առավել չափով շրջանառության մեջ դրված։

խավար», շող -(ն)շող, պալ «քար» - պաղ, պղպղաքար, տիլ «ցեխ, տիղմ» - տիղ(մ), քերծ-քուրշ «քերծ, ժայռ» բառերը հայերենում ներկայացնում են ժամանակային, տարածքային և գործառական որոշակի տարբերակայնություն¹⁸։ Նման երևույթ-ներին ուսումնասիրությունը հնարավորություն է ստեղծում հաստատելու հընչ-յունական այնպիսի մոր օրենքներ, որոնք կարող են դառնալ միջոց հայերենի տարբերակային ուսումնասիրության համար։

գ) Հայերենի արմատական տարբերակների առանձին քննությանն անդրադարձել է Գ. Զահուկյանը՝ հարցին մվիրելով ոչ միայն ընդհանուր բնույթի, այլև հատուկ աշխատություններ¹⁹։ Այդ կարգի լեզվական իրողությունների ուսումնասիրության մեջ մոր մոտեցման գործադրման դեպքում կարող է պարզվել, որ զարգացման տևական պատմություն ունեցող հայերենն այս դեպքում ևս ներկայացնում է ուշագրավ իրողություններ։

դ) Հայերենի թե՛ մախագրային և թե՛ գրավոր փուլերում երևան եկած տարբերակային ձևերն, անշուշտ, ծագումնային և տիպաբանական քննության առարկա կարող են լինել ոչ միայն ձևական (հնչյունական), այլև իմաստային (արմատի կամ բառի հիմքում ընկած երևույթի անվանման) մկատառումով։ Այս տեսակետից, մեծ հետաքրքրություն են ներկայացնում հայ. աստուած բառի ծագումն ու տիպաբանական բնութագրումը։

6. Հայ. աստուած բառը թե՛ ձևով (բառակազմորեն) և թե՛ իմաստով (հին աշխարհին բնորոշ հասկացության անվանում) կարող է ստուգաբանվել հայերենի միջոցներով և տիպաբանորեն հիմնավորվել ցեղակից լեզուների մեջ առանձնացվող մոր տվյալներով։

Աստուած բառն ունի ոչ թե պարզ, այլ բառակապակցորեն բարդ կազմություն։ Եվ տվյալ դեպքում հաշվի ենք առնում ոչ միայն այդ, այլև հետևյալ հանգամանքները։

ա) Նման կազմություն ունեցող բառի ծագումնային բացահայտման, տիպաբանական վերլուծության իրական հիմք է հանդիսանում հ.-ե. լեզուների հետ անցկացվող հնչյունական և իմաստային համեմատությունը։

բ) Հայերենի բնիկ բառապաշարի մեջ աստուած բառն ունի առաջնային մշամակություն՝ կապված հ.-ե. ընդհանրությունից եկող հասարակական կառուցվածքի և հոգևոր ըմբռնումների մեջ աշխարհի առասպելական և դիցական պատկերի ձևակերպման հետ։

գ) Հայ. աստուած բառի մոր, տարբերակային (վարիատիվ) մեկնաբանության մեջ կարևոր տեղ ունեն ցեղակից լեզուների կրող ժողովուրդների առասպելաբանական և դիցաբանական տվյալները, որոնց զուգահեռներն ու համընկումները

¹⁸ Հմտ. Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. մախագրային ժամանակաշրջան, էջ 206-207։

¹⁹ Գ. Բ. Джаукян, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967, сс. 300-313. Գ. Բ. Djahukian, On Etymological Doublets and Parallels of Armenian, "Annual of Armenian Linguistics", vol. 4, 1983, pp. 23-34.

գտնում ենք հայոց բանավոր, այլև գրական հուշարձանների միջոցով մեզ հասած ավանդությունների մեջ:

6.1. Հայ. աստուած ձևից առանձնացնում ենք առաջին հերթին *տուած բաղադրիչը. հմմտ. խեթ. Šiṽ az «ցերեկվա աստվածություն», պալ. Tiṽ az «նույնը», լուվ. Tiṽ at «(երկնքի) աստված», հհնդ. Dyáuṣ «երկինք», հուն. Ζεύς (սեռ. հոլ. Διός) «աստված», լատ. deus (հլատ. Diouis) «աստված» և այլն²⁰:

*Տուած ձևը նույնպես բաղադրելի է, քանի որ ծագումնաբանորեն առնչվում է ցեղակից լեզուների այնպիսի ձևերին, որոնք առհասարակ արտահայտում են «աստված» իմաստը՝ ի վերջո կապվելով «լույս տալ», «փայլել», «ճառագել» (նաև՝ «թվալ», «երևալ») իմաստներին²¹: Ըստ այսմ, հայ. *տուած, այլև (աս)տուած անվանումները նախնական իմաստով նշանակում են «լույս», «լույս տալը»:

ա) Հայ. *տուած ձևի մեջ առանձնացնում ենք *տու (հնչումով՝ *տոու) արմատը, որին զուգահեռ են՝ խեթ. š iuš (հայց. հոլ. š iun, սեռ. հոլ. š iunaš , հմմտ. հայ. Սանաս-ար) «աստված», լուվ. ^ԸTiṽ az «աստված» հհնդ. Dyáuṣ «աստված» (նաև՝ dyāuṣ «երկինք», հմմտ. ուրարտ. Diauṣ i, որը թերևս փոխառություն է միտ. արիե-րեանից, կամ վերջինիս միջոցով՝ հայերենից), հուն. Ζεύς «(երկնքի) աստված» (սեռ. հոլ. Διός), միկ. հուն. di-we, հլատ. Diouis (սեռ. հոլ. Jouis) «Յուպիտեր», օսկ. Dīuwei «Յուպիտերին» և այլն²²:

բ) Բերված ձևերի հիմնական մասն, իբրև «երկնքի կամ արևի աստված» հասկացության անվանում, ցեղակից լեզուներում համընդ է գալիս որպես հատուկ անուն: Դրանց համար վերականգնվում է (ընդհանուր իմաստով) հ.-ե. *t^hj eṽ - «աստված» բառարմատը: Վերջինս ունի իր կանոնավոր ձայնավորմամբ հ.-ե. *t^h eṽ y o- տարբերակը. հմմտ. հհնդ. devá- «աստված», ավեստ. daē va- «դև», լատ. deus «աստված», divus «աստվածային», հիոլ. dia (սեռ. հոլ. dé) «աստված», հիւլ. tívar «աստվածներ», պրուս. deiws «աստված», լիտ. diē was «աստված» և այլն²³: Այս ձևից է թերևս նաև հայ. դի-ք (<*տի-եւ, հնչումով՝ *տի-եու) «աստվածներ» բառը²⁴:

²⁰ Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы: Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, 1-2, Тбилиси, сс. 36, 46, 223, 226-227, 242, 777:

²¹ Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, указ. соч., с. 791: К. Watkins, "God", "Antiquitates Indogermanicae", Innsbruck, 1974, ss. 101-110:

²² Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, указ. соч., сс. 227, 791.

²³ Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, указ. соч., с. 791.

²⁴ Հմմտ. Գ. Ջաֆուկյան, Հայկական շերտը ուրարտական դիցարանում, էջ 49:

գ) Այնուհետև, արմատի մյուս՝ երրորդ տարբերակն է հ.-ե. *t'iy - «աստված» ձևը, որի համար նախնական էր «օր» իմաստը²⁵: վերջինս լավագույնս արտացոլված է ոչ միայն անատոլիական լեզուներում, այլև հայերենում. հմմտ. անատ. *Tiu- (խեթ. Šiu-, լուվ. Tiū a-, այլև Tiū at- «արևի աստված», պալ. Tij a- և այլն), ինչպես նաև (ըստ իս)՝ հայ. տիւ «ցերեկ», թերևս նաև՝ ուրարտ. Šiy (inō) «աստված» (դիցանուն)²⁶, խուտ. Šimigi): Գ. Ջահուկյանը հայ. տիւ-ը բխցնում է հ.-ե. *dei- ձևից²⁷: Ավելացնենք, որ հ.-ե. *t' iy - արմատի այլ լեզուներում առկա արտացոլումներից են՝ հհմդ. div-, divya- «աստվածային» (հմմտ. հայ. տուրնջեան), հուն. δῖ ος, լատ. dī us («*diu ios «աստվածային»)²⁸:

Ըստ այսմ, հ.-ե. նախալեզվի համար վերականգնվում է տարբերակային երեք վիճակ՝ արմատի ձայնավորման տարբեր աստիճաններով, որոնք ոչ միայն մյուս լեզուներում, այլև հայերենում ունեն իրենց վաղնջական արտացոլումները, և դրանք կարող են վերլուծության առնվել արմատականության մեջ կիրառելի տարբերակայնության (վարիատիվության) սկզբունքների գործադրումով:

6.2. Ինչպես տեսնում ենք, հ.-ե. ընդհանուր վիճակի համար վերականգնվող տարբերակային արմատներից միայն մեկն է, որ ավելի հին է, իսկ մյուսները համդիսանում են նրա հետագա ձևացումները՝ տարբերակները (հմմտ. *t'iy -, այլև *t'ij eյ -, *t'eij y -):

ա) Հ.-ե. *t'eij -y - > հայ. *տեյ-ւ (հնչմամբ՝ *տեյ-ու) և *t'ij -eյ - > հայ. *տի-եւ (հնչմամբ՝ *տի-եու) ձևերը ներկայացնում են հնդեվրոպական արմատի ձայնավորման աստիճանները՝ իբրև ձայնդարձի առաջին և երկրորդ աստիճաններ: Այլ կերպ ասած՝ լծորդային հիմքեր են, որոնք ենթադրում են լրիվ և զոր աստիճան²⁹: Հմմտ. ուրարտ. Šiy inō , նաև հայ. Շի(ն)ու-(ն)այր (հետագայում տեղանուն):

բ) Հայերենի առումով նկատենք, որ համեմատաբանների մի մասն առաջին աստիճանը դիտում է երկրորդային, իսկ մյուսները գտնում են, որ առաջին աստիճանի հիմքերից կազմված, այսպես կոչված, արլատիվ հոլովից առաջացած ձևերը, ունենալով նաև հ.-ե. *-n- ածանց (հավելյալ հ.-ե. *-y -/*-eյ - ածանցների), հավասարում են այն, որ տվյալ դեպքում գործ ունենք, նախ՝ այդ ածանցով բառերի տարա-

²⁵ Վ. Պիզանին և Գ. Ջահուկյանը վերականգնում են հ.-ե. *diu -, *diu- «երկնքի հայր, աստված» արմատը: St'au V. Pisani, Ազվ. աշխ., Գ. Ջահուկյան, Ազվ. աշխ., էջ 52:

²⁶ Հմմտ. Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, указ. соч., с. 792. Այլև Գ. Ջահուկյան, Ազվ. աշխ., էջ 45, 48-49:

²⁷ Հմմտ. Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 57, 84: Նույնի՝ Հայկական շերտը ուրարտական դիցարանում, էջ 45:

²⁸ Հմմտ. Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, указ. соч., с. 242.

²⁹ Երկրորդ դեպքի համար հմմտ. Է. Բենվենիստի «երկանդամները» («փնտմները»): St'au E. Benveniste, Origines de la formation des noms en indo-européen, Paris, 1935, pp. 170-171, etc.

հիմք (հետերոկլիտիկ) հոլովմամբ հետ (հմմտ. հայ. մանուկ>մանկան<*մանուկն, աղջիկ>աղջկան<*աղջիկն և այլն), երկրորդ՝ առաջին աստիճանի ձևը գոյություն է ունեցել ման հ.-ն. ընդհանրության շրջանում, թեև այդուհանդերձ այն ավելի ուշ գոյացում է, քան երկրորդ աստիճանինը³⁰:

գ) Այս երկրորդի օգտին է խոսում այն փաստը, որ հ.-ն. *է՛լ -ԵՄ -> հայ. *տիեռ (հնչմամբ՝ *տիեռու) ձևից առաջացած և մախահայերենում գործածված տիւ (հընչմամբ՝ *տիու) բառը հիմ գրական հայերենում հոլովվում է տարաբանաբար (հետերոկլիտիկ) հոլովմամբ՝ տիւ>տու(ը)ն-ը-եան (հմմտ. վաղի>ի վաղ(ը)ն-ը-եան), որ մշակակում է, թե մախագրային շրջանում տիւ, վաղի և այլն ձևերն ունեցել են այդ -ն ածանցը (հ.-ն. *ո-): Ըստ այդմ վերականգնում ենք հայ. *տիւն (հնչմամբ՝ *տիուեն)<*տիեռն (հնչմամբ՝ *տիեռուեն)³¹: Այս ձևի մեջ, իր հերթին, առանձնացնում ենք մախ-ն (<հ.-ն. *ո-), այնուհետև՝ -ւ-/-եւ- (<հ.-ն. *ւ-//*-ԵՄ - ածանցները, որոնք հետագա ձեռքբերում են և *տի- արմատից գոյացնում են *տիւ-//*տիե տարբերակները, որոնք էլ, իրենց հերթին, հիմք են հանդիսանում -ն ածանցով ձևերի վերականգնման:

դ) Իսկ հ.-ն. *է՛լ - արմատից ունենք ոչ միայն հայ. տիւ «օր» բառը (հմմտ. խեթ. šiy att- «օր», լատ. diē s «օր», հիոլ. diē «օր», այլև հինգ. dīnā «ցերեկը». հմմտ. náktam-divam «գիշերուօր»³², հուն. ἑγδιος «կեսօրին», լատ. dius «ցերեկը»³³, այլև հայ. *տու- (հնչմամբ՝ *տուու) ձևը, որը ոչ այլ ինչ է, քան բառակազմական հիմքի ձայնավորությամբ առաջացած տարբերակ, այն է՝ տի-ւ/տո-ւ (հնչմամբ՝ *տի-ու/տո-ու):

ե) Եվ վերջապես, հ.-ն. *է՛լ - ԵՄ - տարբերակից, որն ավելի ուշ ձևացում է, քան մյուս տարբերակները (հատկապես՝ *է՛լ - ԵՄ)³⁴, թերևս ծագում է հայ. տեւ-եմ (<*տեիւ-եմ, հնչմամբ՝ *տեիու-եմ) բայի տեւ(*տեիւ, հնչմամբ՝ *տեիու) «ցերեկը, ցերեկվա տևողությունը» արմատը, որին այստեղ չենք անդրադառնում (թողնելով մեկ այլ առիթի):

6.3. Հայ. *տու/տիւ բառ(արմատ)ի տարբերակային վերականգնումը և ըստ հնարավորին լիարժեք ստուգաբանությունն ամենից առաջ բախվում են հ.-ն. ընդհանրության շրջանից եկող արմատի ածանցավոր և անածանց տարբերակների առանձնացմանը. մի կողմից գործ ունենք «ձայնավոր» արմատների՝ *է՛լ ԵՄ -

³⁰ Տե՛ս Դ. Բ. Գամկրելիձե, Вяз. Вс. Иванов, указ. соч., с. 226-227: Վ. Գ. Համբարձումյան, Հայերեն աղջիկ բառի ստուգաբանությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1997, 2, էջ 149-152:

³¹ Հմմտ. ման. *վաղիւն (հնչմամբ՝ *վաղիուեն)<*վաղիեւն (հնչմամբ՝ *վաղիեուեն):

³² Հմմտ. ման. սան. divé-dive «օրեցօր» (տե՛ս A. Meillet, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936, p. 50, Դ. Баррыу, Санскрит, М., 1976, с. 264):

³³ Հմմտ. Դ. Բ. Գամկրելիձե, Вяз. Вс. Иванов, указ. соч., с. 791.

³⁴ Հմմտ. Դ. Բ. Գամկրելիձե, Вяз. Вс. Иванов, указ. соч., с. 241-242.

*,t'ej և -, իսկ մյուս կողմից՝ «անածանց» (Schwebeablaut) արմատի՝ *t'iy -, տարբերակների՝ ընդհանրության շրջանում ունեցած հարաբերակցային գործընթացի հետ:

Ըստ այսմ անհրաժեշտ ենք համարում մշելու, որ հ.-ե. լեզուներից հատկապես հայերենը մերկայացնում է ոչ միայն ընդհանրության շրջանից եկող, այլև ինքնուրույն զարգացման ընթացքում առաջացած արմատական տարբերակայնություն: Թե՛ մեկ և թե՛ մյուս կարգի տարբերակները հին հայերենում մերկայանում են ոչ միայն բառային ձևի (հիմքակազմության), այլև իմաստի հետ կապվող բազմազանությամբ, որը պայմանավորված է հնից եկող, ինչպես մաս զարգացման պատմական և մշակութային մոր հանգամանքներով: Հյուսիսում և մեր դարիցի մերկայացուցիչները գործ են ունեցել միայն հին գրական հայերենի մեջ տեղ գտած փաստերի հետ, իսկ դրանց առաջացման և տարբերակվածության խնդիրը դուրս է մնացել ավանդական ուսումնասիրությունների ոլորտից:

ա) Հ. Աճառյանը, ոչ անկախ Հ. Հյուսիսում և Ա. Մեյերից, հայերենում առանձնացնում է տի «օր», տի «տարիք հասակ», տի «ցերեկ, ոչ գիշեր» և տեր (հնագույն գրչություն՝ տեր, այլև տերություն < տիրություն. հմտ. հայ. լեզու < *լիզու, լատ. lingua < *dingua «լեզու») տեր, մեծ, մակ՝ «աստված» բառերը՝ իբրև հ.-ե. ծագման, ընդհանուր աղբյուրից բխող տարբերակային ձևեր՝ իմաստային որոշակի տարբերակվածությամբ: Աճառյանը մուլմպիսի ծագման է դիտում մակ հայ. դիք «աստվածներ» բառը, այնինչ հայ. դե «հոգի» բառը համարում է իրանական փոխառություն, իսկ հայ. դիք «վհուկ, կախարհ» բառը տալիս է որպես «անստույգ բառ»³⁵: Ավելին, տիեզերք և տիկին բառերի տի բաղադրիչը դիտվում է իբրև «մեծ» իմաստի կրող, որն ամենայն հավանականությամբ ավելի մախնական չէ, քան «երկինք» և «երկնքի աստված» իմաստները: Եվ ըստ այսմ, կարծում ենք, որ միանգամայն հասկանալի է դառնում Երեմիա Մեղրեցու բառարանում (էջ 311) հանդիպող, հիշյալ տի արմատի պարզ և երկբարբառային ձայնավորմամբ արմատական տարբերակներից կրկնավոր բարդություն հանդիսացող տիք եւ տայք բառը, որ Աճառյանը բերում է բառարանի՝ «խորխոր կոչին» իմաստային մշանակումով³⁶:

բ) Գ. Զահուկյանը, հենվելով մակ մախորդ ուսումնասիրությունների տվյալների վրա, գտնում է, որ մի կողմից՝ հ.-ե. ընդհանուր *dei- ձևի կոնկրետ տարբերակներից են բխում հայ. տե, տի «օր» (սրանց հետ մակ տեր, տիկին), տի «օր, ցերեկ», ինչպես մակ երկին «երկինք», (ս)երկ «այսօր», իսկ մյուս կողմից՝ հ.-ե. ընդհանուր *deu- ձևի կոնկրետ տարբերակներից՝ հայ. տեւեւ «երկարել, ձգվել», տոկ «տևակա-

³⁵ Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 1, Երևան, 1940: Նույնի՝ Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 657-658, 671-673: Հմտ. Վ. Համբարձումյան, Մովսես Խորենացու «Տեմալ Սաթեհի տիկին» հատվածը, «Պատմա-բանասիրական հանդես», 1995, 2, էջ 235:

³⁶ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, էջ 411:

նություն, դիմացկունություն», երկար «տևական, ձգված», երկայն «երկար» ձևերը³⁷։ Դրանցից, օրինակ, երկին ձևը մշվում է հարցականով, և դա իրոք այդպիսին է՝ անկախ այդ բառի ծագման վերաբերյալ գոյություն ունեցող բազմաթիվ ստուգաբանական փորձերից³⁸։

զ) Հ.-ե. *t'iy -, *t'j eյ - և *t'ej y - տարբերակային արմատները, բնականաբար, ունեցել են իրենց արտացոլումները վաղմջական (հ.-ե. ընդհանրությունից առանձնացած և ինքնուրույն զարգացման ուղին բռնած) հայերենի մեջ։ Այստեղ անհրաժեշտ ենք համարում միայն մշելու, որ դրանցում ամենամախնականը «լույս» իմաստն է, որից հետագայում ածանցվում են «(երևացող) երկինք» կամ «ցերեկ» իմաստները։ Հ.-ե. լեզուն կորողների առասպելական (բանաստեղծական) պատկերացումներում այդ հիմնական գաղափարը մատնամշվում է ոչ միայն ըստ էության՝ իր տարբեր կարգի հատկանիշներով («մեծություն, մաքրություն, տևականություն և այլն»), այլև դրանց մկատմամբ արտահայտվող վերաբերմունքով՝ վերագրումներով («թուիլ, խօսիլ՝ զովերգել, պաշտել և այլն»)։ Հմմտ. միմջքիստոնեական Թուե-լեաց երգեր, քրիստոնեական Արևազալի երգեր արտահայտությունները, ինչպես նաև «Արդ բարիոք է արեգակն և գեղեցիկ բնութեամբ» (Եզնիկ Կողբացի) և այլն³⁹։

Ավելացնենք, որ հ.-ե. *t'j eյ - > հայ. *տի-եւ (գրաբարում՝ թիւ, թուիմ, հմմտ. հոմ. հուն. δέσπο «թվաց, թվում էր», δόλος «տեսանելի, երևացող»)՝ թուի «թվում է» ձևերի մախնական իմաստն է «ասել, պատմել», իսկ հետագայում նաև՝ «զովերգել (Աստծուն)» (բանավոր մտածողությամբ՝ «Աստված կանչել»), «արևազալը զովերգել»։ Եվ այդ իմաստ(ներ)ը կան ուրարտերենին անցած *tia(u)* «ասել, պատմել» բառում, որից էլ ամենայն հավանականությամբ, ամենամախնական իմաստի պահպանումով՝ ուրարտ. *Diau(e)h i > Sայք* տեղանունը⁴¹։

Իսկ հին հայ. տէր (տի-այր) և տիկին բաղադրությունները մի տեսակ նորակազմություն են գրաբարի մեջ՝ թերևս հակադիր եզրեր լինելու գործառական բաշխվածությամբ, սկզբնապես որպես այդպիսին, այնուհետև քրիստոնեական ոլորտի առումով։ Այնինչ, մախագրաբարյան, եթե ոչ նաև ավելի վաղ ժամանակներում պիտի ունեցած լինեն ոչ միայն ձևային, այլև իմաստային մախնականություն։ Հայ.

³⁷ Г. Б. Джаукян, Л. А. Сараджева, Ц. Р. Арутюнян, Очерки по сравнительной лексикологии армянского языка, Ереван, 1983, с. 32-33, 56-57: Գ. Զահուկյան, Հայոց լեզվի պատմություն. մախագրային ժամանակաշրջան, էջ 117-118, 217 և այլն։

³⁸ *Երկին* բառի նոր ստուգաբանության մեղադրանքն այնքան անհիմն է, որ միայն ելնելով հիմքում ընկած հ.-ե. արմատի իմաստային (թեմատիկ) կատրությունից, այլև մկատի ունենալով հայերենում այդ արմատի տարբերակային արտացոլումների ուսումնասիրման անհրաժեշտությունը։

³⁹ Մ. Աբեղյանը *թուեղեաց երգեր* արտահայտությանը տվել է այլ բացատրություն։ Տե՛ս Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ. Երկեր, հ. Ը, Երևան, 1985, էջ 84-89։

⁴⁰ Տե՛ս Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, указ. соч., с. 227, 791.

⁴¹ Ըստ Մ. Խաչիկյանի՝ ուրարտ. *tiwə* «խոսք, իր՝ բան», *tiža*, *tiž-nə* «նույնը», *tuwə* «աստծու հատկանիշը»։ Տե՛ս М. Л. Хачикян, Хурритский и урартский языки, Ереван, 1985, сс. 48-49.

տէր (տի-այր) բառի (հարաբերականորեն) մախնականը, թեկուզ միջանկյալ օղակ, պիտի եղած լինի *տի-(հ)այր (*տիւ-(հ)այր) <հ.-ե. *t'iey (s)-p^[h]er- «հայր-աստված» (հմտ. հհմդ. Dyáus pitá «հայր-աստված», «Երկինք-աստված», հուն. Ζεύ πάτερ (կոչ. հոլ.), լատ. Iūpiter «Թուպիտեր», լուվ. tatiš Tiü az «աստված-հայր», մակ հին ռուս. Спудогъ և այլն⁴²: Հմտ. մակ մի կողմից՝ խոռ. Teš ub ու-րարտ. Teyš օ ba//Teyš ebā «ամպրոպի աստված» և մյուս կողմից՝ ուրարտ. Tošpā (<*Tor°spā, հմտ. աքքադ. Turšpa, ընդ որում Tur-ի համար՝ հիսլ. Týr «պատերազմի աստված», այլև Tušpa⁴³: Իսկ տիկին բառի դեպքում հավանաբար կատերազմի է իբրև մախնական դիտել *տի-մայր (<*տիւ-մայր, հմտ. Դեմետրե<հուն. Δημήτηρ «երկրագործության աստվածուհի») ձևը՝ այն հանգեցնելով հ.-ե. (վերականգնելի) *t'iey (s)-mā t^[h]er- «մայր-աստված» բաղադրությանը, եթե ընդունենք, որ իմաստային և գործառական ինչ-ինչ հիմունքներով պիտի տեղի ունեցած լինի մայր բաղադրիչի փոխարինում կին բաղադրիչով, ընդ որում բառիմաստային տարբերակների բաղադրության (կոմտամիմացիայի) պայմաններում:

6.4. Վերևում հայ. *տուած ձևի մեջ առանձնացրիք *տու (հնչումով՝ *տոու) արմատը (հիմքակազմական բաղադրիչը), ուստի -ած բաղադրիչը ներկայանում է իբրև առանձին երևույթ: Վերջինիս վաղնջական և հնագույն հայերենի փուլերում ունեցած հիմքակազմական (բառակազմական) արժեքի մասին մինչև օրս չունենք հավաստի բացատրություն:

ա) Այդ -ած բաղադրիչը մինչև այժմ քննության է առնված հին գրական հայերենի տվյալների հիման վրա՝ ծագման պարզաբանմանը վերաբերող որոշ (հնարավոր համարվող) մեկնաբանումներով⁴⁴:

գ. Զաֆուկյանը գտնում է, որ հին հայ. -ած վերջածանցը մի կողմից հանդես է գալիս այնպիսի կազմություններում, որոնք «հետագայում դերբայացել են», մյուս կողմից կազմել է այնպիսի ձևեր, որոնք թերևս տարբեր են մախորդ տիպի կազմություններից: Իսկ վերջածանցի ծագման վերաբերյալ նշվում է, որ «ծագում է ածել բայի արմատից (հմտ. գրած «գութ ածող»): Այս ամենով հանդերձ նշվում է մակ, որ «հնարավոր է համարվում մակ գոյականակազմ -ած-ի հնդեվրոպական ծագու-

⁴² Ավելի մանրամասն տե՛ս T. B. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, указ. соч., с. 777, 791-797. Հմտ. C. Watkins, The American Heritage Dictionary of Indo-European Roots, Boston, 1985, pp. X VII, 10.

⁴³ T. B. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, указ. соч., с. 36, 271, 799. Հմտ. М. Л. Хачикян, указ. соч., сс. 19, 34-36, 40, 45, 48, 58-59, 74, 117, 134, 143, 147.

⁴⁴ Տե՛ս J. Greppin, Classical Armenian nominal suffixes, Wien, 1975: Գ. Զաֆուկյան, Հին հայերենի վերջածանցների ծագումը, «Պատմա-բանասիրական հանդես», 1994, 1-2, այլև 1995, 1: Նույնի՝ Հին հայերենի վերջածանցների ծագումը, «Հայոց լեզվի համամատական ընդհանուր դասընթաց», պրակ. 2, Երևան, 1998, էջ 5-48:

մը՝ հ.-ե.՝ *g' > հայ. ծ անցմամբ. հմմտ. հուն. ἄρπας, -άρος «թալանչի, ավարառու, թալան, ավար»՝ հղելով Գրեպիհի հիշյալ աշխատանքի⁴⁵:

բ) Այն, որ հայ. -ած. բաղադրիչն ունի հ.-ե. ծագում, որը կարելի է հիմնավորել համեմատական լեզվաբանության մոտադրյալ տվյալներով, այլև այդ տվյալների տարբերակային (վարիատիվ) քննության եղանակով, որն է կասկածի տեղիք չի կարող տալ: Կարծում ենք, որ այդ մասնիկը մոյմպես հանդես է գալիս անվանական ձևերի այնպիսի մշակակումներով, որոնք հին գրական հայերենում առանձնացել են իբրև այս կամ այն իմաստային և գործառական արժեքի կրողներ:

Հայ. -ած. մասնիկը ծագում է հ.-ե. *-os ձևային: Վերջինս, ինչպես մասն *s ձևային հ.-ե. լեզուներում, իբրև անվանական վերջավորություններ, հանդես էին գալիս ձևակազմական և իմաստաբանական որոշակի արժեքներով: Սա հաստատվում է հնդեվրոպական լեզվաբանության մոտադրյալ ուսումնասիրությունների տվյալներով: Այսպես, Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովը, ոչ անկախ Կ. Օիլդսից, գտնում են, որ հ.-ե. *-os և *-s վերջավորությունները կազմում էին շնչավոր կամ որպես այդպիսին ըմբռնվող առարկաների դասային անվանումների ձևերը՝ ի հակադրություն հ.-ե. *-om վերջավորության, որը կազմում էր ոչ շնչավոր (անշունչ) առարկաների դասային անվանումների ձևերը: Այնուհետև, առաջին դեպքում գործ ունենք մերգործող (ակտիվ), իսկ երկրորդ դեպքում ոչ մերգործող (օբյեկտ հանդիսացող) դասի հետ: Դրանք ըստ էության անունների ուղղական և հայցական ձևերի մշակակիչներ (վերջավորություններ) են⁴⁶:

Ըստ այսմ, հայ. *տուած ձևը կապվում է հ.-ե. *t'icy -os/*t'icy -s «աստված» ձևի հետ. հմմտ. հինգ. deváh , ավ. daēva- «դև (մախմական իմաստով)», լատ. diūs «աստված», հիւլ. Τύρ («պատերազմի» աստված», լիտվ. diēvas «աստված» և այլն⁴⁷:

Հայ. *տուած ձևը գրաբար մատենագրության մեջ չի գործածվել, այլ հանդես է գալիս աստուած ձևի մեջ, որն էլ կազմված պիտի լիներ մախագրաբարյան (հնագույն կամ վաղմջական հայերենի) փուլերում: Եվ հին գրական հայերենում մասն կազմությունները թերևս դիտվել են իբրև առանձին բառեր, սակայն մախկիմում պիտի ունեցած լինեն բառակազմական (շարահյուսական միավորի) արժեք. հմմտ. առաւօտ (առաւաւտ) բաղադրյալ կազմությամբ բառը՝ ոչ միայն ձևաիմաստային, այլև շարահյուսական-գործառական առումով:

6.5. Հայ. աստուած (<աս-տուած) բառի աս- բաղադրիչը (իբրև առանձին արմատ) ամենայն հավանականությամբ ծագում է հ.-ե. *Has - «կրակարան, կրակի աղբյուր՝ կրակ» (հիմքում՝ «արև») արմատից: Ավանդական համեմատաբանության մեջ այդ արմատն ընդհանուր առմամբ ներկայացվում էր առանց կոկորդային տարր պարունակող տարբերակի առանձնացումով, այսինքն՝ «կրակ», «այրել», ինչպես մաս «չորանալ, մոխրանալ», «մոխիր» իմաստային տարբերակների կրող էր

⁴⁵ Գ. Զառուկյան, մշվ. աշխ., էջ 55, այլև 8:

⁴⁶ Տե՛ս Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, указ. соч., с. 271.

⁴⁷ Նույն տեղում, այլև էջ 375-379:

հանդիսանում հ.-ե. *as- արմատը⁴⁸: Նորագույն ուսումնասիրություններում այդ արմատին հատկացվում է ավելի հետազա իմաստ(ներ)՝ «օջախ», «զոհասեղան, զոհարան»: Հմմտ. խեթ. Ի ašša- «օջախ», մակ.՝ «զոհասեղան», լատ. āra «զոհասեղան», այլև «զոհ», օսկ. aasai «օջախի մեջ» և այլն⁴⁹: Ընդ որում գտնում են, որ այդ արմատի պարզական տարբերակը (կոկորդային տարրի կորստով) երևան է գալիս հ.-ե. առանձին բարբառային խմբերում (քացի անատոլիականից)⁵⁰:

Այնինչ հայերենում, ինչպես կարելի է նկատել ստորև, ունենք թե՛ կոկորդային տարր պարունակող և թե՛ առանց կոկորդային տարրի հանդես եկող արմատական տարբերակներ: Տվյալ դեպքում կարելի է ասել, որ հայերենը բռնում է միջին դիրք հ.-ե. մեծ բարբառային խմբավորման մեջ: Ավելին, հայերենում ունենք հ.-ե. *Has- կամ *as- արմատի ածականով և առանց ածականի տարբերակային արտացոլումներ:

ա) Ավանդաբար ընդունված է, որ հայ. ազագել «չորացնել», աճիւն «(կրակի) մոխիր, ոսկորների մնացորդ հող» և ոստին «ամբողջի, չոր, ցամաք» բառերը ծագում են հ.-ե. *as- (իմա՝ *Has-) արմատից, ընդ որում վերջինիս պարզ կամ *g (մակ. *gh), *d ածականներ պարունակող տարբերակներից⁵¹: Դժվար չէ նկատել, որ հիշյալ բառերն ունեն իմաստային որոշակի ընդհանրություն՝ կապված իրենց բուն կամ մասնական նշանակման հետ:

բ) Գ. Զաֆուկյանը, նկատի ունենալով Հ. Հյուբշմանի և նրան հետևողների տեսակետները, հայ. հաս- «հասնել» արմատը բխեցնում է հ.-ե. *enek՝ ձևից⁵²: Նախ, է. Բենվենիստը ժամանակին դեմ է եղել Հյուբշմանից եկող մեծ ստուգաբանությանը՝ գտնելով, որ վերջինս հաս- արմատն անտեղի է դուրս բերել հայերենի իրանական փոխառությունների շարքից՝ նրան հատկացնելով հ.-ե. ծագում⁵³: Այնուհետև, եթե հայ. հաս- արմատին տրված լինել ավելի հիմնավոր ստուգաբանություն, և եթե վերջինիս հետ՝ ըստ ընդհանուր աղբյուրից ծագելու և ոչ թե փոխառություն լինելու ճանապարհով բացատրվեին մյալար. has «տարիք, ծագում», hasenag «ի բնե, ըստ ծագման» բառերը, ապա կարծում ենք, որ Հյուբշմանի մոտեցումն ավելի հիմնավոր կարող էր լինել: Ըստ այսմ կարծում ենք, որ հայ. հաս- (մակ. հաս-ակ «տարիք, տիք», հաս-ու «տեղյակ, վերահասու», հաս-ուն «լրումին հասած, հասունացած», հաս-կ-անալ «հասու լինել, իմանալ») արմատը ծագում է հ.-ե. *Has ձևից, ընդ

⁴⁸ St'u J. Pokorny, Indogermanisches etimologisches Wörterbuch, 1-2, Bern-München, 1959-1969: K. Watkins, op. cit., pp. 3-4.

⁴⁹ Հմմտ. Т. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, указ. соч., с. 158, 203, 699, 808, 884.

⁵⁰ St'u T. В. Гамкрелидзе, Вяч. Вс. Иванов, указ. соч., с. 203.

⁵¹ St'u H. Hübschmann, Armenische Grammatik, Teil 1, Leipzig, 1897, S. 464, այլև Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 46-47, Հ. Սուքիասյան, Ածականը հայերենում, Երևան, 1986, էջ 136:

⁵² Գ. Զաֆուկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 52, 122:

⁵³ E. Benveniste, Éléments de parthes en arménien, "Revue des études arméniennes", 1964, tome 1, pp. 1-2:

որում կոկորդային տարրի պահպանումով, որն անշուշտ արմատի հնագույն լինելու հատկանիշ կարող է լինել:

զ) Հայերենում եզակի կիրառությամբ ունենք առանձին հաս «տիվ, ցերեկ» բառը, որն ըստ Աճառյանի հանդիպում է միայն Երեմիա Մեղրեցու բառարանում⁵⁴: Ամենայն հավանականությամբ այդ բառը մույնպես ծագում է հ.-ե. *Has- արմատից:

դ) Հին գրական հայերենում գործածվելիս է եղել մաս աստել «ամուսնության համար նշանած ընտրել, աղջիկ ուզել» բայը, որից և կազմվել են աստոջ «աղջիկ ուզող» փեսացու», հաստիլ «աղջկա նշանվելը» բայաձևերը: Ընդ որում աստ-//հաստ-տարբերակային արմատը մինչև այժմ չունի որևէ հավաստի ստուգաբանություն⁵⁵:

Գ. Ղափանցյանը փորձել է հայ. աստել բայի ծագումը կապել խուռ. ašti «կին, կին ամուսին» ձևի հետ՝ իբրև հայերենին անցած հնագույն փոխառություն, որը բավականին խոցելի է թե՛ հնչյունական և թե՛ մախնական իմաստաբանության տեսակետից: Գ. Զաֆուկյանը, մկատի ունենալով մաս աստել բայի մեծ ստուգաբանությունը, գրում է, որ «կան դեպքեր, երբ դժվար է ընտրություն կատարել սեմական և ոչ սեմական հին ու նոր աղբյուրների (խուռերեն, ուրարտերեն և այլն) միջև»⁵⁶: Եվ մեծ վերապահությամբ էլ աստել բայը տեղ է գտնում Գ. Զաֆուկյանի կողմից առանձնացվող խուռերենից կատարված փոխառությունների ցանկում⁵⁷:

Այնինչ, հակված ենք մտածելու, որ եթե հնարավոր լինի աստել//հաստիլ բառի հիմքում ընդունել «տարիքի լրանալը, հասունացած տարիքի լինելը» մախնական իմաստը, ապա կարելի կլինի կարծել, որ հայ. աստ-//հաստ- արմատը ծագում է հ.-ե. *Has- արմատից (հմմտ. հայ. ոստ-ին):

ե) Հին գրական հայերենում գործածված է մաս բնիկ հաստ «ամուր, հաստատուն, ուժեղ» արմատական բառը, որը ծագում է հ.-ե. *pasto-(- արմատից⁵⁸: Այդ արմատից ունենք հաստել «ամրացնել, հաստատել, ստեղծել», հաստիչ «ստեղծող», հաստուած «ստեղծված, կերտված» ձևերը: Սույն հաստ արմատական բառը և նրանից կազմված ձևերը արտահայտության պլանում որոշակիորեն համընկնում են վերը նշված հաստ- (<հաս-) արմատին, թեև բովանդակության պլանում ունեն բոլորովին տարբեր նշանակումներ: Գրավոր շրջանի հայերենում հաստել, հաստիչ, հաստուած բառերը, իբրև «ստեղծել», «ստեղծող» և «ստեղծված, կերտված» իմաստների կրողներ, շփոթվել են Աստուած «արարիչ» լուսի աղբյուր հանդիսացող և լուս տվող՝ լուսատու», ինչպես մաս հաս-, աստել//հաստել ձևերի հետ:

⁵⁴ Տե՛ս Բաղդիր Քալոյ, քննական բնագիրը և ծանոթագրությունները Հ. Մ. Ամալյանի, Երևան, 1975, էջ 181:

⁵⁵ Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 277: Տե՛ս մաս Դ. Ա. Капанцян, Хурритские слова армянского языка, "Известия" АН Арм. ССР, 1951, 5. То же, Историко-лингвистические работы, т. 2, Ереван, 1975, с. 279: Գ. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն, (հին շրջան), Երևան, 1961, էջ 105:

⁵⁶ Գ. Զաֆուկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 466:

⁵⁷ Տե՛ս Գ. Զաֆուկյան, նշվ. աշխ., էջ 424-426:

⁵⁸ Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, էջ 49: Գ. Զաֆուկյան, նշվ. աշխ., էջ 142, 216:

Այսպես, օրինակ, մեծանշան արդյունք են Ազգաթանգեղոսի երկու տեղ գտած հետևյալ կիրառությունները. «Պաշտել զԱստուած Արարիչ, և զՈրդին Հաստիչ, և զՀոգին Կազմիչ», «Վասն դիցն, զորս կոչես դու աստուածս, ստոյգ իսկ են հաստուածք»⁵⁹: Նման իմաստային կիրառությունների հանդիպում ենք ման Սուրբ Գրքի հայերեն թարգմանության մեջ, ինչպես ման հետագա հեղինակների երկերում:

Հ.-ե. ծագում ունեցող հիշյալ երկու կարգի արմատները և մրանցից կազմված ձևերը հայերենի հնագույն և վաղմջական փուլերում ունեցել են իմաստային կիրառության տարբեր ոլորտներ: Իսկ մախագրաբարյան, առավել ևս գրաբարի շրջանում տարբեր ոլորտներում գտնվող ձևերի միջև, բառիմաստային բաղադրության (կոնստամիացիայի) հետևանքով տեղի է ունեցել որոշակի փոխարինում: Գրավոր աղբյուրներում տեղ գտած իմաստները ժամանակի ընթացքում կայունացել են և ընդհանրացել: Վերջինս լավագույնս հիմնավորվում է հայ մատենագրության մեջ աստուած բառին տրված տարբեր կարգի մեկնությունների և բացատրությունների տվյալներով:

7. Ինչպես ակատում ենք, հայ. աստուած (քրիստոնեական շրջանում՝ Աստուած) բառն ունի հնդեվրոպական ծագում, որի համար վերականգնում ենք *Has-t' iey -os ձևը: Վերջինս հայերենի հնագույն (կամ վաղմջական) ժամանակաշրջանում առաջացած բաղադրյալ կազմություն է, որի բաղադրիչներն իրենց համարժեք արտացոլումներն ունեն հ.-ե. մյուս, առավել ևս ամատողիական լեզուներում:

ա) Հայերենի հնագույն կամ վաղմջական ժամանակաշրջանում բաղադրյալ կազմություն հանդիսացող աստուած (աս-տու-ած, հնչումով՝ *աս-տոու-ած, ավելի հին՝ *աս-տոու-աս և այլն) ձևը, ինչպես կարելի է ենթադրել, առաջացել է աստուած վերջնական բաղադրությամբ (հիմքում ունենալով տու-ած մախնական բաղադրությունը): Նկատի ունենալով բաղադրության մեծ եղանակը, ինչպես ման ժամանակագրության հետ կապված որոշ հանգամանքներ՝ կարծում ենք, որ հայ. աստուած բաղադրության մեջ բուն կամ գերակա բաղադրիչը *տու- ձևն է (ի համապատասխանություն ցեղակից լեզուների ձևերի):

բ) Ըստ այդմ հայերենի հնագույն կամ վաղմջական ժամանակաշրջանի համար վերականգնվող *Տուած ձևը կարող է դիտվել իբրև համարժեք ամատողիական, հնդիրանական, հունական և այլն ձևերին: Հմմտ. խեթ. Š ių az (<*Š ių -az), պալ. Tių az (<Tių -az), լուվ. Tių at (<*Tių -at), հհնդ. Dyauh - (<*Dya-uh), հուն. Ζεϋς (<*Ζε -v ς , սեռ. հոլ. Διός (<*Δι -o ς), լատ. deus (հլատ. Diouis<*Diou-is), միկ. հուն. di-we և այլն:

գ) Առայժմ ձեռնպահ մնալով հիշյալ և մեծ կարգի ձևերի գործածության, դրանցում գործող հնչյունական համապատասխանությունների ժամանակագրության հետ կապված հարցերի առաջադրումից՝ հարկ ենք համարում մշելու, որ հայ.

⁵⁹ Ազգաթանգեղոսի Պատմություն Հայոց, աշխատությամբ Գ. Տեր-Մկրտչեան և Ստ. Կանայեան, Էջմիածին-Տփղիս, 1909, էջ 34, 40:

*տու- ձևից առաջացած (կամ նրա հիման վրա բաղադրված) *տուած (իբրև դիցաբանական անվանում՝ *Տուած) ձևը ամենայն հավանականությամբ պիտի եղած լինի հայոց բնիկ՝ հնդեվրոպական ծագում ունեցող գերագույն ուժի («լույսի», հետագայում՝ «աստծու») անվանումը՝ «(արևային՝ ցերեկվա) լույս», «լույսի աղբյուր (օջախ)» և «լույս տվող՝ լուսատու» նախագրաբարյան (հնագույն կամ վաղնջական) իմաստների նշանակումով:

դ) Հայ. *տուած (*Տուած) բառի՝ իբրև դիցանվան (գերագույն աստվածության անվանման՝ թեոնիմի) տարբերակային (վարիատիվ) մոտեցումով իմաստաբանական-տիպաբանական վերլուծությանն անդրադառնալու ենք մեկ այլ աշխատանքում՝ նվիրված հայոց դիցանունների ծագումնային հնարավոր վերականգնումներին, համեմատական-տիպաբանական վերլուծությանը:

ե) Հայ. աստուած բաղադրությունը, իբրև բառային միավոր, համեմատաբար ուշ շրջանում է դիտվել որպես առանձին բառ, սակայն ոչ ավելի ուշ, քան 5-րդ դ. արդեն որպես որոշակի հասկացության անվանում հանդիսանալը և ըստ այդմ առանձին բառի արժեքով, ավելի կոնկրետ նշանակությամբ գործածվելը: Եվ պատահական չէ, որ հետագա հեղինակներն իրենց երկերում տարբեր առիթներով փորձում են այդ բառին տալ այս կամ այն բացատրությունը, մեկնաբանել բառի հիմքում ընկած հասկացության նշանակությունը:

ՀԱԿՈՐ ՔՅՈՍԵՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱ ՊԵՏԸ ԵՎ ՆՐԱ ՆՈՐԱ ՀԱՅՏ ԾԱՌԸ

ԺԳ դարի մեծամուն մատենագիր Վարդան Արևելցու կազմած «Տոնապատճառ» ժողովածուի մեջ այս հեղինակի անունով գետեղված է «Կիրակոսի սուրբ վարդապետի արարեալ ի սաղմոսն ԾԹ, որ ասէ. «Ասաց Տէր զՏէր իմ. Նիստ ընդ աջմէ իմմէ մինչեւ եդից»¹ ճառական միավորը: Ո՞վ է այս «Կիրակոս սուրբ վարդապետը»: Համաձայն մեզ հայտնի փաստերի, ճառի հնարավոր հեղինակ կարող է նկատվել կա՛մ ԺԱ-ԺԲ դդ. գործիչ Կիրակոս Գիտնական վարդապետը (+ 1127/1128), կա՛մ էլ ԺԳ դարի մատենագիր «Կիրակոս րաբունեաց պետը»: Այս երկուսի հեղինակային թեկնածությունը առաջադրելի է հետևյալ փաստերի հաշվառումով: Կիրակոս Գիտնական վարդապետը հորջորջվել է նաև Դրազարկեցի՝ կյանքի վերջին տարիները Դրազարկում ապրելու պատճառով²: Ինչպես նկատում է Հ. Ն. Ակիմյանը, նրան չպետք է շփոթել «Կիրակոս գծակերպ գիտնականի հետ»³, որ Ստեփաննոս Ասողիկի վկայությամբ «վարուք առաւել, քան թէ բանիք վարդապետէր, որ բնակէր յոլովակի յանապատին, որ Թեղենիսն կոչի, ի Նիգ գաւառի»⁴ Ժ-ԺԱ դդ. սահմանագծին: Ընդգծված հատվածը հուշում է, որ այս Կիրակոսն ամենայն հավանականությամբ գրավոր ժառանգություն չի թողել: Մինչդեռ Գրիգոր Վկայասեր Կաթողիկոսը 1100 թ. մեր գիտնական վարդապետին հիշում է «զհոգեշնորհ գիտնականն Կիրակոս, որդի իմ ըստ հոգւոյ եւ աշակերտ մեծ գիտնականին Գէորգայ փոխանորդին մեր» բառերով⁵: Գևորգ Մեղրիկի հետ նա մեծարվում է իբրև «սուրբ եւ առաքինազարդ», «արք վարժք յաստուածայինն»: Մատթեոս Ուռհայեցին այս Կիրակոս վարդապետին անվանում է «այր ուսեալ զամենայն կտակագիրսն Աստուծոյ եւ ամենայնի խորին քննութեամբ հասու եղեալ լիապէս հասեալ ի վերայ Հին եւ Նոր Կտակարանացն Աստուծոյ»⁶: Ժամանակակիցները նրան պատվել են «տիեզերա-

¹ Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 4139, թ. 372ա-378բ:

² Ըստ Հ. Ղ. Ալիշանի, Կիրակոս Գիտնական վարդապետը 1113 -1127 թթ. եղել է Դրազարկի առաջնորդը. տե՛ս «Սիսուան», Վննետիկ, 1885, էջ 234:

³ Հ. Ն. Ակիմեան, Կիրակոս Գիտնական վարդապետ, «Հանդես ամսօրեայ», 1952, էջ 486:

⁴ «Ստեփաննոսի Տարօնեցույ Ասողկան Պատմութիւն Տիեզերական», Բ տպ., Ս. Պետերբուրգ, 1885, էջ 185-186:

⁵ Հ. Ն. Ակիմեան, նշվ. աշխ. էջ 487:

⁶ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 366:

կամ եւ գերաճող գիտնական», «սուրբ վարդապետ» որակումներով⁷: Ըստ Հ. Ն. Ակիմյանի, Կիրակոս Գիտնական վարդապետի գրչին եւ պատկանում կամ վերագրվում հետևյալ երկերը.

Ա. Մեկնութիւն Գործք առաքելոցի, որից մեզ հասել եւ միայն երեք հատվածներ՝ ներառված Գևորգ Լամբրոնացու կազմած համանուն խմբագիր մեկնության մեջ (սույ. Վեմետիկ, 1839, էջ 143, 395): Ենթադրելի է, որ այս երկը Կիրակոսը շարադրել է Ոսկեբերանի և Եփրեմի համաբնույթ երկերի հետևողությամբ՝ համառոտելով և այն ներկայացնելով իբրև ուսումնական ձեռնարկ:

Բ. Սրբագրում, հայացում Հովհան Ոսկեբերանի Գործք Առաքելոցի մեկնության թարգմանության (1085 թ.)՝ կատարված Կիրակոս հոնտորի ձեռքով (1076 թ.):

Գ. Սրբագրում, հայացում Ոսկեբերանի Հովհաննու Ավետարանի մեկնության՝ կատարված Թեոփիստեի ձեռքով:

Դ. Տոմարակի կամ Ժաշոցի լրացում, խմբագրում՝ կատարված Գրիգոր Վկայասերի համաճարարությամբ (առաջին խմբ.՝ 1100 թ., երկրորդ խմբ.՝ 1110 թ.):

Ե. Շարական՝ «Արեւելք գերարփին» Ամձիմը՝ մվիրված Աստվածածնի վերափոխմանը:

Զ. Իբրև ստացող՝ Կիրակոսը 1113 և 1123 թթ. ընթրինակված Ավետարաններում «Գիր յիշատակի Աւետարանիս» և «Աղետական բանք եւ մաղթանք վարդապետիս առ սուրբ Աւետարանս» խորագրերի ներքո թողել է իր ուշագրավ հիշատակագրությունները, որոնց մեջ անցողակի դրսևորվում է իր ղեկավարած դպրոցի աստվածաբանական խորքն ու ճաշակը:

Բնական է ենթադրել, որ մատենագրական այսօրինակ գործունեություն ծավալած Կիրակոս վարդապետը պետք է հեղինակեր նաև այլ բնույթի երկեր: Մեկնողական գործեր շարադրելու և խմբագրելու փորձառություն ունեցող գիտնական հեղինակը կարող էր շարադրել նաև ժամրային բնավորությամբ մերձիմոտ այնպիսի գործեր, որպիսիք ճառերն են: Արդ, մտածելու է, որ խնդրո առարկա ճառը ծնունդ է առել Կիլիկիայում, որտեղ ապրում էր աստվածաբանական գիտելիքներով հուշակված Կիրակոս Գիտնական վարդապետը: 1241-1246, 1248-1251 թթ. այնտեղ գործող Վարդան Արևելցի⁸ ըստ երևույթին տեսնելով Կիլիկիայի վաճական միջավայրում և ուսումնագիտական կենտրոններում ճանաչված այս ճառն, իբրև վարդապետական կարևոր երկասիրություն, զետեղել է հիշյալ ժողովածուի մեջ: Ուստի, հիմնվելով լուրջ փաստարկների կարոտ այս ենթադրության վրա, ճառս թեաքար վերագրում ենք Կիրակոս Գիտնական վարդապետի գրչին:

Սակայն չենք բացառում, որ երկը կարող է շարադրված լինել ԺԳ դ. Վարդան Արևելցու ժամանակակցի՝ «Կիրակոս րաբունեաց պետի» կողմից: Հայտնի է, որ այս

⁷ Հ. Ն. Ակիմյան, ԶԶՎ. աշխ., էջ 525:

⁸ Տե՛ս Փ. Փ. Անթաքյան, Վարդան Արևելցի. կյանքն ու գործունեությունը, Գիրք Ա, Երևան, 1987, էջ 37-39:

Կիրակոսի պատվերով է Վարդանը գրել Երգ երգոցի մեկնությունը⁹: Փ. Անթար-
յանն այս Կիրակոսին նույնացնում է Կիրակոս Գանձակեցու հետ, որին Վարդանը
«հարազատ մեր եւ եղբայր Կիրակոս ռաբունեաց պետ» է անվանում¹⁰: Ուստի նույն-
քան հնարավոր է, որ ճառը գրված լինի այս Կիրակոսի ձեռքով, և Վարդանն էլ առ
ի գնահատումն Կիրակոս ռաբունայեցիի աստվածաբանական վաստակի իր Տո-
նապատճառի մեջ է զետեղել նրա խնդրո առարկա ճառը¹¹:

Ըստը կարևոր սկզբնաղբյուր է հայոց միջնադարի համեմատական աստվածա-
բանության հետազոտման համար: Հեղինակը աչքի է ընկնում Աստվածաշնչի,
մասնավորաբար սաղմոսների փայլուն իմացությամբ: Սաղմոսներից քաղված բա-
զում վկայություններով Կիրակոս վարդապետը բնութագրում է Փրկչի տնօրինա-
կան կյանքի բոլոր կարևորագույն պահերը: Երկն ուշագրավ փաստեր է պարունա-
կում նաև տառային խորհրդանշանի ուսումնասիրման համար (տե՛ս Ա-ի աստվա-
ծաբանական վերլուծությունը): Ելնելով ձեռագրի լուսանցային «Եփր» նշումից՝
պետք է ենթադրել, որ Կիրակոս վարդապետն իբրև սկզբնաղբյուր իր ձեռքի տակ է
ունեցել Ս. Եփրեմ Ասորու մեզ այժմ անհայտ Սաղմոսաց մեկնության կամ մի
համաբնույթ ճառի հայերեն թարգմանությունը¹²: Ուստի ճառն ունի նաև աղբյուրա-
գիտական որոշակի շահեկանություն:

Ըստը հրատարակվում է համաձայն միակ ընդօրինակությամբ հայտնի Մաշտո-
ցի անվան Մատենադարանի թիվ 4139 ձեռագրի (թ. 372ա-378բ), որը Տոնապատ-
ճառ ժողովածու է՝ գրչագրված 1267 թ., Հաղբատում: Գրիչ՝ Հովսեփ, Տիրացու,
Գրիգոր: Թերթ՝ 489: Նյութ՝ թուղթ: Գրություն՝ միապյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 35¹³:

⁹ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. 5, թ. 90բ, 5452, թ. 1ա:

¹⁰ Փ. Անթարյան, *Աշխ.*, էջ 138:

¹¹ Ա. քհ. Դանիելյանն այս ճառը հիշատակում է իբրև Կիրակոս Երզնկացու (+ 1356) հեղինակությո-
ւուն («Գանձասար», 2, էջ 552): Միջնդեռ ճառը պարունակող գրչագիրն ընդօրինակվել է 1267 թ., երբ
հավանաբար Կիրակոս Երզնկացին դեռ չէր էլ ծնվել:

¹² Հունարեն խմբագիր մեկնություններում հայտնի է սուկ ԴԳ Սաղմոսի մեկնության մի դրվագը.
M. Geerard, *Lavis patrum Graecorum*, v. II, Brepols-Turnhout, 1974, թ. 408 (№ 3973)

¹³ Նկարագրությունն ըստ՝ «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հտ. Ա, կազ-
մեցին Օ. Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, խմբագրությամբ Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյա-
նի, Երևան, 1965, էջ 1156:

**ԿԻՐԱԿՈՍԻ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՐԱՐԵԱԼ
Ի ՍԱՂՄՈՍՆ ԺԹ, ՈՐ ԱՍԷ. «ԱՍԱՑ ՏԵՐ ԳՏԵՐ ԻՄ.
ՆԻՍ ԸՆԴ ԱԶՄԷ ԻՄՄԷ ՄԻՆՉԵԻ ԵԴԻՑ»¹⁴.**

Կանուխ եւ ամէնիմաստ գիտութեամբ Իւրով Աստուած, զոր ինչ յետ ժամանակաց կատարելոց էր, յառաջագոյն ազդեալ գուշակէր մարգարէիքն, զի յորժամ լցցի ի ժամանակի իւրում, մի՛ անհաւատալի եւ մոր եւ անընտել՝ երեւեցի: Վասն այսորիկ եւ յաղագս տմարէնութեան Իւրոյ եւ մարդկան փրկութեան բազմամասնաբար եւ բազմաւորինակ կերպիւք ցուցանէր սրբոց եւ մոքաւք տայր անտիս տիեզերաց՝ սպասել եւ ակն ունել հանուրց փրկութեան եւ առաւել եւս ի ձեռն մարգարէին Դաւթի, զնա գործիք Իւր արարեալ եւ մովաւ խաւսի զմեծամեծս, որպէս եւ ինքն իսկ ասէր. «Լեզու իմ գրիչ է երագագիր դպրին, որ տեսլեամբ իւրով գեղեցիկ է քան զամենայն որդիս» (ԽԴ 2):

Սա վասն ամենայնի, զոր կատարեաց Որդին Աստուծոյ, ուսուցանէ մեզ կարգաւ սկսեալ յանճառ ծննդեան, որ ի Հաւրէ եւ զոր մարմնովն կատարեաց մինչ ի մեւս անգամ մորայն յայտնութիւն, զոր սուղ ինչ բանի համառատ ցուցցուք մեք բանի տալով եղբարց մերոց որդւոց Նոր Սիոնի: Որպէս ասէ յաղագս Որդւոյն Աստուծոյ ցուցանելով, թէ ի բնութեան Հաւրէ է եւ յետքեան: Ի դիմաց Որդւոյ ասէ. «Տէր ասացցիս. Որդի իմ եւ Դու» (Բ 7): Եւ զի չէ ժամանակաւ, ասէ. «Յարգանդէ յառաջ, քան զարուեսակ ծնա զքեզ» (ԺԹ 3): Եւ թէ Արարիչ է եղելոցս. «Բանի Տեառն երկինք հաստատեցան» (ԼԲ 6):

Իսկ վասն կուսական ծննդեան եւ որ յետ ժամանակաց. «Ես այսաւր ծնայ զքեզ» (Բ 7): Եւ զամբոյսիւն Հէրոդի եւ հրէիցն ասէ ի մորա ծննդեան. «Ընդէ՞ր խոտվեցան հեթանոսք եւ ժողովուրդք խորհեցան ի [սնոտիս]» (Բ 1): Եւ զերկրպագութիւն մոգուցն եւ զընծայաբերութիւն. «Երկիր պագցեն մա ամենայն թագաւորութիւնք երկրի» (ԽԵ 7): Եւ «թագաւորք Արաբայ եւ Սաբայ պատարագս բերցեն Նմա» (ՀԱ 10): Եւ զի խոնարհութեամբ էջ. «Իջցէ որպէս անձրեւ ի վերայ գեղման» (ՀԱ 6):

Եւ թէ զի՞նչ գործեցէ. «Ծագեցի յաւորս Նորա արդարութիւն բազում եւ խաղաղութիւն» (ՀԱ 7): Եւ վասն քառասներորդ գալստեան Նորա ի տաճարն. «Տէր ի տաճար սուրբ Իւրում» (Ժ 5): Եւ զի անմեկնելի է ի Հաւրէ, որ ի ծոց Կուսին ասէ. «Տէր յերկինս յԱթոռ Իւրում» (Ժ 5): Եւ թէ վասն ի՞նչ պատճառի փախեաւ յԵգիպտոս. «Որ հնդիկք, ասէ յառաջ ձեռնտու լիցին առ Աստուած» (ԿԷ 32): Եւ վասն մկրտութեան Տեառն ի Յորդանան եւ Հաւր վկայելոյն. «Ձայն Տեառն ի վերայ ջրոց» (ԻԸ 3) ասէ: Եւ զի Աստուած երեւեալ Հոգին աղանակերպ. Որ մկրտիւն ի վերայ ջրոց բազմաց, եթէ՝ «Թեք աղանույ արծաթապատ եւ թիկնամէջ մորա՝ ի գոյն ոսկւոյ» (ԿԷ 14):

¹⁴ Սղմ. ԺԹ 1 (այստիկեռնէ սաղմոսից բերված վկայությունների տեղիները փակագծով):

* Անընդել:

** Ծննդեան եւ որ յետ ժամանակաց. ընդգծվածը սխալագրության նշանով:

Եւ վասն յանապատն հանելոյն գնա Հոգւոյն, ասէ. «Հոգի Քո բարի առաջնորդեսցէ» (ԾԽԲ 10): Եւ վասն յաղթելոյն զատանա ասէ. «Ի վերայ ի՞ծի թագաւորականի* զնասցես Դու» (Ղ 13): Եւ վասն կոչման առաքելոցն եւ թէ յինչ փառս կոչեաց, ասէ. «Կացուցես զՆոսա իշխանս ընդ ամենայն երկիր» եւ «ի գումարել երկնաւորին ասէ. «Կացուցես զՆոսա իշխանս ընդ ամենայն երկիր եւ բարբառք մոգաւորս ի վերայ մոցա» (ԿԷ 15): Եւ թէ՛ «Ընդ ամենայն երկիր եւ բարբառք մոգաւորս ի վերայ մոցա» (ԺԸ 5): Եւ վասն գալոյն Տեառն ի փրկագործ չարչարանսն եւ յարուցանելոյն զՂազար յարիմակ բնութեանս, ասէ. «Տէր հանէր ի դժոխոց զանձն իմ» (ԻԹ 4), եւ «Արհնեալ ես, որ գաս յանուն Տեառն» (ԾԺԷ 26), եւ թէ «Տէր Աստուած մեր երեսեցաւ մեզ» (ԾԺԷ 27), եւ «Ի բերանոց մանկանց տղայոց հաստատեցեր զարհմութիւնս» (Բմմտ. Ը 3):

Եւ վասն չար մախանձու հրէիցն ասէ. «Թշնամիք իմ ասացին ինձ չար, ե՞րբ իցէ, զի մեռցի եւ կորիցէ անուն մորս» (Խ 6): Եւ վասն բաշխելոյ զմարմին եւ զարիւնն ի փրկութիւն մեզ, ասէ. «Պատրաստ արարէր առաջի իմ զսեղան անապական» (ԻԲ 5): Եւ զի անխառն է ի ջրոյ բաժակ սուրբ խորհրդին, ասէ. «Բաժակ Քո որպէս անապակ արբեցոյց զիս» (ԻԲ 5): Եւ յորդորէ եւ ասէ. «Մաշակեցէք եւ տեսէք, զի քաղցր է Տէր» (ԼԳ 9): Եւ վասն Յուդայի մատնութեան ասէ. «Որ ուտէր ընդ Իս հաց, արար ինձ խաբէութիւն», (Խ 10), եւ «Խաւսեցան զհնէն լեզուաւք մենգաւորաւք» (ԾԸ 2): Եւ վասն կատաղութեան հրէիցն եւ հայհոյելոյն առաջի Պիղատոսի ասէ. «Եղին յերկինս զքերանս իւրեանց եւ զլեզուս իւրեանց ածէին զերկրաւ» (ՀԲ 9) եւ «Ծուրջ եղեն զհնէն շունքն բազումք» (ԻԱ 17):

Եւ ի խաչին բեռեւելոյն ասէր. «Ծակեցին զձեռս իմ, եւ զոտս իմ» (ԻԱ 18) եւ «Ետուն ինձ կերակուր լեղի եւ ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ» (ԿԸ 22), եւ «Բաժանեցին զհանդերձս իմ ի մէջ իւրեանց» (ԻԱ 19): Եւ վասն կամաւոր մահուան ասէ. «Ի ձեռս Քո աւանդեմ զհոգի իմ» (Լ 6): Եւ վասն աներման դժոխոցն ասէ. «Ջրադաքսն աներեցեր եւ կորեաւ յիշատակք մոցա** աղաղակաւ» (Թ 7): Եւ վասն կապելոյն զատանա ասէ. «Թշնամւոյն զէն պակասեաց մինչ ի սպառ» (Թ 7): Եւ վասն ազատութեան, որ անդն հոգոցն. «Փրկեցեր զանձն իմ ի դժոխոց ի մերքնոց» (ՁԵ 13): Եւ վասն թողլոյ գնա աշակերտացն եւ փախստեան. «Բարեկամք իմ եւ մերձաւորք իմ հետի եղեն յինէն» (ԼԷ 12):

Եւ վասն թաղմանն եւ դնելոյն ի գերեզմանին. «Եղին Ջիս ի գփի մերքնումն» (ՁԷ 7), եւ «Ոչ թողցես Դու զանձն իմ ի դժոխս» (ԺԵ 10): Եւ վասն փառաւոր գալստեան Նորա ասէ. «Հարեաւ Աստուած եւ ցրուեցան*** ամենայն թշնամիք մորս» (ԿԷ 2): Եւ համբառնալոյն առ Հայր ասէ. «Համբարձաւ Աստուած արհմութեամբ եւ Տէր մեր՝ ձայնի փողով» (ԽԶ 6): Վասն զարմանալոյն վերնոցն ի տեսանելն գնա արեամբ զանկեալ ասէ. Համբարձէք իշխանք զդրունս [ձեր] ի [վեր] (Բմմտ. ԻԳ 7, 9): Եւ յասելն, թէ՛ «Ով է սա», տա պատասխանի. «Տէր զարութեանց, Սա ինքն է Թագաւոր փառաց» (ԻԲ 10): Եւ վասն իջման Ամենասուրբ Հոգւոյն ասէ. «Հոգի Քո բարի

* Ընկալլալ բնագրում՝ եւ քարթի փխ թագաւորականի:

** Ընկալլալ բնագրում՝ յիշատակ մորս:

*** Ընկալլալ բնագրում՝ ցրուեցին:

առաջնորդեցե՛ղ» (ԺՍԲ 10) եւ թե՛ «Հոգով բերանոյ Նորա ամենայն զարութիւնք մոցա հաստատեցան» (ԼԲ 6):

Եւ յորժամ վերացաւ, ուր չոգաւ. «Ասաց Տէր ցՏէր Իմ. Նիստ ընդ աջմէ Իմմէ» (ԺԹ 1): Եւ վասն փառաւոր եւ Երկրորդ գալստեան Նորա ասէ. «Աստուած մեր յայտնապէս եկեցե՛ղ», եւ «հուր, առաջի Նորա գնացե՛ղ»* (ԽԹ 3): Եւ թէ զի՞նչ առնէ սիրելեաց իւրոց. «Արդարքն ուրախ եղիցին եւ ցնծացեն առաջի Նորա» (ԿԷ 4): Եւ թշնամեաց Նորա ասէ. «Հուր այրեցե՛ղ զթշնամիս Նորա» (ՂԶ 3): Եւ ոչ եթէ զայս յատուկ վարդապետէ մեզ եւ ուսուցանէ Հոգին Սուրբ մովսէլ, այլ եւ վասն երկնի եւ երկրի եւ ծովու եւ որ ի սոսա գոյացութիւնք, ամենեւին խելամուտ առնէ զմեզ, եւ տա գեղեցիկ խրատ քաղաքավարութեան մարդկան:

Այլ զի առաջիկա սաղմոսիս միտք վասն վերացման Փրկչին Տեառն մերոյ յերկինս է յետ քառասնարեայ աւուր յարութեան Նորա, եւ զմարմինն, զոր ի մէնջ էառ անբաժանելի Աստուածութեամբն ընդ աջմէ Հար մստուցանելովն: Վասն այնորիկ գտնարիմականսն միայն յիշեցաք: Ժամ է պստոնեալ գալ ի տեսութիւն վերնագրին եւ ի թիւ սաղմոսիս, զի վեր[ն]ագիրն այսպէս.

Սաղմոս ի Դաւիթ. Թէպէտ եւ զանազան վեր[ն]ագիր կա Հարիւր եւ հիսուն սաղմոսիս Դաւթի, սակայն ուր այսպէս կա, այն անվերնագիր է յերրայեցոցն, ուր չեն լեալ պէտք ինչ քննութեան թէ Դաւթի՞ է թէ՞ ոչ: Զի է, որ ի Դաւթ վերագրեցաւ, եւ է, որ այլոցն, որպէս որ ասի ի որդոցն Կորիսայ, Ասափայ, Իդիդոմայ կամ այլոյ ուրուք միոյ յերգչացն, որք ուսանէին ի Դաւթայ եւ ինքեանք եղանակս կարգէին եւ ձայնս դնէին: Բայց վերագիրն համառաւս զառաջիկա գրոցն զարութիւն պարսիակեալ ունի, զի որպէս կենդանին ի դիմաց ճանաչի, մոյմպէս գիրք՝ ի վերագրէն:

Իսկ *սաղմոսն* թարգմանի երգ, քանզի երգով ասիր սաղմոսք ամենայն: Վասն զի հոգով եւ մարմնով պարտ է պաշտումնին Աստուծոյ աշխատել, զի ամենեքումք պսակեցի: Իսկ թիւ սաղմոսիս խորհրդականք՝ *հարիւր եւ իննը. հարիւր* թիւ կատարեալ, վասն զի ի տասնէն բաղկացեալ եղեւ, որպէս տասն ի միակէն գոյացաւ կրկնապատկելով, մոյմպէս *հարիւր՝* ի տասնէն, զի տասն տասն է *հարիւրն* մշանակ իննսուն եւ իննը հրեշտակացն սրբոց եւ միմն՝ մարդկային բնութիւնս, որպէս Տէր յառակաւ յԱւետարանին եցոյց՝ թողլով իննսուն եւ իննը յանապատին՝ յերկինս եկն ի խնդիր միոյ մոլորեալ ոչխարիս, որ են մարդիք, եւ գտեալ, ուսաւք բարձեալ տարեալ դասեաց ընդ որս կացիմն եւ մնացին¹⁵: Եւ կամ տասն դրամքն, յորոց զմիմն կորոյս կինն եւ լուցեալ ճրագ աւել ած տանն միմնէ եգիտ¹⁶: Եւ ուրախ է ընդ գիտն բարեկամաւքն, որ առակեալ են յիմն դասս հրեշտակաց, յորս ասեմ իմաստունք կացեալ Տեառն մերոյ յետ վերացմանն Իւրոյ յերկինս ար մի ի միմն դասն: Ներքուստ ի վեր սկսեալ ի հրեշտակացն ուրախացուցեալ զՆոսա տեսլեամբ հաճութեան Իւրոյ, զոր անմարմնաբար ոչ կարէին տեսանել, մարմնովն տեսին եւ ցնծացան: Եւ ապա անց ի Հրեշտակապետացն, եւ յետ այնորիկ ի Պետութեանցն, եւ

* Ընկալլալ բնագրում՝ բորբոքեցի:

¹⁵ Տե՛ս Ստեփ. ԺԸ 12-13, Ղուկ. ԺԵ 3-7:

¹⁶ Տե՛ս Ղուկ. ԺԵ 8-9:

ապալ յիշխանութեանցն, եւ յետ այնորիկ ի գաւրութիւնսն եւ ապա ի Տէրութիւնսն, ի Սէրոբէսն եւ ի Քէրոբէսն եւ ապա յԱթոռսն: Եւ ի տասներորդ ատուրն մատեալ ընդ աջմէ Հաւր, առաքեաց զԱմենաստորք Հոգին ի դասս առաքելոցն, որպէս ուսուցանէ մեզ մարգարէս յետ կատարելոյ զամենայն տնարիմակաւսն եւ պսակելոյ զմարմինն յաղթութեամբք:

Ասաց, ասէ, Տէր զՏէր Իմ. Նիստ ընդ աջմէ Իմմէ մինչեւ եղից.

Ամենաբարոք է եւ տառս սկզբնաւորս. զի եւ սա է առաջին յԱյբբեանս մեր, եւ ոչ թէ մերս միայն, այլ ամենայն ազգաց, որք ունին մշակագիր, որ է մշակակ երեք ուսուցման Սրբոյ Երրորդութեան. ուստովքն յատկութեամբն զառանձնատրութիւն ցուցանէ եւ խառնութեամբն՝ զանբաժին եւ զանբաժնի միատրութիւն Աստուածութեան: Որպէս եւ սէրոբէսն ասէին երեք Սուրբ եւ մի Տէրութիւն գաւրութեանց անուանէին: Քանզի ամենայն ինչ հաւասար* է Հաւր եւ Որդոյն եւ Հոգւոյն Սրբոյ, բայց յանձանց եւ յանուանցն, զի անդրադարձութիւն ոչ ունին անուանքն եւ ոչ ի միմեանս լուծումն անուանցն եւ անձանցն, այլ Հաւր միշտ Հաւր եւ Որդի հանապազ Որդի եւ Սուրբ Հոգին միշտ Հոգի Աստուծոյ:

Եղև ի Հաւրէ եւ երեւեալ յՈրդոյն, եւ յայլսն ամենայն զոյգ: Նմանապէս եւ յառնելն զարարածս: Դաւիթ ասէ. «Ողորմութեամբ Տեառն լի եղև երկիր, բանի Տեառն երկինքն հաստատեցան, եւ ի հոգւոյ բերանոյ Նորա՝ ամենայն գաւրութիւնքն» (ԼԲ 6): Վասն որոյ եւ ստորն կից է, զի հաւասար են յարարածոցս կազմութիւն, եւ վերին կողմն բացատ, թէ վայրաբ ոչ փակի, այլ՝ յամենիսեան եւ ամենեքեան ի մա: Եւ թէ ոք ստուգութեամբ միտ դնէ, գտանէ յայրէ անտի զամենայն գիրսն գոյացեալ եւ ամենայնքն երեւին ի մեա, եւ Նա՝ յամենայնսն՝ սակաւ ինչ շեղութեամբ զատեալ: Նա եւ անունն իսկ խորհրդաւոր: Զի «Այբր» ստուգաբանեալ է «աբ», որ է «հայր», որ ծնաւ զայլ տառսն:

Այսպէս Աստուած Հաւր, որ ծնաւ զՈրդի եւ բխեաց զՀոգին եւ արարչութեամբ եւ խնամաբ՝ զարարածս: Նա եւ ի թուական արուեստն ի միմն եւ ի միակն սա է, որ բազմապատկելով ծնանի զամենայն թիւսն եւ ի ձայնատրութիւնսն սա է առաջին ի յեթանոսեանսն առանց որոց անհնարին է ումեք բանալ զբերան կամ խաւսս կատարել առանց սոցա: Եւ ասէ, որ երբեմն կակողանա եւ երբեմն կարծրանա եւ անտեղիտալի լինի: Այսպէս եւ Աստուած, յորժամ ասեմք զՆա Սէր եւ Բարի եւ Ողորմած եւ Գթած եւ Արդար եւ այլ այսպիսիք, ամէնն է: Իսկ յորժամ քննեմք, եթէ զի՞նչ է լէիցս. եւ ոչ ինչ՝ կարծրացաւ եւ անտեղիտալի եղև: Բազում եւ այլ գովութիւնս ունի այս գիր, զոր այլում ժամու թողլի է:

ԱՍՍԱՑ ՏԵՐ ԳՏԵՐ ԻՄ. ՆԻՍՏ ԸՆԴ ԱԶՄԷ.

Մարդկաւրէն խաւսս ձեռացուցանէ մարգարէս Աստուծոյ, զի մեք իմանալ կարացուք մեր սովորութեամբքս. զի մարդիք, յորժամ կամին յորդոց եւ ի սիրելեաց ի պատիւ հանել, ընդ աջմէ մատուցանեն: Եւ այն յետ ժամանակաց է եւ ատուր: Իսկ

* Հաւասարակաց (ուղղման մշակում):

այն ոչ այսպես: Ջի յորմէ հետէ Հայր է ընդ նմին եւ Որդի, զի առանց Որդոյ երբէք ոչ էր Հայր եւ ոչ քթթել միական, այլ ամենայնի գոյգ ընդ Նմա, Աստուած եւ Թագաւոր եւ ընդ աջմէ Նորա: Այլ զի վասն մարմնաւորութեան Որդոյ է բանս, զոր հրեայքն ասէին հակառակ Աստուծոյ եւ վասն այնորիկ սպանին:

Ջհաճիլն Աստուծոյ Հայր ընդ մարմին առնուլն Որդոյ ցուցանէ մարգարէս ի կշտամբումն հրէիցն եւ յորախութիւն հաւատացելոցն, թէ՛ յայսպիսի պատիւ է հաւն գմարմինս Աստուած, զի աստուածացաւ եւ ընդ աջմէ Հայր նստաւ: Եւ ի կշտամբումն Արիոսի աղանդոյն, որ ասէր զՈրդի ոչ գոյ հաւասար Հայր եւ փառակից, եցոյց, թէ համապատիւ է, որպէս եւ Տէր երբեմն ասէր վարդապետացն հրէից, թէ՛ Ո՞րք Որդի է Քրիստոս: Եւ նոքա ասեն. Դաւթի: Եւ նա ասաց. Դաւիթ զՆա Տէր կոչեաց՝ զհա՞րդ Որդի նորա է¹⁷: Ոչ ուրանալով զայն, թէ յազգէն Դաւթի է մարմնով, այլ զի հրեայքն զաներեւոյթ Աստուածութիւն ընդ երեւելի մարմնոյն ոչ իմանային եւ թէ՛ Տէր է Դաւթի, անգիտանային: Ջայն զեկոյց, որ եւ Պետրոս ասէր. «Ոչ եթէ Դաւիթ ել զերկինս, զի ինքն իսկ Դաւիթ ասաց. *Ասաց Տէր ցՏէր իմ. Նիստ ընդ աջմէ իմմէ*»¹⁸:

Արդ զպակասն լնու Տէրն փարիսեցոցն եւ ոչ թէ զյայտնիսն մերծէ՝ վարդապետելով, թէ նոյն եւ Որդի նորա է ըստ մարմնոյ եւ Տէր նորա է ըստ Աստուածութեան* [եւ] ըստ արարչութեան: Արդ, եթէ Դաւիթ մեծ թագաւորն բարեպաշտ եւ մարդասիրութեան շնորհի արժանաւոր «Տէր» ինքեան կոչէ, ապա ոչ սոսկ մարդ է, ըստ խելագարութեան հրէիցն, այլ՝ Աստուած Դաւթի: Անուանք զոյգ *Տէր* եւ *Տեսն* ասաց, թէ՛ *Նիստ* մեծ է եւ այս: Ոչ թէ միայն քան զմարդկային բնութիւնս, այլ եւ բնաւ իսկ քան զարարածս: Որպէս Հայր յաիտեանական ունի եւ Որդի թագաւորութիւն. «Աթոռ Քո Աստուած յաիտեանս յաիտեանից» (ԽԴ 7):

Քանզի ոչ թէ լետ խաչին եւ չարչարանացն արժանաւորեցաւ այսպիսի պատուոյ, այլ էառ իբրեւ զմարդ, զոր ունէր իբրեւ զԱստուած: Քանզի ոչ թէ յաղքատութենէ բարձրացաւ, այլ բարձրն եւ որ ըստ պատկերին Աստուծոյ էր, խոնարհեցոյց զինքն՝ զկերպարանս ծառայի առնելով: Վասն որոյ Աւետարանիչն գոչէ. «Միածին Որդին, որ ի ծոց Հայր, Նա պատմեաց»¹⁹: Եւ ինքն՝ Տէրն ասէ. «Ես ի Հայր եւ Հայր յիս»²⁰, եւ թէ՛ «Փառաւորեա զիս Հայր առ ի Քէն փառաւքն, զոր ունէի յառաջ, քան զլինելն աշխարհի»²¹: Արդ, իբրեւ մարդ այժմ լսէ եւ իբրեւ զԱստուած յաիտեանական ընդունի թագաւորութիւն:

Նիստ ընդ աջմէ իմմէ (ԾԹ 1).

Իսկ զի՞նչ արդեւք աջն իցէ. միթէ՞ անեկին կողմն անարգ եւ կամ տկար իցէ Աստուծոյ: Այլ մեր սովորութեամբս վարի Աստուած, զի մեր աջոյ ձեռն զաւրաւոր է, քան զձախն եւ զմեր սիրելիսն յաջմէ մերմէ կացուցանեմք եւ զաջ կողմ աշխարհիս

¹⁷ Տե՛ս Մտթ. ԻԲ 45, Մրկ. ԺԲ 37, Ղուկ. Ի 44:

¹⁸ Գործք. Բ 34:

* «Ըստ Աստուածութեան» լուսանցքից:

¹⁹ Թովթ. Ա 18:

²⁰ Թովթ. Ժ 38:

²¹ Թովթ. Ժէ 5:

լաւ ասեմք, որ է հարաւ, քան զահեկին, որ է հիւսիսոյ: Որպէս եւ ասէ Սաղոմոն. «Ժամապարհք, որ յաջմէ եմ, գիտէ Տէր. թիւր եմ ճամապարհք, որ ի ձախմէ եմ»²²: Եւ հարսն ասէ յերգսն. «Արի հիւսիս եւ եկ հարաւ»²³: Եւ Տէր ասաց. «Կացուցէ զաւդին ընդ աջմէ եւ զաջծիսն ընդ ձախմէ»²⁴: Եւ աջեացն տա զարքայութիւն եւ ձախեացն՝ զհորսն յաւիտեանական: Այսու արիմակաւ վարի եւ աստ: Բայց ասեմ իմաստունքն զՈրդին ընդ աջմէ Հաւր եւ զՀոգի ընդ աջմէ Որդոյ: Վասն այնորիկ ասաց որդոցն Զեքեթայ. «Նստուցանել ընդ աջմէ ոչ է իմ տալ, այլ որոց պատրաստեալ է»²⁵:

Մինչեւ եղից զԹշնամիս Քո պատուանդան ոտից Քոց (ԾԹ 1):

Թշնամի Քրիստոսի սատանա է, եւ դեռ ընդ նոսին, որ աստուածային քարոզութեան Նորա դիմադարձք եղեն, հրեայք եւ հեթանոսք: Իսկ *միմչն* ոչ է ժամանակի իմչն նշանակումն, այլ սովորութիւն է աստուածային Գրոց այսպէս վարիլ. զի *միմչն* թէպէտ եւ ժամանակական իմն է, այլ այնպիսի է, զի գնշանակեալն յայտնէ եւ զկնիսն ոչ հատանէ: Այսպէս եւ զոր այժմս է ծանիցես, զի ոչ թէ միմչեւ ցայն թագաւորէ եւ յետ այնորիկ՝ ոչ. քաւ լիցի: Որ մանաւանդ թագաւոր, առաւել անդ յայնժամ թագաւորէ կամողաց եւ ոչ կամողաց: Այլ *միմչն* այնպիսի է, որ ասէ. «Ել ազոսն ի տապանէն եւ անդրէն ոչ դարձաւ միմչեւ ցամաքել ջրոյն»²⁶, որ եւ ոչ յետ այնորիկ դարձաւ: Եւ թէ՝ «Յաւիտեանից միմչեւ յաւիտեանս դու ես» (ԶԹ 3):

Եւ անտեղի է ասել, թէ յետ այնորիկ Աստուած ոչ է: Եւ թէ՝ «Եղիցի յաւորս Նորա արդարութիւն բազում եւ խաղաղութիւն միմչեւ կատարեսցի լուսին» (ՀԱ 7): Որ եւ ի հանդերձեալն առաւել տիրէ խաղաղութիւն յետ կատարման եւ դադարելոյ լուսաւորացոյ: Եւ թէ՝ «Ես եմ, եւ միմչեւ կարի իսկ ծերասցիք, սակայն Ես եմ»²⁷, եւ ոչ թէ սպառի էութիւն Աստուծոյ յետ ծերութեան մարդկան: Եւ թէ՝ «Ոչ գիտաց զՆա *միմչեւ* ծնաւ զՈրդին Իւր անդրանիկ»²⁸, եւ ոչ թէ յետ հրաշալի ծննդեանն գիտաց Յովսէփ Վարիամ. քաւ եւ մի լիցի, զայս գմտաւ ածել: Եւ թէ՝ «Ես ընդ ձեզ եմ միմչ ի կատարած աշխարհի»²⁹: Որ եւ մանաւանդ լինելոց է ընդ առաքեալսն յետ կատարածի աշխարհի: Որպէս եւ ասաց, թէ՝ «Բնակեցայց ի նոսա եւ գնացից ի նոսա եւ եղեց նոցա Աստուած եւ նոքա եղեն ինձ ժողովորդ»³⁰: Եւ զի ասէ սոյն աշխարհէս, թէ՝ «Երկինք եւ երկիր անցցեն եւ Դու մնաս»³¹: Եւ «Դու նոյն իսկ եւ ամբ Քո ոչ պակասին»³²: Թայս աոցես եւ զառաքելոյ ասացեալսն. թէ՝ «Պարտ է նմա թագաւորել *միմչ*

²² Առակ. Դ 27:

²³ Երգ. Դ 16:

²⁴ Մտթ. ԻԵ 32-33:

²⁵ Մտթ. Ի 23, Մրկ. Ժ 40:

²⁶ Ծմբ. Ը 7:

²⁷ Եսայի ԽԶ 4:

²⁸ Մտթ. Ա 25, Ղուկ. Բ 7:

²⁹ Մտթ. ԻԸ 20:

³⁰ Ղեւտ. ԻԶ 12:

³¹ Հմմտ. Եբր. Ա 11:

³² Եբր. Ա 13:

չէր դիցէ զթշնամիս ի ներքոյ ոտից իւրոց»³³: Եւ Դանիէլ մարգարէ ասէ՝ յետ գազանացն ի միջոյ բարձմանն զՆա ասէ թագաւորել յաւիտեան: Եւ հրեշտակապետն Կուսին ասէր. «Թագաւորութեան Նորա վախճան մի՛ լիցի»³⁴: Եւ որպէս՝ սուրբքն թագաւորակցեցին Նմա, յորժամ Նա ելանէ ի թագաւորութենէն: Այլ զի Գրոց սովորութիւն է վարիլ *միջնաւոր*:

Գաւազան զարութեան յոռքեցէ քեզ Տէր ի Սիոնէ (ԾԹ 2).

Գաւազանն է, որ պատուոյ նշանակ է, որպէս թագաւորաց եւ վարդապետաց, առաջնորդաց եկեղեցւոյ, եւ է, որ տկարաց վասն լեւնոյ: Իսկ Տեառն մերոյ *գաւազան* իմանալ է զԽաչն, որ կանգնեցաւ ի Գողգոթա ի վերայ գերեզմանին Ադամայ: Փոխանակ մահաբեր ծառոյն, զոր կերելաւ Ադամայ մեռաւ, սա կանգնեցաւ կենաց ծառ եւ եքեր պտուղ զՔրիստոս, զի որ ուտէ ի մնանէ զմահ մի՛ տեսցէ ի յաւիտեան: Եւ եղև նմա գաւազան զարութեան եւ հաստատութեան, եւ հովուեաց Նովա Տէր զհաւտ Իւր, զոր ապրեցոյց արեամբն Իրով: Որպէս եւ ասէր Եսայի. «Եւ թխեցէ գաւազանն յարմատոյն Յեսուեայ եւ ելցէ ծաղիկ յարմատոյ անտի եւ հանգիցէ ի վերայ նորա Հոգի Աստուծոյ»³⁵: Իսկ ասելն *ի Սիոնէ*, զի «Դիտանոց» թարգմանի «Սիոնն», եւ Խաչն ի գազաթան տեղւոջ կանգնեցաւ: Բայց նշանակաւ զքնութիւնս ասէ *Սիոն*: Որպէս եւ սոյն իսկ Դաւիթ ասէ. «Մայր Սիոն ասի մարդ եւ մարդ ծնաւ ի մնա» (ՁԶ 5):

Եւ տիրեցես դու ի մէջ թշնամեաց Քոց (ԾԹ 2).

Այն է զարմանք՝ տիրելն *ի մէջ թշնամեաց*: Չասաց, թէ՛ ի վերայ թշնամեաց, այլ՝ *ի մէջ*: Զի ի վերայ թշնամեաց տիրելն գոռոզաց եւ բռնաւորաց է: *Իսկ ի մէջ թշնամեաց* Քրիստոսի է եւ իւր աշակերտացն, որ յամենեցուն հալածեալ եւ նեղեալ եւ պաշարեալ վշտաւք եւ խոնարհութեամբ զարացան եւ յաղթողք եղեն եւ զբազումս դարձուցին: Եւ որպէս գերեալք ածելն եւ մատուցանելն ի սպասաւորութիւն Տեառն: Որպէս եւ Պաղոս ասէր. «Գերեմք զամենայն միտս ի հնազանդութիւն Քրիստոսի»³⁶: Իսկ թշնամիքն սատանա իւրա[յն]ովքն եւ հրեայքն:

Ընդ Քեզ է ինձ սկիզբն աւուրն զարութեանց (ԾԹ 3).

Աստ զՈրդի Հաւր հաւասարեցոյց եւ ոչ կրտսեր*, որպէս պիղծն Արիոս ասաց, քանզի անժամանակ ասաց զնա: Իսկ *աւր զարութեան* զլինելութիւն արարածոցս ասէ, որպէս յայլովս սաղմոսի ասաց. «Զվայելչութիւն զգեցաւ եւ զարութիւն ածաւ ընդ մէջ» (ԴԲ 1), եւ կամ զաւր կատարածին, յորժամ գա փառաւք Հաւր եւ ամենայն հր[ե]շտակք ընդ նմա, եւ զսուրբս Իւր փառաւորէ եւ պսակէ, զի փայլեն իբրեւ զարեգակ յարեայութեան երկնից, որպէս եւ ասաց Տէրն.

³³ Անդ:

³⁴ Ղուկ. Ա. 33:

³⁵ Եսայի ԺԱ. 1:

³⁶ Բ. Կորնթ. Ժ. 5:

* Կրտսեր:

Յարգանդէ յառաջ, քան զարաւեսակ ծնաւ զքեզ (ԸԹ 3).

Աստ զաստուածային Նորա վայելչութիւն յայտնեաց, եւ որ ասաց Նմա Տէր իբրեւ մարդոյ. *Նիստ ընդ աջմէ իմմէ, մինչեւ երկից զթշմամիս Քո պատուանդան ոտից Քոց*, զէութիւն խոստովանի եւ զմիութիւն քարոզէ զբնութեանցն: *Իսկ յառաջ, քան զարաւեսակն*, որ ասէ յայտնէ յառաջ քան զժամանակս եւ զյաիտեանս զՆա ծնեալ եւ մինչեւ լուսաւորքդ* ստեղծեալ էին՝ արեգակն եւ լուսին, կամ *արաւեսակն* եւ կամ այլ աստեղք: *Իսկ յորովայնէն* զմիութիւն Աստուածութեան վարդապետէ, թէ ոչ յայլմէ, այլ յիմմէ ծնար ի բնութեանէս, որով եւ *յորովայն* յայտ է, թէ առակաբանութեամբ իմանի: Որպէս եւ յորովայնէն ծնանի մարդիք եւ ծնեալքն զնոյն բնութիւն ունին զծնողացն: Այսպէս յինէն ծնա ասէ եւ զծնողիս ի քեզ բերես միութիւն: *Իսկ ասելն, թէ՛ ծնա զքեզ յետ անճառ ծնանեանն*, որ ի Հարեւ եւ զերկրորդս է իմանալ.

Ի** վայելչութեան սրբոց Քոց (ԸԹ 3).

Թէ յաիտեանից կարգեալ յինէր ի յերանս արդարոցն:

Երդուա Տէր եւ ոչ զղջացաւ, թէ դու ես քաճանա յաիտեան, ըստ կարգին Մելքիսեղեկի (ԸԹ 4).

Տէրն յԱւետարանին հրաժարեցոյց, թէ՛ Ամենեւին մի՛ երդնուլ՝ մի՛ յերկինս եւ մի՛ յայլ ինչ³⁷: Եւ ի բազում տեղիս գտանիմք, թէ՛ «Երդուա Աստուած»³⁸ գրեալ է, որպէս այն, որ ասէ, թէ՛ «Թանձն իմ երդնում, ասէ Տէր Աբրահամոս»³⁹, եւ թէ՛ «Երդնու Տէր ի սրբութիւն Իւր»⁴⁰, եւ թէ՛ «Երդուա Տէր Դաւթի ճշմարտութեամբ եւ ոչ ստեաց» (ՁԸ 50) եւ աստ թէ՛ *Երդուա Տէր եւ ոչ ես զղջացի* (ԸԹ 4). Մարդիք արգելան ի յերդնոյ, զի բազում անգամ սխալեմ*** եւ ստեմ: Իսկ Աստուած երդնու եւ ոչ ստէ: Եւ որպէս աստուածայինքն ամենայն հաստատ եմ եւ անշարժ, այսպէս եւ երդումն Նորա: Իսկ որ երդուա մոյն իմքս, եթէ՛ *Դու ես քաճանա յաիտեան* (ԸԹ 4), զոր ստուգապէս աստուածայինն մարգարէն զքաճանայութիւնս զայս անեզր ասաց, զի դեւտացոց եւ Ահարոնի քաճանայութիւն ոչ երդմամբ զաւետարանութիւն ընկալաւ: Իսկ քաճանային ահա երդմամբ հաստատի, վասն որոյ եւ ոչ *զղջացաւ* յաւել, վասն զի բազում անգամ տեսեալ ամենեցունցն Աստուծոյ ընդ փոփոխմամբ անկանել թողացոյց սմա, այսպէս եւ զհրէից քաճանայութիւն արար եւ ցածոյց, սոյնպէս եւ զթագաւորութիւն մոցունց յաջողեաց եւ քակեաց եւ զասորեստանուն, եւ զբաբելոնականին, եւ զմակեդոնացունցն եւ զշինելն թողացոյց եւ զքակելն եւ զեղծանելն հրամայեաց: Զայս միայն զթագաւորութիւնս խորհեցեալ գոլ յաիտեան:

Երդուա, ասէ որպէս թէ մի՛ *զղջացի*: Մարդկարեւն ասաց եւ զայս, քանզի յաիտանայոյ աւտար է Աստուածութիւն, վասն զի եւ *զղջանալն* ախտանալն է: Իսկ Մել-

* Լուսաւորքս:

** Ի լուսանցս՝ «Եփ.» (=Եփրեմ):

³⁷ Մտթ. Ե 34:

³⁸ Ծմդ. ԻԲ 16: Ծ 23, Բ Օր. Զ 10, 18, ԺԱ 19:

³⁹ Ծմդ. ԻԲ 16:

⁴⁰ Ամովս Դ 2:

*** Սղալեմ:

քիսեղեկ ոչ հրէից, այլ հեթանոսաց քահանայ էր, քանզի քանանացի էր: Մարգարէ անհայր անմայր զսա ասէ. ամանեալ Որդոյն Աստուծոյ, որպէս նա անմայր յառաջնումն եւ անհայր յերկրորդումն: Վասն զի Մ'ելքիսեղեկ իւրովի ընտրեաց զԱստուած յառաջ քան զկոռու եւ աղաթիւք իւրովք յանդունդս ընկղմեաց զտաճար կոոցն ծնաւորք իւրովք եւ ազգատոհմիւք: Եւ ոչ մնաց ի նոցանէ եւ ոչ մի յազգէն, յորժամ զոհէին զեղբայրն մորա զՄ'ելքի կոոցն: Եւ նա կացեալ յանտառին ճարակելով խոտ զամս եւթն միմչեւ երեսեցաւ Աստուած Աբրահամո: Եւ ասէ. Երթ յանտառն եւ ձայնեալ երիցս անգամ այրդ Աստուծոյ: Եւ ելցէ առ քեզ այր մի վայրագ: Զգեցո մմա հանդերձ եւ նա արհմեացէ զքեզ, զոր արարն: Եւ նա փոխեաց հրամանաւն Աստուծոյ զանունն Աբրահամո Աբրաամ: Եւ յորժամ գայր Աբրաամ ի կոտորածէն Սողոմ* գոմորեանցն, ել ընդառաջ Աբրահամո եւ արհմեաց զՆա: Եւ ետ Նմա հաց բաղարն եւ բաժակ՝ յարինակ հոգեւոր պատարագիս⁴¹: Եւ արինակ է սա Քրիստոսի անուամբն. զի «Մ'ելքիսեղեկն» Թագաւոր արդարութեան թարգմանի: Եւ Թագաւոր արդարութեան Քրիստոս է:

Այս անունն է, որ Հայր եւ մայր չունի, որպէս եւ ոչ ի Իսրաէլն, զի Աստուած փոխեաց զերկոցունցն անունն: Զի Մ'ելքիսեղեկի առաջին անունն Սէմէր էր եւ Իսրաէլին՝ Ծակոր: Եւ նա հայր ունէր զՄ'ելքիթագն եւ մայր՝ զՍաղիմ, եւ Ծակոր հայր զԻսահակ եւ մայր զՌեբեկա: Այսպէս եւ Քրիստոս ոչ յաղագս հրէիցն միայն, այլ եւ վասն ամենայն մարդկան զինքն մատոյց պատարագ Աստուծոյ: Եւ սկսանի զքահանայութիւն Քրիստոսի ի զիշերին, յորում չարչարանացն համբերէր: Յորժամ առեալ զհացն զոհացեալ երեկ եւ ասէ. «առէք կերայք ի դմանէ»⁴²: Ըստ միմն եւ զբաժակն առեալ ետ աշակերտացն իւրոց ասելով՝ «Առէք արբէք ի դմանէ ամենիքեան, այդ է արին իմ Նորոյ կտակիս, որ յաղագս բազմաց հեղեալ է ի թողութիւն մեղաց»⁴³:

Գտանեմք այսուհետեւ զՄ'ելքիսեղեկ քահանա եւ թագաւոր, վասն զի գաղափար էր նա ճշմարիտ Քահանայիւն եւ Թագաւորին եւ յառաջ բերող Աստուծոյ ոչ անբան սպանդա, այլ հաց եւ զինի, զոր եւ Աբրաամ եհան ընդ առաջ զսովորական քահանայութեան սկիզբն. արինակէ զելս ի հայրապետին երանացն հոգեւով յառաջ տեսեալ: Արդ, որովհետեւ ի Դաւթայ Քրիստոս ըստ մարմնոյ եւ Դաւիթ ի Յուդայէ: Իսկ ըստ կարգին Մ'ելքիսեղեկի քահանայութիւն ընկալաւ Քրիստոս: Լռեալ, ուրեմն, դէտաւոց քահանայութիւն, եւ Յուդայի ցեղն մեծագոյն քահանայութենէն արհմութեան փոխեցաւ: Քահանայապետ է այժմն, որ ի Յուդայէ ըստ մարմնոյն շառաւելեցաւ՝ ոչ ինքն ինչ մատուցանելով, այլ մատուցանողացն գլուխ անուանելով, քանզի մարմին ինքեան զեկեղեցի կոչէ: Եւ յաղագս սորա քահանա պաշտէ իբրեւ զմարդ եւ ընդունի իբրեւ զԱստուած: Մատուցանէ այսուհետեւ եկեղեցի զմարմնոյ

* Գողող (այսպէս և այլոք):

⁴¹ Տէ'ս Ծմնդ. ԺԴ 18:

⁴² Մտթ. ԻԶ 26:

⁴³ Մտթ. ԻԶ 28:

նորա եւ զարեան արիւնակն զքնաւ զանգումն իւրով սկզբնող տէրութեամբ արհմել: Իսկ ասելն, թէ.

Տէր ընդ աջմէ քումմէ (ԾԹ 5).

Նման է այս ԺԵ սաղմոսին, որ ասէ. «Թառաջագոյն տեսանէր զՏէրն առաջի իմ միշտ եւ ընդ աջմէ իմմէ, զի մի սասանեցայ» (ԺԵ 8): Զոր եւ անդ մարդկապէս ասաց զայս յայտնեալ զքնութեանցն միութիւն եւ զանքակութիւն: Եւ աստ ըստ նմին զաստուածայինն ասէ եւ զմարդկայինն: Զի ասելն *Նիստ ընդ աջմէ իմմէ մարդկային* բնութեանս է ի ճախ, իսկ *Յորովայնէ յառաջ, քան զարասեակ ծնա զքեզ* այս Աստուածութեան յատկութիւն:

Եթէ Դու ես քահանայ յաիտեան. դարձեալ իբրեւ առ մարդ ասի, ըստ նմին եւ՝ *Տէր ընդ աջմէ քումմէ*, այսինքն՝ թէ անբաժանելի ունի զաստուածային էութենէն միութիւն:

Խորտակեցէ յաւոր բարկութեան զթագաւորս եւ [դատի] հեթանոսս (ԾԹ 5).

Ոմանք զայս ի վերայ Աքրասմու առնուն ի կոտորել զՍողոմ գոմորեանն: Բայց ար բարկութեան զար դատաստանին ասէ. յորում եւ դատի զամենայն բռնաւորս եւ զդիւապաշտուն:

Եւ բազում առնէ զհարուածս (ԾԹ 6).

Ի Նեոն եւ ի հաւանեալսն Նորա

Եւ խորտակեցէ զգլուխս բազմաց յերկրէ (ԾԹ 6).

Այսինքն՝ զիշխանութիւնն, զոր խափանէ եւ դադարեցուցանէ եւ զանիրաւ կենցաղաւարեալսն անշէջ հրոյն մատնէ զնոսա լուցկիս:

Զուխս ի ճանապարհի արբուցէ (ԾԹ 7).

Ուխ սովոր են զանձրեւածին ջուրս կոչել, որ ժողովեալ ի բազում վայրաց յորդութեամբ ընթանա: Թայս առակէ զողորմութեան իւրոյ շնորհս, զոր եհել եւ հեղուլ հանդերձեալ է, վասն զի մասնաւորս խափանի եւ կատարեալն հաստատի: Որպէս եւ ասէ յայլում սաղմոսի. «Արբեցենն մոքա ի պարարտութենէ տան Բո եւ զուխս փափկութեան Բո տացես ըմպել մոցա» (ԼԵ 9), զի որ զբաժակ չարչարանացն Նորա արբին եւ փառաց Նորա մոքա հաղորդին: Իսկ *ճանապարհ* զկենցաղս կոչէ: Վկայեն* այսմ մտաց հետագա** բանքս՝ ասելով.

Վասն այսորիկ բարձրացուցէ զգլուխս (ԾԹ 7).

Զի որ խոնարհեցոյց զանձն մինչ ի մահ խաչին, յաղագս որոյ եւ Աստուած բարձրացոյց զՆա: Մարդկաւրէն ձեւացուցանէ զբանս: Զի Աստուած ոչ ի նուստութենէ բարձրացաւ, այլ եւ բարձրեալ գոյր: Խոնարհեցոյց զինքն որպէս զԱստուած, զի զոր ոչ ունէր, էառ Բարձրեալն, եւ սրբոց իւրոց, զոր ոչ ունէին ետ մոցա՝ զանդամսն ընդ գլխոյն միաւորեալ եւ թագաւորեալ: Թորս եւ մեք ժամանեցուք յամնառ բարիսն եւ ի խոստացեալ պարգէսն ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, Որում փառք եւ զարութիւն յաիտեանս յաիտեանից. Ամէն:

* Վկայէ:

** Հետակա:

ՀՄԱՅԱԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

«ԴԱՇՏՆ ԱՐՏԱԶՈՒ»՝ ԱՎԱՐԱՅՐԻ ԺԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՏԵՂԸ

Հայ պատմաբաններին վաղուց ի վեր հետաքրքրել է այն հարցը, թե որտեղ է տեղի ունեցել Ավարայրի ճակատամարտը: Առաջին փորձն այդ ուղղությամբ կատարել են Վենետիկի Մխիթարյանները՝ 1751 թ.: Դրանից հետո երևան եկան մի շարք հեղինակներ իրենց տեսակետներով: Այդ հեղինակներին կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբի ներկայացուցիչները (Վենետիկի Մխիթարյանները՝ Դ. Ալիշանի հետ միասին, Հ. Մանանդյանը, Հ. Ասատրյանը, Ս. Երեմյանը, Կ. Բասմաջյանը) Ավարայրի դաշտի տեղադրության հիմքում դնում են Մակու գետի ավազանը: Երկրորդ խմբի ներկայացուցիչները հակված են Ավարայրի դաշտը տեղադրել Ակ-չայի գետի ձախ վտակի ավազանում: Այդ տեսակետը բաժանում են Կ. Կոստանյանցը, Գ. Ծիրմազանյանը, Ե. Տեր-Մինասյանը, Հ. Հարությունյանը:

1967 թ. երկրորդ խմբի ներկայացուցիչների կարծիքներն ամփոփել էր Հ. Աղաբեկյանը, որն առկա պատմական նյութի և հին շրջանի ռազմական արվեստի տվյալների վերլուծության հիման վրա փորձեց Ավարայրի դաշտը տեղադրել Կարազիադիների հարթավայրի մոտ¹: Այդ փորձը մնաց չհիմնավորված, քանի որ մա Ավարայրի դաշտն ըստ էության փնտրել էր բուն Արտազի սահմաններից դուրս²:

Առաջին խմբի ներկայացուցիչներն Արտազի սահմանները որոշելիս հենվում են Մովսես Խորենացու, Ամանիա Ծիրակացու, Թովմա Արծրունու, Վարդան Արևելցու և ուրիշների վկայությունների վրա: Հայ պատմիչների տվյալները հաստատում են, որ Արտազն ընկած էր Մասիսներից հարավ-արևելք: Հյուսիս-արևմուտքում այն սահմանակցում էր Կոգովիտին, արևելքում՝ մերձարաքսյան ցածրավայրին, իսկ հարավում՝ Ծոարշ (Ծուարշ-ոտո) գավառին:

Հ. Աղաբեկյանն անտեսել է հայ պատմիչներից շատերի վկայությունները: Նա հաշվի չի առել մաս Կոգովիտ-Խոյ ճանապարհն Արտազ գավառի արևմտյան մասով ընկած լինելու Հ. Մանանդյանի տեսակետը: Ինչպես երևում է Հ. Մանանդյանի բերած տեղեկություններից, Արտազը, ձգվելով դեպի Մակու գետի ավազան, չէր կարող հարավ-արևելյան ուղղությամբ շատ հեռու տարածվել: Նա Հեր ու Զարեվանդ (այժմյան Խոյ) գավառից բաժանվում էր բավականին ընդարձակ միջանցքով:

¹ Агабекян Т. О., К вопросу о месте Аварайрского сражения, «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 4:

² Մարտիրոսյան Հ., Ավարայրի ճակատամարտի տեղը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1988, № 6:

Մովսես Խորենացու մոտ եղած փաստերը գալիս են հաստատելու առաջին խմբի հեղինակների կարծիքը: Այդ փաստերը կապված են Անակի՝ Պարսկաստանից Հայաստան գալու հայտնի տեղեկությունների հետ: Ըստ Մովսես Խորենացու, Անակը կանգ առավ «Արտազի դաշտում», մրա «օթևանը» գտնվեց սուրբ առաքյալի (խոսքը Ս. Թադեոսի մասին է- Հ. Մ.) գերեզմանի մոտ:

Եթե նկատի ունենանք այն փաստը, որ Ս. Թադեոսի վանքը գտնվում է Մակու գետի ձախ կողմում, ապա պարզ է դառնում, որ Արտազի դաշտը պիտի ընկած լինի գավառի արևմտյան կողմում:

Նույն փաստը հաստատում է նաև Արտաշատ-Խոյ (Կոգովիտով անցնող) ճանապարհի ընտրությունը հայկական գործերի հրամանատարության կողմից Ավարայրի ճակատամարտի նախաշեմին: Այդ ընտրությունը հիմնավորված էր այն բանով, որ հայկական գործերը գործ ունեին արևելյան հզորագույն պետության բանակի հետ: Այստեղից երևում է, որ մրանց հրամանատարության գլխավոր խնդիրը պետք է լիներ՝ հենվելով հայերի ազատաշունչ ոգու վրա, պարսկական բանակին առաջին ճակատամարտում շոշափելի կորուստներ պատճառելը, իսկ այնուհետև պատերազմը պարտիզանական մեթոդներով շարունակելը: Այդ առումով հարկ է ենթադրել, որ իբրև հավաքի և, ամենայն հավանականությամբ, ճակատամարտի վայրն էր ընտրվել Արտազի այն մասը, որի թիկունքում Կոգովիտի լեռնային զանգվածներն էին, ուր կարելի էր նահանջել՝ պարտիզանական հարվածներ տալու և մարտեր մղելու համար:


Արտազ գավառի այդ մասում այժմ գտնվում է մի տեղանք, որը կոչվում է Օվաջիկ (թուրքերեն՝ «դաշտավայր», «փոքրիկ դաշտ»): Ըստ պարսկական աղբյուրների³, վարչական առումով Օվաջիկը մահալ է, որը մտնում է Մակուի մարզի (հիմ Արտազ) մեջ: Նրա երկարությունը շուրջ 24 կմ է, իսկ լայնությունը՝ 12 կմ: Մարզով հոսում են երկու գետեր՝ Կարա-սու (Սև գետ) և Ակ-չայ (Սպիտակ գետ, նույնանուն է Կոտուր գետի ձախ վտակի հետ): Կարա-սուն հոսում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ուղղությամբ: Ակ-չայը սկիզբ առնելով արևմուտքում ընկած ձյունապատ գագաթներից՝ խմելու ջրի աղբյուր է ծառայում տեղի բնակչության համար: Այն չափերով համեմատաբար փոքր է: Երկու գետերն էլ թափվում են Մակու գետը:

Ակ-չայը և Մակու-գետի ակունքները կազմում են Մակու մարզի հարավային սահմանը:

Մարզի արևելյան սահմանն է հանդիսանում Մակու-Կոգովիտ ճանապարհը, որը Իրան-Փոքր Ասիա մայրուղու, այսպես ասած, «արտազյան» հատվածն է:

Այդ ճանապարհի վրա, 39 կմ Մակուից դեպի հյուսիս, գտնվում է Քիլիսաքենդ («եկեղեցական գյուղ») անունով մի բնակավայր: Սա Օվաջիկ մահալի կենտրոնն է:

³ Ֆարֆանդ-ե ջոգրաֆյա-ե Իրան (Իրանի աշխարհագրական բառարան), հ. 4 (Ազերբայջան), Թեհրան, Իրանական բանակի հրատարակություն, 1330/1951-1952 թ., էջ 52, 426, 481-482;



Օվաջիկը հյուսիսում և արևմուտքում պարսաված է լեռներով, որոնք կազմում են Կոգովիտի մի մասը: Սրանք հատկապես բարձր են մահալի հյուսիս-արևմտյան և հարավ-արևմտյան կողմերում: Կոգովիտի հյուսիսով այժմ անցնում է թուրք-պարսկական սահմանի մի հատվածը:

Կարա-սու գետը սկիզբ է առնում ճահիճներից և հոսում ճահճոտ տեղանքով: Նրա ջուրը խմելու համար պիտանի չէ: Կարա-սում՝ Տղմուտ գետն է («ճահիճ», «տիղմ» բառերից):

Քիլիսաքենդը պատմական Ավարայր գյուղն է:

Իսկ Օվաջիկը ոչ այլ ինչ է, քան «դաշտն Արտազո»-ն:

Ըստ Եղիշեի, այդ դաշտավայրը գտնվել է Արտազ գավառում: Այնտեղ եղել է Ավարայր գյուղը, որի մերձակայքում ընկած էր Տղմուտ գետով կիսված դաշտը⁴: Ղազար Փարպեցին, գրելով պարսկական զորքերի առաջխաղացման մասին, նշում է, որ նրանք հասան «գաւառն Արտազ, հուպ ի գետղն, որ կոչի Աւարայր, ի շրջափակ տեղի Տղմուտ դաշտին»⁵:

Փաստերը ցույց են տալիս, որ հայկական զորքերը տեղավորված էին Արտազի հյուսիս-արևմտյան կողմում, իսկ պարսկական զորքերը՝ հարավային: Ղազար Փարպեցու տվյալների համաձայն, 451 թ. մայիսի 25-ին հայկական զորքերը մոտեցան Տղմուտ գետի հյուսիսային ափին և ճամբար դրեցին այնտեղ:

Հաջորդ օրը՝ մայիսի 26-ին, տեղի ունեցավ Ավարայրի ճակատամարտը:

Մոտավորապես V-VI դդ. Քիլիսաքենդում կառուցվել է մի եկեղեցի: Նրա հնության մասին են խոսում այն տվյալները, որը բերում է Ա. Թոխմախյանը, ըստ որի Քիլիսաքենդի բնակիչները իրենց գյուղի եկեղեցու տարիքը հասցնում էին մինչև 1500 տարվա⁶: Իսկ Վ. Միհրոսկու խոսքերով՝ «Մակվին հարևան Փոքր Ավաջուկի մարզում Քիլիսա-Քենդի («եկեղեցական գյուղ») գլխավոր գյուղում հիանալի ընդարձակ տաճարի (տաշած քարից) ավերակները ծառայում են այժմ որպես խանի խոտի պահեստ...»⁷:

Կարելի է կարծել, որ Քիլիսաքենդի եկեղեցին կառուցվել է ի հիշատակ Ավարայրի ճակատամարտի:

⁴ Եղիշե վարդապետի վառն վարդապետ Հայոց պատերազմին, Երուսաղեմ, 1865:

⁵ Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 163:

⁶ Թոխմախյան Ա., Մասին լեռների հարապահյուն ստորոտներ, Ա մաս, 1882, էջ 52:

⁷ Минорский В. М., Древности Маку. «Восточный сборник», Петроград, 1916, стр. 52.

ՎԵՐՈՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԿԱՏՈՒՄՆԵՐ ՄԱՐՏԻՐՈՍ ՂՐԻՄԵՑՈՒ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Ծննդյան թվականի խնդիրը)

Մարտիրոս Ղրիմեցին 17-րդ դ. առավել աչքի ընկած դեմքերից է, ազգային-եկեղեցական եռանդուն գործիչ ու գրչի մարդ, որ արդարացիորեն իր վրա է հրավիրել Հայ Եկեղեցու պատմության մասնագետների ու բանասերների ուշադրությունը՝ սկսած Մ. Օրմանյանից, Մ. Պոտուրյանից ու Մ. Աղավառնուց մինչև ավելի նորերը՝ Հ. Քյուրտյան, Հ. Ոսկյան, Ա. Մարտիրոսյան և ուրիշներ: Մարտիրոս Կաֆացուն կամ Քեֆեցուն (հավանաբար հանդուգն պահվածքի և դրիմեցի լինելու համար ժամանակակիցներից կոչված նաև «Թաթար Մարտիրոս») նախ և առաջ գնահատել են իր ժամանակակիցները՝ անվերապահ համակրանք, նույնիսկ հիացմունք արտահայտելով նրա նկատմամբ: Այդ մասին են վկայում իսաչատուր իսասպեկ երեցի չափածո տարեգրությունը, Երեմիա Չելեպի Քյոմսուրմյանի «Օրագրությունը», որոշ ձեռագրական հիշատակարաններ և այլն: Ղրիմեցու չափածո ժառանգությունն արժանացել է, մանավանդ, Մ. Պոտուրյանի, Ա. Մարտիրոսյանի և Հ. Ոսկյանի ուշադրությանը: Արտաշես Մարտիրոսյանը «Մարտիրոս Ղրիմեցի» գրքով (1958 թ.), ավելի ամբողջական, քան Մկրտիչ Պոտուրյանը, հրապարակ հանեց տաղասացի բանաստեղծական վաստակի արժեքավոր մասը՝ նրա կյանքին ու ստեղծագործությանը նվիրված հանգամանալից ուսումնասիրությամբ: Այդ գիրքն ի մի է բերում Ղրիմեցու մասին պահպանված հայտնի ու անհայտ մատենագրական բազմաքանակ փաստեր, քննաբար արժևորում նախորդների կատարած ուսումնասիրությունը և գիտական ավելի կատարյալ տեսքով ներկայացնում եկեղեցական գործչի ու բանաստեղծի դիմանկարը:

Որքան էլ հարուստ են Ղրիմեցու գործունեությանը վերաբերող տեղեկությունները, այնուամենայնիվ նրա կենսագրության հետ կապված որոշ կետեր դեռևս մնում են չպարզված: Ինչ խոսք, այդ կարգի յուրաքանչյուր նորահայտ վկայություն իր օժանդակությունը կրելի Ղրիմեցու կենսագրության բացերը լրացնելուն: Այժմ մեր տրամադրության տակ են երկու սկզբնաղբյուրներ՝ Ղրիմեցուն ժամանակակից մի աշխատություն և ձեռագրական մի հիշատակարան, որոնք լրացնում և ճշտում են մտցնում Ղրիմեցու կյանքի և գործունեության մասին մինչև այժմ ունեցած մեր պատկերացումներում:

Դրանցից առաջինը «Բռնի միություն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հոռովմայ. ժամանակակից յիշատակարանք» գիրքն է՝ հրատարակված Ս.-Պետերբուրգում

1884 թ. Կ. Եզյանի աշխատասիրությամբ: Այդտեղ լեհերենից Ստ. Մալխասյանցի գրաքար թարգմանությամբ տեղ է գտել Թեատիմյան միաբանության անդամ, 1663-1677 թթ. լեհաճալոց գաղութում, մասնավորապես Լվովում գործունեություն ծավալած Ալոյիսիուս Մարիուս Պիդուի¹ աշխատությունը՝ բաղկացած երկու բաժնից, որոնցում պատմվում է Լվովի պապական հայոց դպրանոցի հիմնադրման և հետագա գործունեության մասին ընդհուպ մինչև 1669 թ. ապրիլը (էջ 1-135): Դրանց կից ներկայացված է և օտարազգի կաթոլիկ անհայտ մի հեղինակի ընդարձակ շարադրանքը, թե ինչպես են Լեհաստանի հայերը մինչև 1676 թ. դավանափոխ եղել (հիմարկե՝ բռնությամբ) և միացել են կաթոլիկ Եկեղեցուն (էջ 137-270): Մեր հոդվածի համար կարևորություն է ներկայացնում Պիդուի աշխատությունը:

Պիդուն Կղեմես Գալանոսի (1610-1666) քարոզիչ-համագործակիցն էր: Երկուսով պայքարել են ի խնդիր լեհահայ ծաղկուն համայնքն ու եկեղեցիները կաթոլիկ դավանանքին ու ծեսին ենթարկելու՝ նեցուկ ունենալով Վատիկանն ու լեհական իշխանությունները, գործելով խարդախությամբ ու սուտ խոստումներով և կանգ չառնելով ոչ մի միջոցի առաջ: Սկսել են գործել 1663 թվականից՝ համակիրներ ունենալով Լվովի եպիսկոպոս տիրափռչակ Նիկոլ Թորոսովիչին և հայ ծախու այլ հոգևորականների: Կղեմես Գալանոսի մահվանից հետո, 1666 թ., Պիդուն ստանձնել է լվովյան դպրանոցի ղեկավարի պաշտոնը: Ազգությամբ ֆրանսիացի այդ գործիչն այնքան հիմնավոր է տիրապետել գրաքարին, որ 1668-1669 թթ. դպրանոցում կազմակերպել է աշակերտական թատրոն և քեմադրել իր հեղինակած հայալեզու թատերգությունները՝ «Մարտիրոսություն սրբոյն Հովսիսիւնի» և այլն²:

Վերոհիշյալ աշխատության առաջին բաժնում Պիդուն բավականին մանրամասն անդրադառնում և վավերագրում է Լեհաստանի, Թաթարստանի (Հոնաց աշխարհ, Ղրիմ) և Վալախիայի ու նրանց մերձակա տարածքների հայոց եկեղեցիների ու հոգևորականության՝ իրեն ժամանակակից վիճակը և հաճախ կարևոր տվյալներով հակաձեռն-համակաձեռն ներկայացնում այնտեղ գործող եկեղեցականներին ու կրոնավորներին: Այդ տվյալները, անշուշտ, վավերական են և հաշվի են առնվել թեատիմյան քարոզիչների գործունեության ընթացքում: Պիդուն, հոգևորականների անունները տալիս, նշում է նաև նրանց տարիքը՝ իբրև կարևոր հանգամանք:

Նրա աշխատության մեջ քարեքախտաբար հակիրճ խոսվում է նաև Ղրիմի այն քաղաքների (Կաֆա, Բալակլավա, Բախչիսարայ, Ղարասու, Կոզլով, Պերեկոպկա, ըստ հայկական անվանման՝ Որիբերան, Խրիմ կամ Սուրխաթ) և չորս գավառների մասին, որոնցում հայկական եկեղեցիներ ու վանք-սրբատեղիներ են եղել, մասնավորապես տեղեկություն է տրվում Ղրիմի հայոց հոգևոր առաջնորդի մասին. «Այս ամենայն քաղաքք եւ եկեղեցիք են ընդ իշխանութեամբ միոյ եպիսկոպոսի,

¹ Պիդու ընդ Սենտ Օլոն Լուի Մարի, ծնվ. 1637 թ. Փարիզում, վախճ. 1717 թ. Սպահանում:

² Դրանցից պահպանվել է միայն մշակած ողբերգությունը՝ տպագրված «Բազմավեպի» 1884-1886 թթ. համարներում:

գրել է Պիդուն՝ Զարդիս Մարտիրոս է անուն եպիսկոպոսին, որ ձեռնադրեալ է ի Յակոբոս կաթողիկոսէ եւ է յերիտասարդ հասակի, ամաց իբրեւ 35-ից»³:

Հիշատակվող Մարտիրոս եպիսկոպոսը, անտարակույս, Մարտիրոս Ղրիմեցին է, որը 1659 թ. մայիսի 25-ից մինչև 1660 թ. նոյեմբերը Պոլսի հայոց Պատրիարքն էր՝ եպիսկոպոսական պաշտոնով, թեև դեռևս եպիսկոպոս չդարձած⁴, ապա 1660 թ. նոյեմբերին զրկվելով պատրիարքի պաշտոնից՝ 1661 թ. հունվարից մվիրակ էր եղել Թուրքիայի արևելյան տարածքների՝ Անատոլիայից մինչև Ամիդ, որտեղից հասնելով Սուրբ Էջմիածին և ներկայանալով Հակոբ Զուղայեցի Կաթողիկոսին՝ ձեռնադրվել էր եպիսկոպոս և նշանակվել Ղրիմի հայոց առաջնորդ՝ այստեղ հաստատվելով ու պաշտոնավարելով մինչև 1664 թվականը: Իր աշխատության այդ մասը, հետևաբար և Մարտիրոսի մասին ծանուցումը, Պիդուն գրառել է նույն 1664 թվականին, ոչ ավելի վաղ, քանի որ 1663-ին նոր էր ժամանել Լվով, և որոշ ժամանակ էր պետք Ղրիմի հոգևոր վիճակին ծանոթանալու համար, և ոչ էլ 1664-ից ուշ, որովհետև, ինչպես տեսանք, 1664 թ. Մարտիրոսը հեռացել է Ղրիմից՝ Սսո կաթողիկոսից ապօրինաբար կաթողիկոս օծված Եղիազար Այնթապցու դեմ երկարատև (1664-1680 թթ.) պայքար ծավալելով, հանգրվանելով Պոլսում ու Երուսաղեմում, գործի բերումով՝ երբեմն էլ Օսմանյան կայսրության այլ վայրերում (Բալկաններ, Ադրիանապոլիս և այլուր): Պիդունի աշխատության մեջ առկա վերոբերյալ հատվածը բանասիրության կողմից չի նկատվել և հաշվի չի առնվել Ղրիմեցու կենսագրության վերաբերմամբ:

Ուրեմն նշված ժամանակ, այն է՝ 1664 թ., Ղրիմեցին եղել է մոտ 35 տարեկան: Նորից ենք ընդգծում, որ Պիդուն տարիները նշում է ոչ թե մոտավորի սահմաններում, այլ որքան որ համոզմունք ենք կազմել նրա այդ կարգի տեղեկություններից՝ ճշգրիտ տարիներով: Այս դեպքում նրա հաղորդածը կարող ենք ընկալել այնպես, որ Մարտիրոս եպիսկոպոսը եղել է 35-ից օր ու ամսով փոքր-ինչ պակաս տարիքում: Պիդուն տեղյակ է նաև, որ Ղրիմեցուն եպիսկոպոս է ձեռնադրել և ղրիմահայոց հոգևոր առաջնորդ կարգել Հակոբ Զուղայեցի Կաթողիկոսը (1655-1680): Հայտնի է, որ բոլոր շնորհների, առաքինի վարքի և օրինակելի գործունեության հետ միասին՝ եպիսկոպոսական օծում ստացողը նաև պետք է պահանջվող տարիքն ունենար: Եթե բացառիկ դեպքեր չկային, պահանջվում էր 50 տարեկան հասակ⁵: Իսկ Ղրիմեցին իր մտավոր զարգացմամբ, անսովոր ունակությամբ, հռետորական

³ «Բռնի միութիւն հայոց Լեհաստանի...», էջ 10:

⁴ Ղրիմեցին Պոլսի պատրիարք դառնալու վերաբերյալ իր բարձրացումը նշել է իր ստացած մի ձեռագրի 431-րդ էջում. «Ի թուականի մերոյ ՌԺԸ (1659) յամսեանն հոռովմայկանի ի մայիսի ԻԵ, օրն չորեքշաբթի, Հոգւոյն Սրբոյ Գալստեանն պահոց, կամօքն Աստուծոյ եւ հրամանաւ Քեօփրոյու Մեհմեթ փաշա վեզիրին զգեցաք զախլաթն արքունաբնաձեռն՝ պատրիարք անուամբ, որ է տեսուչ եւ դէտ եւ հովիւ կոչմամբ ի վերայ տեառնական հօտիս մեր, ի քաղաքս Ըստամպոյ, նուաստ վարդապետս Մարտիրոս Ղրիմեցի՝ աշակերտ տեառն Աստուածատրոյ Սուրբ Երուսաղեմայ Հայրապետի» (տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԼ դարի հիշատակարաններ», հատ. Գ, կազմեց Վ. Հակոբյան, Ե., 1984, էջ 854-855):

⁵ Հմմտ. Ա. Մարտիրոսյան, Մարտիրոս Ղրիմեցի, էջ 9-ի տողատակ:

ձիրքով ու մտասևեռ գործունեությամբ իսկապես բացառիկ անհատ էր, անվանի ռաբինապետ Աստվածատուր Տարոնեցի Պատրիարքի ազգանվեր աշակերտը, որ կարողանում էր տեղաշարժ առաջացնել հայ եկեղեցական ու ազգային կյանքի հակառուդարություններում: Անկախ փոքր տարիքից՝ Հակոբ Զուղայեցին նրան շնորհել էր եպիսկոպոսական աստիճան⁶: Չէ՞ որ դրանից առաջ էլ Ղրիմեցին ճշմանակվել էր Պոլսի հայոց Պատրիարք, մի պաշտոն, որի համար ևս պահանջվում էր եպիսկոպոսական աստիճան, մինչդեռ Ղրիմեցին միայն վարդապետ էր⁷:

Վերադառնալով գլխավոր խնդրին: Ուրեմն 1664 թ. Մարտիրոս Ղրիմեցին մոտ 35 տարեկան էր, հետևապես նրա ծնունդն ընկնում է 1629-1630 թթ. մեջ: Իսկ Ղրիմեցու ծննդյան թվականի հարցը մինչև օրս լուծված չէ և բանասիրական անհամաձայնությունների ու վեճերի տեղիք է տվել: Որոշումն ու ենթադրություններն սկսվել են Մ. Պոտուրյանով, ըստ որի «Մարտիրոս Ղրիմեցի ... կը ծնի ի Կաֆա 1605-ի ատենները»՝ աշակերտելով Ստեփանոս Թոխաթցի «ուսեալ տաղասաց» քահանային 1616-1620 թվականներին՝ Սուրխաթում (Կաֆայի մոտ), Ս. Նշան կամ Ս. Խաչ վանքում, և ապա՝ Թոխաթում (Եվդոկիա), ուր գնում է 1621 թ.⁸: Ստեփանոս Թոխաթցի տաղասացն իսկապես հետացել էր Ղրիմից (1619 թվականից հետո) և արդեն 1621 թ. վերաբաստատվել իր ծննդավայր Թոխաթում: Մարտիրոսը նրան աշակերտելու համար Ղրիմից պետք է հասներ Թոխաթ:

⁶ Մի այլ տեղեկության համաձայն, որ պահպանվել է Ղրիմեցու ստացած և Երուսաղեմի վանքին միջնորդած «Մեկնութիւն Եսայեայ» ձեռագրի գրիչ Վարդանի հիշատակագրության մեջ՝ 1658 թվականից, այդ տարի Մարտիրոսը Ղրիմի եպիսկոպոս-առաջնորդ է ճշմանակվել. «... յայսմ ամի կարողութեամբն Քրիստոսի եղև դէտ եւ իշխող աշխարհին Հոնաց» (տե՛ս Ն. եպս. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբյանց, հատ. Բ, Երուսաղեմ, 1967, ձեռ. թիվ 430): Երևի Մարտիրոսը մախապես եպիսկոպոսական պաշտոն ստացած է եղել Ղրիմի համար, բայց մնացել է Պոլսում, ճշմանակվել տեղի պատրիարք, և ապա 1661 թ. Հակոբ Զուղայեցին վավերացրել-ձեռնադրել է եպիսկոպոս Ղրիմի հոգևոր թեմում:

⁷ Ի դեպ, Ղրիմեցուն իր «Օրագրութեան» մեջ Երեմիա Քյոմուրճյանն իբրև վարդապետ է հիշատակում սկսած 1655 թվականից, մինչդեռ կա տեղեկություն այն մասին, որ այդ պատվին Ղրիմեցին արժանացել է 1656 թ. Աստվածատուր Տարոնեցու ձեռքով՝ Եղիազար Այնթապցու միջամտությամբ: Այն ժամանակ դեռևս կաթողիկոսական վեճերը բորբոքված չէին, Եղիազարն ու Մարտիրոսը միասին էին գործում, պայքարում Երուսաղեմի հունական համայնքի ոտնձգությունների դեմ՝ ազատագրելու Երուսաղեմի հայկական սրբավայրերը և հաստատելու համար տեղի հայ համայնքի ժառանգական իրավունքները եթովպական վանքերի ու կալվածքների մկատմամբ: Անկողմնակալ Երեմիա Չելեպի Քյոմուրճյանն իր «Օրագրութեան» մեջ հավաստում է Եղիազարի ու Մարտիրոսի բարեկամությունն ու դաշինքը 1650-ական թվականներին, երբ գրում է. «... Մարտիրոս վարդապետն, որ ուներ առ Եղիազարն ովստ սիրոյ առ միմեանս, թէ՛... զբանս մեր յառաջ տարցուր...» («Օրագրութիւն Երեմիա Չելեպի Քեօմուրճեանի», հրատ. Մ. արքեպս. Նշանյան, Երուսաղեմ, 1939, էջ 327): Երբ Եղիազարը հոյսների խարդավանքով կանգնած էր ձերբակալման ու դատապարտման վտանգի առաջ, Մարտիրոս Ղրիմեցու ջանքերով է, որ ազատվեց ու անպարտ համարվեց: Եղիազարի խնդրանքը Տարոնեցուն երախտագիտական հատուցում էր առ Ղրիմեցին:

⁸ Մ. Պոտուրյան, Միջնադարյան տաղասաց Մարտիրոս Ղրիմեցի և իր քերթվածները, Պոլսեռ, 1924-1930, էջ 50-60:

Ըստ Ա. Մարտիրոսյանի ևս Ղրիմեցիները եղել է Ստեփանոս տաղասացի աշակերտը, բայց աշակերտելով ոչ թե Ղրիմում, այլ Թոխաթում, 1620-ական թթ. կեսերից: Մարտիրոսյանի կարծիքով՝ Ղրիմեցիներն ծնված պետք է լինի 1620-ական թվականներին կամ նույնիսկ 1610-ական թթ. վերջերին⁹:

Երկու դեպքում էլ մենք գործ ունենք սխալ նույնացման հետ: Ոչ մի հիմք չկա Մարտիրոսի ուսուցիչ Ստեփանոսին և տաղասաց Ստեփանոս Թոխաթեցուն նույն անձը համարելու: Ղրիմեցիներն իր մի ինքնագիր հիշատակարանում պարզապես գրում է, որ Երուսաղեմի Պատրիարք Աստվածատուր Տարոնեցուց առաջ իր ուսուցիչը եղել է Ստեփանոս քահանան, որին ոչ իբրև տաղասաց և ոչ էլ Թոխաթցի է ներկայացնում, այսպես. «Եւ գիտեալոր ծնողս իմ՝ զմախնի ուսուցիչն իմ զտէր Ստեփանոս սրբազան քահանայն, որ հանգուցեալ է առ Քրիստոս...»¹⁰, - տեղեկացրել է նա: Հաշվի առնելով, որ Ստեփանոս Թոխաթցին մի ժամանակ ուսուցիչ է եղել Ղրիմում, գրել է երգիծական տաղ («Ոտանաւորս եւ զանգատս լուսնմուն եւ ճանճերուն՝ ի Թոխաթցի Ստեփաննոս իրիցուն ասացեալ»), Պոտոլյանը եզրակացրել է, որ Մարտիրոս Ղրիմեցու ուսուցիչը, ուրեմն, Ստեփանոս տաղասաց Թոխաթցին է եղել, որն իր սանին մղել է հետագայում գրելու երգիծական ոտանավորներ, այսինքն՝ նախապատրաստել է նրա երգիծական տաղանդը: Որպեսզի Ղրիմեցուն անպայման աղերսի Թոխաթցի տաղասացի հետ, Պոտոլյանը, ինչպես տեսանք, Ղրիմեցուն Ստեփանոսի աշակերտ է ներկայացնում նախ՝ Ղրիմի Սուրխաթում, ապա՝ Թոխաթում՝ ծնունդը դնելով 1605-ի մոտերքը: Հաշվի առնենք նաև, որ Ղրիմեցին Աստվածատուր Տարոնեցուն աշակերտել է վերջինիս Երուսաղեմի պատրիարք դառնալուց, այն է՝ 1645 թվականից հետո, ուսումը շարունակելով հավանորեն մինչև 1653-1654 թվականները: Եթե համաձայնենք Պոտոլյանի այն վարկածի հետ, թե Մարտիրոս Ղրիմեցին մինչև 1619 թ. արդեն Սուրխաթում միաժամանակ աշակերտել էր Ստեփանոս Թոխաթցուն, ապա պետք է կանգնենք մի անհարմարության առաջ. այդ դեպքում պետք է ընդունենք, որ Ղրիմեցու ուսումնառությունն սկսվել է մոտավորապես գոնե 1610-ական թթ. կեսերից և տևել մինչև 1650-ական թթ. սկզբները, այսինքն՝ շուրջ 40 տարի, որ ինքնին խիստ անհամոզիչ է:

Հայ ձեռագիր գրքի բազմափորձ գիտականերից մեկը՝ հանգուցյալ ամերիկահայ արվեստաբան-բանասեր Հարություն Քյուրտյանը, Պոլսի «Շողակաթ» պարբերականում 1952 թ. սեպտեմբերյան համարում հրատարակել է մի կարևոր հիշատակարան՝ քաղված Մարտիրոս Ղրիմեցու՝ 1653-1655 թթ. Պոլսում և Երուսաղեմում

⁹ Ա. Մարտիրոսյան, Մարտիրոս Ղրիմեցի, Ե., 1958, էջ 9-10:

¹⁰ Տե՛ս «Հայերեն ձեռագրերի ԺԷ դ. հիշատակարաններ», հատ. Գ, էջ 569: Մարտիրոսի հիշատակագրությունը 1653 թվականից է: Այդ ձեռագիրը Քարոզգիրք է, Գրիգոր Տաթևացու համանուն աշխատության «Ամարան հատորը», որը գրչագրված է 1651 թ., իսկ Ղրիմեցին այն գնել է 1653 թ. Երուսաղեմում: Այդ գրչագիրն այժմ պահվում է Զմմաթի վանքի մատենադարանում (ձեռ. թիվ 487): Հիշատակագրության մեջ Ղրիմեցին հիշման է արժանացնում նաև իր ծնողներին՝ Գրիգորին և Խաթունին:

օրինակած Քարոզգրքից¹¹: Հիշատակարանում Ղրիմեցին խոսում է իր ուսումնառության մասին: Դրանով իսկ հերքվում է Թոխաթում նրա սովորելու վերաբերյալ ենթադրությունը: Պարզ է դառնում, որ նա կրթություն է ստացել մանկության և պատանեկության տարիներին՝ Ղրիմի Ս. Խաչում (Սուրխաթի Ս. Նշան վանքում), ապա տարիների ընդհատումից հետո՝ Երուսաղեմում, նաև՝ Կ. Պոլսում, ուր ինչ-որ մեծ խոովության ու խժոժության պատճառով իր սանի հետ Երուսաղեմից հեռացել էր Տարոնեցին: Այդտեղ էլ Ղրիմեցին ավարտել է Սուրբ Գրոց ուսումը: Մեջբերենք հիշատակարանի՝ մեզ անհրաժեշտ հատվածները.

«Որ եւ ծնեալ եւ սնեալ եմ ի սահմանս հոնական (նկատի ունի Ղրիմը - Վ. Խ.), ի կողմանս հիւսիսային, ի մեծ կղզոջն Պոնտական ծովու, ի վաղաշէն մայրաքաղաք՝ կոչեցեալ Ղրիմ եւ Սուրխաթ (Սուրխաթը կոչվել է նաև Ղրիմ. այժմյան Ստաւրի կրիմն է - Վ. Խ.): Եւ ի մանկութենէ սկսեալ ինչ եղէ ունեալ ի Սուրբ Գրոց, քայց ոչ լիապէս, այլ միայն զգանաչումն տառից, եւ ի խորհրդոյն՝ ամենեւին անտեղի: Զոր եւ յետ քազում ժամանակի ոչ կամեցեալ զկորուստ զաստուածավայելոյն պարգետոյս եւ անարժան ժպրհմամբ յանդգնեալ մերձեցալ ի կարգս սուրբ քահանայական եւ կրօնատրութեան ... Եւ եկեալ ի սուրբ քաղաքս Երուսաղէմ՝ ետու զանձն իմ ի ծառայութիւն ի սուրբ տնօրինականս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, առ ոտս երից երանեալ երջանկապատիւ քաջ ընտանապետին Աստուածատուր՝ կոչեցեալ ճգնագեաց վարդապետին եւ անյաղջ փիլիսոփային՝ լընթերցումն Աստուածաշունչ Կտակարանաց Հմից եւ Նորոց: Եւ միմչդեռ ոչ էր կիսեալ ի ձեռս իմ կարգ սուրբ մատենիցս, յազդմանէ չարին մեծ իմն խոովութիւն աղմկեալ ի մէջ զազանաբարոյ բռնատրաց տեղոյս, եւ ելեալ փախստեալ դիմեալ գնացաք ի յարքայամիստ քաղաքն Կոստանդնուպոլիս եւ անդ ի շրջագայութեան գոլով՝ ընթերցեալ յաւարտումն արարաք վերոյ ասացեալ սկսեալ տառիցն ... աղօթիւք ի վերոյ գրեալ սուրբ հօր մերոյ եւ լուսատու հրահանգի»¹²:

Հիշատակարանի հատվածական մեջբերումը հիմք է տալիս որոշ եզրակացություններ անելու Ղրիմեցու կյանքի ընթացքի և ուսումնառության մասին՝ սկսած նրա ծնունդից մինչև 1655 թվականը: Ինչպես տեսանք, ըստ Պիդոլի հիշատակության՝ Մարտիրոսի ծնունդն ընկնում է 1629-1630 թթ. մեջ: Իսկ ձեռագրական հիշատակարանից իմանում ենք, որ նա ծնվել ու սնվել է («ծնեալ եւ սնեալ») հոնական սահմաններում, «ի մեծ կղզոջն Պոնտական ծովու» (իմա՝ Ղրիմի թերակղզում): Ծննդավայրը եղել է Կաֆան, իսկ կրթության վայրը՝ Սուրխաթ քաղաքը (Կաֆայի՝ այժմյան Թեոդոսիայի մոտ): «Սնեալ» բառը պետք է ընկալել ոչ միայն նյութական (սնվելու), այլև հոգևոր (ուսանելու) իմաստով: Ուրեմն կրթություն է ստացել Սուր-

¹¹ Զեռագիրը Բյուրյոյանի սեփական հավաքածուից է՝ ձեռք բերված Փարիզում 1925 թ.: Այժմ, բնականաբար, գտնվում է Ս. Ղազարի ձեռագրատանը՝ միաբանությանը նվիրաբերված Բյուրյոյանի հավաքածուում: Զեռագրի հիշատակարանը Ղրիմեցիով զբաղվող բանասերներին մինչև այժմ անհայտ է մնացել:

¹² Տես Հ. Բյուրյոյան, Մարտիրոս Ղրիմեցիի նորագյուտ մեկ ձեռագիրը, «Ծողակաթ», 1952, էջ 246:

խաթում՝ «ուսեալ ի Սուրբ Գրոց»։ Բայց քանի՞ տարի. դա պարզ չէ։ Կարևորն այն է, որ Թոխաթ գնալու և ուսումն այնտեղ շարունակելու մասին եմթադրությունը հերքվում է։ Սուրխաթում մյուս ուսուցիչը, ըստ զմեռյալ ձեռագիր «Բարոգորքում Ղրիմեցու թողած հիշատակագրության, իմացանք, որ եղել է «տէր Ստեփանոս սրբազան քահանայն», որ վախճանված էր, երբ Ղրիմեցին գալիս է Երուսաղեմ։ Ստեփանոս քահանան, որին երբեք չենք կարող նույնացնել Ստեփանոս Թոխաթցի տաղասացի հետ¹³, իր սանին ուսուցել է հավանորեն 1630-ական թթ. վերջերին և հաջորդ տասնամյակի սկզբի տարիներին։ Այդ է թելադրում առկա փաստերի տրամաբանությունը։

Մարտիրոսն Ստեփանոսի ձեռքի տակ յուրացրել էր որոշ գիտելիքներ՝ «ի Սուրբ Գրոց», սակայն, ինչպես ինքն է ծանուցում, «ոչ լիապէս, այլ միայն զգնահաշումն տառից, եւ ի խորհրդոյն՝ ամենեւին անտեղի» (ինքնանվաստացման խոստովանություն, որ բխում էր միջնադարյան քրիստոնյա գործչի համեստ կեցվածքից)։ Այնուհետև Մարտիրոսի ուսումնառությունն ընդհատվել է (գուցե ուսուցիչ Ստեփանոսի մահով) բավական երկար ժամանակով («բազում ժամանակաւ»), հաշվենք՝ մի քանի տարով, եմթադրելի է՝ մինչև 1640-ական թթ. վերջերը։ Այնժամ մա ցավով գիտակցել է, որ ափսոս է թերակիրթ մնալ և մոռացության տալ իր գիտելիքները՝ «աստվածավայելոյ պարգևները»։ զնացել է Երուսաղեմ (հավանաբար 20 տարին լրացած), աշակերտել Պատրիարք Աստվածատուր Տարոնեցի րաբունապետին և անհաղթ փիլիսոփային, հիմնովին խորացել-յուրացրել Ս. Գրոց գիտությունը, որոշ ժամանակ՝ Երուսաղեմում, իսկ հետո՝ Կ. Պոլսում։ Այդ գիտությունը, ամշուշտ, Ս. Գրքի աստվածաբանական մեկնությունն էր, սուրբգրային գաղտնիքներին, խորհրդավոր-այլաբանական գաղափարներին տեսականորեն հասու դառնալը։

Ցավոք, ինչպես Քյուրտյանի հրատարակած հիշատակարանը, այնպես էլ մատենագրական մյուս տվյալները հնարավորություն չեն տալիս պարզելու, թե Մարտիրոսը ո՞ր թվականից սկսած և քանի՞ տարի է աշակերտել Տարոնեցուն։ Չմոռանալով, որ վերջինս Երուսաղեմում պատրիարք էր սկսած 1645 թվականից, որոշ ընդհատումներով շարունակելով մնալ իր պաշտոնում մինչև մահը՝ 1671 թվականը։ Հաջորդել էր իր ուսուցիչ Գրիգոր Պարոնտեր Պատրիարքին։ Իբրև գիտելիքներ-

¹³ Ի դեպ, չենք կարող նույնացնել Ստեփանոս տաղասաց Թոխաթցու հետ, որովհետև մա Ղրիմից վաղուց վերադարձել էր Թոխաթ։ Հազիվ թե 1640 թ. կենդանի լիներ։ Հայտնի է տաղասացի ծննդյան թվականը՝ 1558։ 1640-ին մա կլիներ 82 տարեկան, բնականաբար Թոխաթից Ղրիմ տեղափոխվել և ուսուցչություն անել չէր կարող։ Ըստ մի տեղեկության՝ Ստեփանոս Թոխաթցի անունով մեկը այլ հրավիրվածների հետ Երուսաղեմում 1638 թ. մասնակցել է խորհրդածողովի (տե՛ս «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը [16-17 դդ.]», հատ. Ա, աշխատասիրությամբ Հ. Սահակյանի, Ե., 1986, էջ 709)։ Բայց այդ Ստեփանոս երեցին և տաղասացին հազիվ թե կարելի է նույնացնել, մանավանդ որ այդ շրջանում եղել են և ուրիշ Ստեփանոս Թոխաթցիներ. օրինակ՝ այդ անունով մեկին իր գրագրած Աստվածաշնչի հիշատակարանում 1622 թ. տակ հիշատակում է Գրիգոր Դարանաղցին (Կամախեցին)՝ իբրև Կոմբուլի Ս. Նիկողոս եկեղեցու քահանայի (տե՛ս «Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցոյ կամ Դարանաղցոյ», հրատ. Մ. Վ. Նշանյան, Երուսաղեմ, 1915, էջ 617)։

րի որոշակի պաշար ունեցող աշակերտ՝ Մարտիրոսին ուսման ընթացքն ավարտելու համար, թվում է, համեմատաբար քիչ տարիներ էին անհրաժեշտ: Ըստ ճիշատակարանի՝ Երուսաղեմում մա դեռ Ս. Գրքի կեսն էլ չէր յուրացրել («ոչ էր կիսեալ ի ձեռս իմ կարգ սուրբ մատենիցս»), երբ տեղի բռնավորների մեջ մեծ խռովություն ու աղմուկ է առաջանում, և ուսուցիչ ու աշակերտ հեռանում, ապաստան են գտնում Կ. Պոլսում: Այստեղ էլ Մարտիրոսն ավարտում է Ս. Գրոց ուսումը («յոլով ընթերցեալ՝ յաւարտումն արարաք վերոյ ասացեալ սկսեալ տառիցն...»¹⁴։

Ուսուցիչ ու սան Պոլիս են հանգրվանել մոտավորապես 1650-ական թթ. սկզբներին, հավանորեն մինչև 1651 թվականը: Եթե Ս. Գրքի մյուս կեսը՝ մնացած ավելի մեծ մասը յուրացնելու համար ևս երկու-երկուսուկես տարի նկատի ունենանք, ուրեմն համամասնաբար Մարտիրոսը Երուսաղեմում պետք է որ սովորած լիներ 1649-1650 թվականներից սկսած և ուսումը Պոլսում ավարտել է մոտավորապես 1653 թվականին, համեմայնելուս մինչև 1654 թվականը: Տարիների քանակի հաշվով ուսումնառության ժամանակը մոտավորապես հավասար կլինի 5 տարվա, 2 տարի՝ Երուսաղեմում, 2-3 տարի՝ Պոլսում (1649-1654 թթ. սահմանում): Դրանից հետո մայրաքաղաքում «տարի մի բոլոր» զբաղվել է Քարոզգիրքը գրելով՝ 26 պրակ ծավալով: Ապա վերադարձել են Երուսաղեմ: Այստեղ Մարտիրոսը շարունակել է գրչությունը՝ ուրիշ գրիչների ևս մասնակից դարձնելով («զորն այլք գրեցին»)՝¹⁵ և ամբողջն ավարտի հասցրել 1655 թ. հունիսին:

Մի անգամ ևս վերհիշենք Պիդուի վկայությունը Մարտիրոսի տարիքի մասին՝ 1664 թ. սահմանում՝ «եւ է յերիտասարդ հասակի, ամաց իբրեւ 35-ից»: Ասվածի վավերականությունը հաստատող վկայություն են խաչատուր խասպել երեք Կաֆացու չափածո տարեգրության հետևյալ տողերը, որոնք, ինչպես բանասեր Ա. Մարտիրոսյանն է նկատել, գրված են 1657 թվականին.

Սայ է Հոնաց աշխարհի
 Ի դրանէ Սուրբ Նշանի,
 Պարծանքն է Խրիմի
 Եւ վարդապետն Կաֆացի:
 Տղայ գոլով մանուկ բարի՝
 Արժան լինի խորին ծերի¹⁶:

¹⁴ Հ. Բյուրտյան, տե՛ս նշված հրապարակումը, էջ 247: Բյուրտյանը շփոթաբար այդ թվականը հասկանում է ոչ թե Մարտիրոսի ուսումն ավարտելու, այլ Քարոզգիրքը գրչագրելու-վերջացնելու առումով, այն դեպքում, երբ ճիշատակարանում որոշակի նշված է Քարոզգրքի գրչության ավարտի թվականը՝ 1655 թ. հունիսի 25-ին (տե՛ս Բյուրտյանի հրապարակումը, էջ 246):

¹⁵ Նույն տեղում

¹⁶ Տե՛ս Ա. Մարտիրոսյան, Մարտիրոս Ղրիմեցի, էջ 8-9:

Արդեն դիտված է, որ սովորականից ավելի վաղ վարդապետական կոչման հասած երիտասարդ Ղրիմեցին, Երեմիա Չելեպի «Քյոմուրճյանի «Օրագրութեան» հավաստմամբ, 1657 թ. օգոստոսի 13-ին Պոլսից այցելել է հայրենի Կաֆա՝ հաջողելու համար ինչ-որ գործ՝ կապված թաթար իշխանավորների հետ («որ առ գլխատրս թաթարին»)՝¹⁷։ Նրա հետ հանդիպման տպավորության տակ էլ իր հիացական տողերն է գրել խասպեկ երեցը, որի ընկալմամբ Մարտիրոսը եղել է բոլորովին երիտասարդ։ Խասպեկն իր հայրենակից գործչին մաղթում է երկար կյանք՝ «Արժան լինի խորին ծերի»։ Ինչպես տեսնում ենք, ապառնի ժամանակի հետ կապված բարեմաղթությունը մա արտահայտել է բայի ներկա ժամանակի ձևով (ոչ թե *արժան լիցի* կամ *լիճիցի, եղիցի*, այլ *արժան լիճի*), բայց նրա ապառնի առումը (*արժանի դառնա*) տարակույսի տեղիք չի տալիս¹⁸։ Պիղուն դրանից 7 տարի հետո է հիշատակել Մարտիրոսին։ Երբ խասպեկն իր տողերն էր գրում, Մարտիրոսը 27-28 տարեկան էր (*տղա* և *մանուկ* բառերի հարադիր գործածությունը նրա ջանքերում է ընդգծում), իսկ Պիղունի ժամանակ՝ մոտ 35 տարեկան։

Եթե Մարտիրոս Ղրիմեցու ծննդյան թվականի և կենսագրության որոշ հանգամանքների վերաբերյալ մեր լուսաբանությունը և լրացումները ճշմարտամոտ են, ապա պետք է ընդունենք, որ Հայ Եկեղեցու և ազգային-քաղաքական կյանքի խընդիրներին անմնացորդ մվիրված այդ գործիչը, երբ 1683 թ. օգոստոսին Երուսաղեմ վերադարձին վախճանվեց Եգիպտոսում, ընդամենը 54 տարեկան էր։

¹⁷ Հմմտ. «Օրագրութիւն Երեմիա Չելեպի Քէօմիւրճեանի», հրատ. Մ. արքեպս. Նշանյան, Երուսաղեմ, 1939. էջ 263, 273 և 292։

¹⁸ Մեզ թվում է՝ իզուր է շատ հասկանալի այդ տողի ժամանակային իմաստը վեճի առարկա դարձնում բազմաթիվ բանասեր Համազասպ վ. Ոսկյանը (տե՛ս Հ. Ոսկյան, Չորս հայ տաղասացներ և անոնց տաղերը, Վիեննա, 1966, էջ 179-181-ի տողատակ)։

ԱՎԵՏԻՍ ՀՄԱՅԱԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆ ՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ՝

Բացի թուրքական տիրապետության տակ գտնվող Բասենից, գաղթականներ կային նաև ռուսական տիրապետության տակ գտնվող Բասենի մի շարք գյուղերում (Սթափան, Բաշքետ, Արմուշլի, Կրոշկելտի, Չուրաք-Ձորախլի, Ուլու, Ղըզըլ և այլն), որոնց վիճակն ավելի հուսափատական էր: Նրանց թվաքանակը հասնում էր 1500 հոգու կամ՝ շուրջ 200 ընտանիք, որոնց մեծամասնությունը ալաշկերտցի կանայք էին⁵⁶: Ռուսական Բասենում գաղթականների օգնության գործն իր վրա էր վերցրել Հայկական կենտրոնական կոմիտեի տեղական բաժանմունքը, որը 3 ամսվա խոստումներից հետո, 1916 թ. հունիսի վերջերին, կարողացավ ընդամենը 2 վագոն ալյուր ուղարկել շրջանի Բաշ գյուղ⁵⁷:

Գնալով մեծամուտ էր Բասենի շրջանի գաղթականության թիվը: 1916 թ. դեկտեմբերին այնտեղ ապրում էին 14000 գաղթականներ⁵⁸, իսկ 1917 թ. հուլիսին այդ թիվը հասավ 15000-ի⁵⁹:

Ռուսական բանակի կողմից Տրապիզոնը գրավելուց մի քանի օր անց, գաղթականներին օգնելու նպատակով, Բաթումից Տրապիզոն ժամանեցին ԿՀԲԸ Բաթումի մասնաճյուղի և տրապիզոնցիների Հայրենակցական միության Բաթումի ներկայացուցիչները, որոնք համապատասխան դրամական և պարենային օգնություն ցույց տալուց բացի, գաղթական երեխաների համար բացեցին ապաստարան և որբանոց⁶⁰: Իսկ 1916 թ. ապրիլի 10-ին, Տրապիզոնի գրավումից 5 օր հետո, արևմտահայերի և արևելահայերի միջնորդությամբ և պետական իշխանությունների թույլտվությամբ, քաղաքում կազմակերպվեց 8 հոգուց բաղկացած մի համաձայնագրով, որի կազմի մեջ մտան հայերից (3 հոգի), հույներից (3 հոգի), թուրքերից (1 հոգի) և պարսիկներից (1 հոգի) բաղկացած ներկայացուցիչներ: Համաձայնագրով, որը գործում էր քաղաքային ինքնավարությանը կից, ուներ որոշակի նպատակ: Այն պետք է ի հայտ բերեր և ցուցակագրեր Տրապիզոնի շրջանի հայապատկան սեփականությունները և դրանք վերցնել իր տնօրինության ներքո⁶¹:

* Սկիզբը տե՛ս № 7, էջ 82:

⁵⁶ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 1, գ. 424, թ. 6:

⁵⁷ «Հորիզոն», 1916 թ. հուլիսի 26, թիվ 164:

⁵⁸ «Համբավաբեր», 1916 թ. դեկտեմբերի 11, № 49:

⁵⁹ «Աշխատանք», 1917 թ. հուլիսի 19, № 22:

⁶⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 169, թ. 29:

⁶¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 51, ց. 1, գ. 23, թ. 13:

Հաշվի առնելով կոտորածների հետևանքով հայերին հասցված վնասները, Տրապիզոնը գրավող զեներալ Լյախովը 1916 թ. ապրիլի 19-ին հիմնեց գաղթականությանը օգնող Հայկական կոմիտե, որը փաստորեն վերակազմավորված վերոհիշյալ հանձնաժողովն էր⁶²: Այն բաղկացած էր 3-5 անդամներից, որոնք ընտրվում էին տեղական հայկական համայնքի ժողովի կողմից՝ ԿՀԲԸ Խորհրդի ներկայացուցչի հսկողության ներքո, և հաստատվում նույն՝ ԿՀԲԸ Խորհրդի կողմից⁶³: Կոմիտեի նախագահ ընտրվեց Բաթումի վանական Մելլանը: Կոմիտեին կից գործում էր 3 հոգուց բաղկացած հատուկ վերահսկիչ հանձնաժողով, որի անդամներն ընտրվում էին հայկական համայնքի ժողովի կողմից:

Գեներալ Լյախովը լայն իրավունքներ ընձեռեց Հայկական կոմիտեին: Վերջինս, հաստատված իր իսկ կանոնադրության համաձայն, նպատակ ուներ փնտրել, գտնել և խնամել հայ որբերին և կանանց, օգնություն հասցնել ընչազուրկ հայերին, ինչպես նաև հավաքել, պահել և վաճառել հայապատկան սեփականությունները: Տրապիզոնի շրջանի հայերի շարժական և անշարժ գույքը կառավարելու, ինչպես նաև պատերազմից տուժած հայերին օգնություն ցույց տալու համար հրապարակվեց Տրապիզոնի Հայկական կոմիտեի 10 կետից բաղկացած հրահանգը, որի համաձայն ստեղծվեց հայերի շարժական և անշարժ գույքը կառավարելու համապատասխան վարչություն⁶⁴:

1916 թ. դեկտեմբերի 1-ին Հայկական կոմիտեն վերսկսեց իր ընդհատված գործունեությունը, որը շարունակվեց մինչև 1917 թ. փետրվարի 1-ը: Կոմիտեի նորընծա նախագահ դարձավ երդվյալ հավատարմատար Ա. Առաքելյանը⁶⁵: Կոմիտեն կազմեց Տրապիզոնի 426 հայկական տների վիճակագրությունը, որից պարզվեց, որ 131-ը գտնվում էին բոլորովին ավերված վիճակում, 101-ը՝ կիսաքանդ էին, և միայն 194-ն էին, որ մնացել էին կանգուն: Վիճակագրության համար կոմիտեի կողմից արձանագրվեցին նաև քաղաքի 141 խանութները:

Իր հետևողական և սկզբունքային գործունեության շնորհիվ, կոմիտեին հաջողվեց փրկել Տրապիզոնի շրջանի 16000 հայ բնակիչներին պատկանող շարժական և անշարժ գույքի միայն մի մասը: Ոչնչացումից փրկվեց 10000 ռ. արժողությամբ անշարժ և 30000 ռ. արժողությամբ շարժական գույք⁶⁶: Համապատասխան միջոցառումներ իրականացվեցին ծնողակորույս երեխաների որոնման ուղղությամբ: Կոմիտեն ամխուսափելի կործանումից փրկեց շուրջ 200 հայ երեխաների, որոնց մի մասին ուղարկեց ԿՀԲԸ Բաթումի որբանոց: Կոմիտեն մեծ աշխատանք կատարեց նաև շրջանի գաղթականությանը դրամով և բնամթերքով օգնելու գործում: Իր գոր-

⁶² Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 169, թ. 29, նաև ֆ. 28, ց. 1, գ. 1033, թ. 18, նաև «Համբավաբեր», 1917 թ. մայիսի 19, № 11:

⁶³ Նույն տեղում, ֆ. 28, ց. 1, գ. 1033, թ. 19:

⁶⁴ Центральный Государственный Военно-Исторический Архив Российской Федерации /ЦГВИА РФ/, ф. 2100, сп. 1. д. 272, лл. 64-65, նաև ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 28, ց. 1, գ. 1033, թ. 77:

⁶⁵ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 169, թ. 29-30, նաև ֆ. 28, ց. 1, գ. 1033, թ. 31:

⁶⁶ Նույն տեղում, ֆ. 28, ց. 1, գ. 1033, թ. 31:

ծունեության տարբեր շրջաններում կոմիտեն օգնության կարոտ հայերին հատկացրեց մինչև 8000 ռ. ֆինանսական օգնություն⁶⁷:

Բացի գաղթականական կոմիտեից, Տրապիզոնում գործում էր մահ 100-ից ավելի անդամներ ունեցող ԿՀԲԸ տեղական մասնաճյուղը, որը զբաղվում էր տեղացի կարիքավորներին ու մորեկ գաղթականներին պահելու և խնամելու գործերով:

Տրապիզոնում հիմնվել էր մահ Եղբայրական օգնության տեղական կոմիտե, որի գործունեության ոլորտի մեջ էր մտնում որբանոցների և դպրոցների հոգածությունը:

Հայ գաղթականներին օգնում էր մահ քաղաքների միության Տրապիզոնի բաժանմունքը, որը 1916 թ. մայիս-հունիս ամիսներին Տրապիզոնի շրջանի մի շարք վայրերում (Օֆում, Խումուրյանում, Դրոնայում, Պլատանայում և Ջևիզլիկում) բացել էր 5 պարենային-թոշկական կետեր, 5 բաղնիքներ, 4 թեյարաններ, 4 կենսամթերքների պահեստներ, ինչպես մահ կենտրոնական դեղատուն, ամբուլատորիա, որբանոց և գաղթականների համար ժամանակավոր հանգրվան՝ Տրապիզոնում⁶⁸: Սննդատու կետերն օրական սպասարկում էին մինչև 1750 գաղթականների և հաճախ բաժանում 2 ֆունտ ալյուր: Փախստականներին խնամելու, սննդատու կայաններին կանոնավոր կերպով մթերքներ մատակարարելու և փոխադրական սալլերի թիվը ավելացնելու նպատակով, Քաղաքների միության կովկասյան բաժանմունքը Տրապիզոնի շրջանին ամսական հատկացնում էր 59985 ռ.⁶⁹:

Տրապիզոնում իր բարեգործական պարտքն էր կատարում մահ Մոսկվայի Հայկական կոմիտեի տեղական բաժանմունքը, որը Տրապիզոնում բացել էր 75 մահճակալով հիվանդանոց⁷⁰:

1916 թ. գարնանը, երբ ոռոսական բանակը գրավեց Տրապիզոնը, աշխուժություն նկատվեց մահ դպրոցական-կրթական գործում: Վերապրող 7-800 հայեր նախկին Ադջկանց վարժարանի շենքում բացեցին որբանոց-դպրոց: Ապա սկսեց գործել նախկին ազգային-լուսավորչական վարժարանը, ուր սկսեցին հաճախել 60-70 աշակերտներ: Դրանց զուգահեռ վերաբացվեց մահ Մխիթարյան երկսեռ վարժարանը, ուր սովորում էին 50 աշակերտներ⁷¹: 1917 թ. հունվարից իր կրթական գործունեությունը սկսեց մահ Տրապիզոնի հայոց տարրական դպրոցը, ուր սովորում էին 44 որբեր և պաշտոնավարում քույր ու եղբայր 2 ուսուցիչներ⁷²:

⁶⁷ Նույն տեղում:

⁶⁸ ЦГИА РГР, ф. 520, оп. 1, л. 45, л. 97, մահ «Հորիզոն», 1917 թ. հոկտեմբերի 4, № 221, մահ «Արև», 1916 թ. հոկտեմբերի 6, № 221:

⁶⁹ «Հորիզոն», 1916 թ. սեպտեմբերի 17, № 207:

⁷⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 393, ց. 1, գ. 213, թ. 1:

⁷¹ Արմ. Կոթիկյան, Դպրոցա-թատերական կյանքը Տրապիզոնում (1815-1915), «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1962, № 7:

⁷² ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 169, թ. 30:

1917 թ. հուլիսին Տրապիզոնի շրջանում ապաստանել էին 5000, իսկ քաղաքում՝ 2000 գաղթականներ, որոնք փախել էին Դիարբեքլիից և Խարբեքլիից⁷³: Կոտորածներից փրկված տրապիզոնցի հայերի թիվը կազմում էր ընդամենը 586 հոգի⁷⁴:

Այսպիսով, ոռոսական բանակի դեպի Սամսոն շարժվելու շնորհիվ Տրապիզոնի թիկունք դառնալու հանգամանքը, ինչպես նաև բարեգործական հաստատությունների անխափան աշխատանքը հնարավորություն էր ընձեռել Տրապիզոնի հայ բնակչությանը՝ ունենալ բնակարան, անհրաժեշտ քանակությամբ հագուստեղեն և տնային կահ-կարասի:

Առաջին համաշխարհային պատերազմի մախօրյակին Բայբուրդն ուներ 16000-ի հասնող հայ ազգաբնակչություն, սակայն կոտորածների և աքսորների հետևանքով 1916 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին քաղաքում մնացել էին ընդամենը 200 կանայք և որբ երեխաներ⁷⁵:

Նույն ժամանակաշրջանում Բայբուրդի՝ Դըսանդա, Հընդի, Լսոնք գյուղերում հանգրվանել էին 450-500 գաղթական հայեր, որոնք գտնվում էին անօգնական վիճակում⁷⁶: 1916 թ. սեպտեմբերի 17-ին Անդրամիկին ուղղված իր մամակում Սեպուհը մշում էր. «Արցունքն աչքերիս դիմում եմ քեզ: Ամեն տեղ, ամեն դուռ զարկի, բայց բոլոր դռները ամուր գոց և սրտերը կարծրացած տեսա: Ոչ մի տեղից պատասխան, օգնություն չստացա: Երեք ամիս է անցել այն օրից, երբ Բաբեքոյը գրավված է և ոչ մի մպաստաբաշխ մարմին տեղս ազատվածներին օգնություն չի հասցրած: Ծարս կտրել եմ և հրապարակով դիմում եմ քեզ, հաճում և ի սեր ընկերության. դու դիմիր, ուր որ հարկն է, գուցե քո ազդու կոչերով մեղմացնես քար սրտերը՝ այս թշվառներին օգնություն հասցնելու համար...»⁷⁷:

Սկզբնական շրջանում Բայբուրդի գաղթականներին օգնություն էր հասցվում Թուրքեստանյան 2-րդ կորպուսի կոմենդանտ, կապիտան Անդրյուշենկոյի մախաձեռնությամբ, իսկ հետագայում օգնության գործը իրենց վրա վերցրին պարետային վարչության սպա Փիրումովը և անասնաբույժ Օզանեստովը⁷⁸: Հաշվի առնելով Բայբուրդում տիրող պարենային ճգնաժամը, ինչպես նաև այն հանգամանքը, որ գաղթականները շրջակա գյուղերից էին, որտեղ բերքը դեռ չէր հավաքվել, թվով 425 գաղթականներ վերաբնակվեցին իրենց մայրենի գյուղերում:

1916 թ. մարտին Դիադիմի գավառն ուներ 17000 բնակչություն, որից 6000-ը տեղացի հայեր էին, իսկ 6000-ն էլ՝ տեղացի եզդի ազգաբնակչություն: Բացի դրանից, գավառում տեղաբաշխված էին նաև 2500 հայ և մուսլման էլ եզդի գաղթականությո-

⁷³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 393, ց. 1, գ. 213, թ. 1:

⁷⁴ Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 169, թ. 30:

⁷⁵ «Համբավաբեր», 1916 թ. սեպտեմբեր 4, № 36:

⁷⁶ «Հորիզոն», 1916 թ. հոկտեմբերի 5, № 22:

⁷⁷ Նույն տեղում, 1916 թ. հոկտեմբերի 8, № 225:

⁷⁸ «Հորիզոն», 1916 թ. հոկտեմբերի 8, № 225:

յուն⁷⁹, որոնք հիմնականում փրկվել էին վանի մահաճոհից: Օրջանի գաղթականությունը ստանում էր պետական մպաստ: Նրանց ցույց էր տրվում մահ բժշկական և պարենային օգնություն, Մոսում գյուղում բացվել էր Մոսկվայի Հայկական կոմիտեի 25 մահաճակով հիվանդանոցը, մույն կոմիտեի սպառողական խանութը և մթերքների պահեստը: Գործում էր մահ Մոսկվայի Հայկական կոմիտեի տեղաբաշխիչ կայանը, որտեղից գաղթականներ էին տեղափոխվում Աշտարակ և Կուրդուկույի⁸⁰:

Գավառի մյուս շրջաններում բացակայում էր բժշկական օգնությունը և անկանոն ձևով իրականացվում էր պետական մպաստի բաշխումը, որը հիմնականում պայմանավորված էր գավառի այդ շրջաններում բարեգործական ընկերությունների և անհրաժեշտ ծառայողական անձնակազմի բացակայությամբ:

1916 թ. վերջերին և 1917 թ. սկզբներին Մոսումի և Դիադիանի շրջանի գաղթականության թիվը աճեց՝ հասնելով 7000-ի⁸¹: Ինչ վերաբերում է գավառի բուն ազգաբնակչությանը, ապա համաձայն գեներալ-մայոր Ա. Թամամշևի որոշման, պետական մպաստի օրենքը տարածվում էր միայն եզդիների վրա: Աղքատացած հայ բնակչությունը, որը կորցրել էր և՛ բնակարանը, և՛ անասունները, և՛ գյուղատնտեսական գործիքները, և՛ տնային կահ-կարասին, մի խոսքով՝ ամեն ինչ, ոչնչով չէր տարբերվում գաղթականությունից և գտնվում էր մեծ կարիքի մեջ:

Սվազում տեղահանություններից և կոտորածներից զերծ էին մնացել բուն կերպով մահմեդականություն ընդունած և ամերիկյան միսիայի հովանավորության ներքո ապաստանած 40-50 տեղաբնիկ հայկական ընտանիքներ⁸²: Միևնույն ժամանակ մահմեդականություն ընդունած 500 հայ արհեստավորներ էլ հարկադրաբար աշխատում էին թուրքական բանակի համար:

Երզնկայի գրավումից հետո փոխվեց թուրքական կառավարության վերաբերմունքը հայերի նկատմամբ: Հաշվի առնելով ռուսական բանակի առաջխաղացումը, թուրքերն իրենք սկսեցին խնդրել, որ հայերն իրենց մոտ ապաստանեն՝ ռուսների թվագ հասնելու դեպքում նրանց կողմից պաշտպանություն ստանալու հույսով:

1916 թ. օգոստոսի 1-ին Սվազում հանգրվանել էին 1000-1500 գաղթականներ, որոնցից 50 ընտանիքներ եկել էին Սամսոնից, Թոքատից, Ամասիայից և հարևան այլ շրջաններից⁸³: Իրադարձությունների անբարենպաստ բերումով շրջանի 70 որբերի խնամքն իր վրա էր վերցրել շվեյցարական որբանոցը⁸⁴: Չնայած շրջանում անհրաժեշտ քանակով սննդամթերք, սակայն բնակչությունն ուներ դրամի պակասություն:

⁷⁹ ЦГИА РГр, ф. 520, сп. 1, д. 13, л. 37, так же, д. 35, л. 118.

⁸⁰ Նույն տեղում:

⁸¹ «Арм не и война» 1917 г. и январь-евраль 11-12:

⁸² «Հորիզոն», 1916 թ. սեպտեմբերի 14, № 204:

⁸³ Նույն տեղում, մահ «Арм не и война» 1916 г. и ок2 бры № 8.

⁸⁴ Նույն տեղում:

1916 թ. մարտ-ապրիլ ամիսներին Բիթլիսում և նրա շրջակայքում բնակվում էին շուրջ 800 գաղթականներ⁸⁵, որոնք գտնվում էին անասելի ծանր վիճակում: Նույն թվականի հունիս-հուլիս ամիսներին գաղթականության թիվը, համաձայն գեներալ-մայոր Ա. Թամամշևի վկայության, հասավ 11000-ի⁸⁶, սակայն փախստականների թշվառ վիճակը չփոխվեց: Իր հետագրերից մեկում Սեպուհը 1916 թ. ամռանը նշում էր, որ «ամեն օր այստեղ են գալիս 50-60 փախստականներ՝ կանայք, երեխաներ և տղամարդիկ: Այլուր և հագուստ բոլորովին չկա: Հեռագրվեց վաճառք, բայց այնտեղից ո՛չ ուտելիք ուղարկեցին և ո՛չ էլ հագուստ: Խնդրում ենք կարգադրեք օգնելու, այլապես շատերը կմեռնեն սովից»⁸⁷:

Սովալլուկ և անապատում գաղթականներին օգնելու և մասնավորապես Բիթլիսի փախստականների համար սննդատու կայան հիմնելու ու 500 ձեռք հագուստեղեն գնելու նպատակով գաղթականական գործի գլխավոր լիազոր գեներալ-մայոր Ա. Թամամշևը Բիթլիսում գործող Քաղաքների միության կովկասյան բաժանմունքի տեղական մասնաճյուղի տրամադրության տակ դրեց 12600 ռ.⁸⁸:

Միջոցներ էին ձեռնարկվում նաև քրդերի մոտ գերության մեջ գտնվող Բիթլիսի շրջանի շատ գաղթականների ազատման ուղղությամբ, որոնցից յուրաքանչյուրի համար վճարվում էր 1 օսմանյան ոսկի (մոտավորապես 18 ռ.):

Երևանի նահանգապետին ուղղված իր 1915 թ. նոյեմբերի 6-ի թիվ 28815 հեռագրում գեներալ-մայոր Ա. Թամամշևը հայտնում էր, որ ի լրումն սենատոր Պետերսոնի հոկտեմբերի 30-ի թիվ 27629 հեռագրի կովկասյան բանակի գլխավոր հրամանատարը, հաշվի առնելով Դիադինի, Բայազետի և Ալաշկերտի շրջաններում ստեղծված անբարենպաստ վիճակը, թույլատրել էր վերոհիշյալ շրջաններ վերադառնալ միայն այն գաղթականներին, որոնք մինչև պատերազմն ապրել էին այդ վայրերում: «Թեև դեռ շարունակվում է պատերազմը, գրում էր Հովհաննես Թումանյանը, բայց Ալաշկերտի հայ ժողովուրդը, որ հեռացել էր ռուսաց զորքի նահանջի ժամանակ, նորից ռուսաց զորքի հետ վերադառնում է իր տները՝ Եփրատի հովիտը»⁸⁹:

Միաժամանակ արգելվում էր այլ վայրերից հիշյալ շրջանները գաղթականների տեղափոխումը, քանի որ նրանք կարող էին ընկնել առավել ծանր կացության մեջ⁹⁰: Այս որոշումն անշեղ գործադրվեց մինչև 1916 թ. մայիսի վերջերը: Հետագայում, զարմանալիս աշխատանքների ավարտման և ռուսական բանակի հաղթանակների շնորհիվ, երբ ռազմաճակատի գիծը փոխադրվեց Արևմտյան Հա-

⁸⁵ «Армяне и война», 1916 г., апрель-май, № 2.

⁸⁶ Նույն տեղում:

⁸⁷ «Վան-Տոսպ», 1916 թ. հուլիսի 24, № 35:

⁸⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 27, ց. 1, գ. 226, թ. 47, նաև «Հորիզոն», 1916 թ. հունիսի 16, № 132:

⁸⁹ Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1951 թ., էջ 309:

⁹⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 50, ց. 1, գ. 48, թ. 131, 133, 178, գ. 49, թ. 131, նաև ֆ. 223, ց. 1, գ. 30, թ. 1, նաև ֆ. 102, ց. 1, գ. 1057, 1-ին մաս, նաև ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 157, նաև ֆ. 70, ց. 1, գ. 164, թ. 155, գ. 436, թ. 73, նաև ЦГА РГР, ֆ. 520, сш. 1, д. 34, л. 4, 5, 24.

յաստանի խորքերը, թույլատրվեց հիշյալ շրջան վերադառնալ մասն ալ վայրերի գաղթականներին:

Միմյնն պատերազմը Բայազետի գավառն ուներ 6000 բնակիչ, որոնցից 3000-ը հայեր էին, 2700-ը՝ քրդեր, իսկ 300-ը՝ եզդիներ⁹¹: 1916 թ. մարտին Բայազետի գավառում ապրում էին 933 գաղթականներ, որոնցից 733-ը հայեր էին, իսկ 200-ը՝ եզդիներ⁹²: Իսպառ ավերվել էին շրջանի շուրջ 3500 տներ, որոնց կորուստը կազմում էր 9450000 ռ.⁹³: Միմյնն մայիսի վերջը Ալաշկերտ-Ղարաքիլիսայի շրջան վերադարձան մոտ 1800 տղամարդ գաղթականներ, որոնք ներկայացնում էին շրջանի 1200-1500 ընտանիքներ⁹⁴:

1916 թ. հունիսին Ալաշկերտի հայությունը, որ բաղկացած էր հիմնականում տղամարդկանցից, տեղաբաշխված էր մույն շրջանի 30 գյուղերում: Ընտանիքի անդամների թիվը յուրաքանչյուր գյուղում չէր անցնում 120-140-ից: Կային մասն գյուղեր, որտեղ տեղավորված էին ընդամենը 2-3 ընտանիքներ: Միջին հաշվով, ամբողջ Ալաշկերտում գտնվող ընտանիքների թիվը հասնում էր 1500-ի⁹⁵: 1917 թ. փետրվարին Ալաշկերտի բնակչության թիվը հասավ շուրջ 7500-ի (որից 1700-ը՝ ծերեր և անաշխատունակներ էին, 2400-ը՝ կանայք, 1100-ը՝ միմյնն 5 տարեկան, և 2300-ը՝ 5-14 տարեկան երեխաներ)⁹⁶: Իսկ մույն թվականի աշմանը կային արդեն 9600 գաղթականներ⁹⁷:

1915 թ. սեպտեմբերի 15-ին կազմակերպվեց Եղբայրական օգնության Ալաշկերտի կոմիտեն, որը, Կովկասյան 4-րդ կորպուսի հրամանատար գեներալ Օգանովսկու կողմից վավերացվելուց հետո, սկսեց իր գործունեությունը: Կոմիտեի տրամադրության տակ դրված գումարներով հոկտեմբերին ձեռք բերվեց և Մոսում ու Արծափ տեղափոխվեց մոտավորապես 5000 կոտ ցորեն⁹⁸: Միաժամանակ գաղթականներին օգնելու նպատակով գավառում գործում էր գաղթականական կոմիտե՝ Բայազետի գավառապետ, կապիտան Կարտիշևսկու նախագահությամբ: Կոմիտեի կազմի մեջ, բացի գավառապետի գրասենյակի անդամներից, մտնում էին մասն հայ հոգևորականության ներկայացուցիչներ⁹⁹:

Գյուղատնտեսության վիճակի բարելավման գործում մեծ դեր խաղացին Հայկական գյուղատնտեսական ընկերության և Եղբայրական օգնության կոմիտեի կողմից գործողված հրահանգիչները, որոնք ժամանակին բաժանեցին սերմացու, դրամ, լծկան անասուններ և գործիքներ (1916 թ. գարնանը բաժանվեց 125 գութան,

⁹¹ ЦГИА РГр, ф. 520, сп. 1, д. 35, л. 19, также, д. 13, л. 37.

⁹² Նույն տեղում:

⁹³ «Հորիզոն», 1915 թ. մարտի 19:

⁹⁴ «Գյուղատնտես», 1916 թ. հունվարի 15, № 1:

⁹⁵ «Աշխատանք», 1916 թ. հունիսի 22, № 15:

⁹⁶ ЦГИА РГр, ф. 520, сп. 1, д. 90, л. 168, մասն «Վան-Տոսպ», 1916 թ. դեկտեմբերի 25, № 5:

⁹⁷ «Республика», 1917 г., 15 ноября, № 107:

⁹⁸ «Մշակ», 1916 թ. հունվարի 24, № 16:

⁹⁹ ЦГИА РГр, ф. 520, сп. 1, д. 90, л. 168, մասն «Վան-Տոսպ», 1916 թ. դեկտեմբերի 25, № 5:

100 գերանդի, բահեր և եղաններ)¹⁰⁰։ Արժեք ներկայացնող գործիքները և անասունները բաժանվում էին բացառապես այն պայմանով, որ հետագայում գործիք կամ անասուններ ստացող գյուղացին վերադարձներ դրանց արժեքը։ Գյուղատնտեսության հետագա զարգացման համար նախատեսվող այս միջոցառումը նպատակ ուներ հավաքված գումարներով հետագայում ստեղծել գյուղատնտեսական ֆոնդ։

Բավականին արդյունավետ էր գործում նաև Քաղաքների միությունը, որը 1917 թ. օգոստոսի 1-ին Ալաշկերտի շրջանում ուներ 13 հիմնարկներ, որոնք տեղաբաշխված էին Ղարաքիլիսայում, Ալաշկերտում և Դուտախում։ Այդպիսի հիմնարկներից էին 40 մահճակալով գաղթականական հիվանդանոցը, ամբուլատորիան, որբանոցը (416 որբերի համար), պարենային կետը, իրերի պահեստը և ախտահանական ջոկատը¹⁰¹։

1917 թ. սեպտեմբերին տեղի ունեցավ Ալաշկերտի գավառային համագումարը, որը քննարկեց Ալաշկերտի գավառում կենտրոնական կոմիտեի և ԿՀԲԸ գործունեության արդյունքները՝ պարենավորման, որբանոցային, հիվանդանոցային և կրթական գործունեության, սննդատու կայանների կազմակերպման և այլ հարցերի վերաբերյալ¹⁰²։ Գավառային համագումարի որոշումներից պարզ դարձավ, որ՝ ա) ԿՀԲԸ կից գործող ՀԿԿ իր ամբողջ գործունեության ընթացքում Ալաշկերտում ստացել և բաշխել էր 13246 փութ ալյուր, 17000 փութ ցորեն, 155 փութ շաքարավազ, 295 փութ շաքար, 72 փութ օճառ, 2 փութ թեյ, 38 փութ քարյուղ, 69 փութ բրինձ, 25000 հատ լուցկի։ Բ) ՀՀԿ սուղ միջոցներով Թոփրակ-Կալեի (Վաղարշակերտ) մեջ բացվել էր 12 մահճակալով հիվանդանոց։ Գ) Թոփրակ-Կալեում հիմնվել էր որբանոց-դպրոց, ուր սովորում էին 45 աշակերտ-աշակերտուհիներ։ Բացի դրանից, որբանոցն իր խնամքի տակ էր վերցրել 120-130 փոքրահասակ որբերի, որոնց համար կառավարությունից ամսական յուրաքանչյուր որբի համար ստացվել էր 15-ական ռ.։ Որբանոցը փակվեց 1917 թ. օգոստոսին, իսկ որբերը փոխադրվեցին Կովկաս։ Դ) 1916-17 ուսումնական տարում Ալաշկերտի մի շարք գյուղերում (Եզնի-Թափայում, Մանկասարում, Ղալաբեկում, Մազրայում) ԿՀԲԸ բացել էր դպրոցներ՝ 235 աշակերտներով, հակառակ այն բանի, որ գավառում չկային դպրոցական տարրական հարմարություններ։

1917 թ. հունիսին Ղարաքիլիսայում բացված սննդատու կայանում գաղթականների բաժանվել էր հաց և շաքար։

Երկարատև վիճաբանություններից և քննադատություններից հետո, համագումարը ձայների մեծամասնությամբ ընդունեց հետևյալ բանաձևը. «... Ալաշկերտի գավառական համագումարը կցտնդի, որ պարենավորման գործը եղել է օգտակար, բայց ոչ բավարար, որովհետև երկրի պաշտոնյաները կարիքների պարագայում եղել են թույլ...»¹⁰³։

¹⁰⁰ «Հորիզոն», 1916 թ. օգոստոսի 12, № 179։

¹⁰¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 26, ց. 1, գ. 176, թ. 45։

¹⁰² «Աշխատանք», 1917 թ. սեպտեմբերի 27, № 41։

¹⁰³ «Աշխատանք», 1917 թ. սեպտեմբերի 27, № 41։

Խնուսի (հունվարի 18), Մուշի (փետրվարի 1) և Բիթլիսի գրավումից հետո, 1916 թ. մարտի սկզբներին Թբիլիսիում ապաստանած մի խումբ մշեցիներ՝ թվով 230 հոգի, ցամաքային հայտնեցին վերադառնալ իրենց հայրենիք՝ ավերված օջախները վերականգնելու հույսով: Նկատի ունենալով գաղթական մշեցիների վերոհիշյալ մտադրությունը, ՀԿԿ 5000 ռուբլի հատկացրեց ճանապարհածախսի և հագուստեղենի¹⁰⁴ և 10000 ռ. էլ՝ գաղթականների ամենօրյա կարիքները հոգալու համար¹⁰⁵: Վերադառնալով հայրենիք, մշեցի այդ երիտասարդները ձեռնամուխ եղան այնտեղ գործող գաղթականական մարմինների աջակցության գործին:

1916 թ. մարտին Խնուսի, Մուշի և Սասունի շրջաններում կային կարիքի և գրկանքների մեջ գտնվող 8400 գաղթականներ: 1916 թ. գարնանը գաղթականների թիվը փոքր-իմջ մեծացավ և հասավ 8811-ի, որոնցից 3071-ը գտնվում էին Խուսում, Բռնաշենում, Մոտրգանում, 1516-ը՝ Սասունում, իսկ 4144-ը՝ Մուշում, Մշո դաշտում և Կիմնում: Ընդ որում պետք է նշել, որ Սասունի բնակչության 80 տոկոսը երիտասարդ տղամարդիկ էին, իսկ Խութի և Բռնաշենի գաղթականության մեծամասնությունը, որ եկել էր ընտանիքներով, կանայք և երեխաներ էին:

Գնալով ավելացող բնակչության պարենային ճգնաժամը հաղթահարելու նպատակով Մուշում ձեռնամուխ եղան գյուղատնտեսական աշխատանքների: Գյուղացիներին բաժանվեցին որոշ քանակությամբ եզներ և երկրագործական գործիքներ: Չնայած գործող գաղթականական կոմիտեների կողմից իրականացվեցին մի շարք միջոցառումներ, սակայն, այնուամենայնիվ, Մուշի գաղթական հայությունը գտնվում էր սարսափելի վիճակում¹⁰⁶: Անդրամիկը Մուշից ուղարկած իր հեռագրում նշում էր, որ «Մուշում 5-6 հազար ժողովուրդ սովամահի է մատնված...»: Միևնույն ժամանակ, Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Խատիսյանին ուղարկած իր հեռագրում Անդրամիկը բարեգործական հիմնարկներին կոչ էր անում օգնության հասնել անօգնական կանանց և մանուկներին¹⁰⁷:

1916 թ. հունիսին Մուշի շրջանում կենտրոնացած գաղթականների թիվը 14300-ից¹⁰⁸ հասավ 14500-ի¹⁰⁹, սակայն նրանց վիճակը մնաց անմխիթար: Անդամթերքի պակասության հետևանքով Մուշում լայն տարածում ստացան վարակիչ հիվանդությունները, որոնցից օրական մահանում էին 8-10 հոգի:

1916 թ. հուլիսի 23-ին տեղի ունեցած մահամջի հետևանքով թե՛ Սասունի լեռներում և թե՛ Մշո դաշտում խմբված 8162 գաղթականներ Մուշ-Բիթլիսից անցան թուրքական Բասեն, Կարսի մահամզի Կաղզվանի շրջան և Երևանի մահամզ¹¹⁰:

¹⁰⁴ «Համբավաբեր», 1916 թ. հոկտեմբերի 2, № 40:

¹⁰⁵ «Վան-Տոսպ», 1916 թ. մարտի 20, № 17, նաև «Հորիզոն», 1916 թ. մարտի 13, № 58:

¹⁰⁶ «Армяне и война», 1916 г., июль, № 4.

¹⁰⁷ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 28, ց. 1, գ. 404 (մաս 2), թ. 248, նաև «Վան-Տոսպ», 1916 թ. մարտի 20, № 17, նաև

«Գաղափար», 1916 թ. մարտի 18, № 14:

¹⁰⁸ Նույն տեղում, 1916 թ. հունիսի 26, № 31, նաև «Հորիզոն», 1916 թ. հունիսի 24, № 139:

¹⁰⁹ «Армяне и война», 1916 г., июль, № 5.

¹¹⁰ ЦГИА РГР, ֆ. 520, ց. 1, թ. 144.

ՀԿԿ Մուշի աներկայացուցիչ Արմեն Սասունին գրում էր, որ «հակառակ ամոր, որ խնուսից և ճանապարհի ճշմարտոր կետերից հեռագրված է բոլոր մարմիններին, որ օր առաջ մտահոգվեին Մուշի և Սասունի փախստականների մասին, այնուամենայնիվ, մախօրոք պատրաստություններ չէին տեսնված ճանապարհին»¹¹¹։ Անհրաժեշտ է սակայն նշել, որ գաղթի ամբողջ ճանապարհին գործում էին սննդատու 6 կետեր, որոնցում ԿՀԲԸ բաժանում էր թել և շաքար։ Իսկ Կաղզվանում բացվել էր հիվանդանոց՝ խոլերայի իր բաժանմունքով¹¹²։

Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում քրդերի մոտ գերության մեջ գտնվող փախստականներին ազատելուն։ 1916 թ. դեկտեմբերի 1-ին Հայկական կենտրոնական կոմիտեի Մշո շրջանի լիազոր Կարո Սասունին մույն կոմիտեին աներկայացրած իր հաշվետվության մեջ նշում էր, որ գերության մեջ գտնվող հայերին ազատագրելու Թիֆլիսի հանձնաժողովի մախսազա Անդրանիկի կողմից իրեն փոխանցված 2500 ռուբլով մինչև 1916 թ. նոյեմբերի 10-ը գերությունից ազատվել էին 630 գաղթականներ¹¹³։ Բրդերը դժվարությամբ էին բաց թողնում հայերին, քանի որ վերջիններս դաշտային աշխատանքներ էին կատարում իրենց համար։ Բացի դրանից, մրանք յուրաքանչյուր հայի համար պահանջում էին օսմանյան մեկ ոսկի։

1916 թ. ձմռանը, երբ ռուսական բանակը մուտք գործեց խնուս, ամսիջապես այնտեղ հաստատվեց գաղթականական մարմին, որը սկսեց մպաստ բաժանել գավառի փախստականներին։ Սակայն 6-7 ամիսների ընթացքում բաժանված մպաստը գրեթե ոչինչ էր¹¹⁴։

Գաղթական ազգաբնակչությունն ապրում էր գյուղերում գտնված ցորենով, որի պակասությունը այնքան զգալի էր, որ աշխատունակ տղամարդիկ հաճախ մեկնում էին խնուսից հարավ՝ 30-40 վերստ հեռավորության վրա գտնվող քրդաբնակ Նըթիկ գավառի և Մուրադ-Չայի եզերքին գտնվող անբնակ գյուղերը, արտերը հնձելու համար¹¹⁵։

1916 թ. օգոստոսյան գաղթից հետո, խնուսն ուներ 2-3 հազար բնակչություն, որից 1/4-ը մշեցիներ էին։ Գավառի 25 հայկական գյուղերից թափուր էին մնացել ընդամենը 4-ը, բնակեցված գյուղերից յուրաքանչյուրն ուներ 100-300 բնակչություն¹¹⁶։ 1916 թ. դեկտեմբերին և 1917 թ. սկզբներին խնուսի գաղթականության թիվը հասավ 3500-ի¹¹⁷։

¹¹¹ «Աշխատանք», 1916 թ. սեպտեմբերի 10, № 38։

¹¹² ЦГИА РГР, ф. 520, сш. 1, д. 31, л. 144.

¹¹³ «Համբավարներ», 1916 թ. սեպտեմբերի 4, № 49։

¹¹⁴ Public Record Office of England, FO 371/ 70371 / 2768, file (161096), p. 413.

¹¹⁵ «Հորիզոն», 1916 թ. նոյեմբերի 1, № 224։

¹¹⁶ Նույն տեղում։

¹¹⁷ Նույն տեղում։

ԱՎԱԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԵՎ
ԳԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
1918-20 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**

Գևորգ Ե-ի գրագրությունը Պողոս Նուբարի և Ավետիս Ահարոնյանի հետ:

Եվրոպական դիվանագիտական շրջանակներում Հայկական Հարցի հմարավոր վերաբերմամբ առթիվ Գևորգ Ե Սուրենյանց Կաթողիկոսը դեռևս 1912 թ. նոյեմբերի 10-ի թ. 1482 կոնդակով Պողոս Նուբարին կարգել էր իր ներկայացուցիչ և խնդրել «յանձն առնուլ երթալ ի վեհաժողով և առաջի առնել պատգամատրաց Եվրոպական Պետութեանց զխնդիր Հայոց և գտեղեկագիր մեր, հայցելով զմիջնորդութիւն մոցա առ ողբալի կացութիւն հայ ժողովրդեան Տաճկաստանի»¹:

Առաջին աշխարհամարտի տարիներին և 1918-20 թթ. Պողոս Նուբարը հարաբերակցության մեջ էր գտնվում եվրոպական կառավարությունների հետ և այդ մասին մշտապես տեղեկացնում կաթողիկոսին: Գևորգ Ե Սուրենյանցին գրած մամուլներում մա հիմնականում անդրադառնում էր արտաքին քաղաքականության հարցերին՝ կապված եվրոպական պետությունների՝ Հայաստանի ապագայի մկատմամբ ունեցած դիրքորոշման հետ, օրինակ՝ 1919 թ. ապրիլի 15-ին, հուլիսի 13-ին, 1920 թ. օգոստոսի 14-ին, սեպտեմբերի 6-ին, 8-ին, 20-ին, հոկտեմբերի 21-ին²:

Գևորգ Ե Սուրենյանց Կաթողիկոսը 1918 թ. դեկտեմբերի 4-ին «լիազորի կաթողիկոսի և մախազահին մամնայն հայոց պատուիրակութեան» Պողոս Նուբարին գրած մամակում հաղորդում էր Ավետիս Ահարոնյանի գլխավորած ՀՀ պատվիրակության Եվրոպա զնալու մասին, որ այն ունի իր «Հայրապետական հաճութիւնը»: Կաթողիկոսը «լիայոյս» էր, որ երկու պատվիրակությունները կծավալեն «համերաշխ ու համախոհ գործունէութիւն» և որպես դրա արդյունք «ամխախտ հիմունքներով հայ ազգի արդարութեան դատը հզորապէս» կպաշտպանեն: Նույն օրն իսկ, Գևորգ Ե Կաթողիկոսն Ավ. Ահարոնյանին գրած մամակում խնդրում էր իր կողմից «խորին հարգանք» ողջունել Պողոս Նուբարին և մրան արտոնել հարկ եղած դեպքում Ազգային պատվիրակության կազմը ուժեղացնելու համար հրավիրել Եղիշե եպիսկոպոս Դուրյանին³:

Փոխադարձ կապի երկարատև բացակայության պատճառով կաթողիկոսը Ավ. Ահարոնյանին հանձնարարել էր Պողոս Նուբարին «բերանացի» տեղեկացնել «անց ու դարձին»⁴:

¹ Օտեան Ե., Պողոս Փաշա Նուպար, Կ. Պոլիս, 1919, էջ 46-47:

² ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 196, թթ. 2-3, գ. 207, թ. 45-51, գ. 224, թթ. 13-14, 22-27, 30:

³ Նույն տեղում, գ. 185, թ. 4:

⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5 գ. 93, թ. 11, գ. 94, թ. 2, գ. 185, թթ. 1-2:

Վերոշարադրյալը ինքնըստինքյան վկայում է Գևորգ Ե Սուրենյանց Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Հայկական Հարցի ակնկալվող արդարացի կարգավորման նկատմամբ հիրավի հայրապետական վերաբերմունքի մասին: Ծրջահայաց և ճկուն կաթողիկոսը շատ լավ գիտակցում էր երկու պատվիրակությունների հնարավոր առնակատման հնարավորությունը և, ըստ այդմ, նրանց կենսականորեն ամֆրա-ժեշտ համագործակցության էր կոչում: Առանձնահատուկ տեղ են գրավում Պողոս Նուբարի և Ավետիս Ահարոնյանի համատեղ գրագրությունը Գևորգ Ե Սուրենյանցի հետ, ինչը շատ հազվադեպ երևույթ էր: Նման բացառություն էր 1919 թ. հուլիսի 18-ի և հուլիսի 31-ի նրանց հեռագրերը, որոնք վերաբերում էին 1919 թ. մայիսի 28-ի Միացյալ Հայաստանի ակտին⁵:

Այս խնդիրն ավելի մանրամասնեցվեց Պողոս Նուբարի 1919 թ. օգոստոսի 4-ի նամակում, ուր արդեն այդ հարցը մասնավորեցվեց և քաղաքականացվեց⁶:

Ընդհանուր առմամբ, եթե Պողոս Նուբարը Հայկական Հարցի արտաքին քաղաքական կողմին և միջազգային կյանքի անցուղարձին անդրադառնում և կաթողիկոսին ներկայացնում էր հիմնականում սեփական (Ազգային պատվիրակության) տեսանկյունից, ապա Ավետիս Ահարոնյանը, բնականաբար, այդ ամենը դիտարկում էր ՀՀ կառավարության և Հ.Յ.Դ. հայեցակետերից ելնելով:

Եվրոպայում հայ պատվիրակների և կաթողիկոսի ունեցած կապի առումով ուշագրավ է ՀՀ ԱԳՆ-ի 1919 թ. հունվարի 12-ի նամակը Գևորգ Ե Սուրենյանցին: Այդտեղ, մասնավորապես Հայկական Հարցի և Հայաստանի վիճակի ապագայի ուրոշման գործում Ազգային պատվիրակության կատարած աշխատանքը ԱԳՆ համարում էր «բազմակողմանի» և ունեցած դիրքն էլ՝ «կարևոր»: Եվ, ըստ այդմ, ցանկություն էր հայտնում Ազգային պատվիրակության գործունեության վերաբերյալ «իականաբար և ստույգ» տեղեկություններ ունենալու համար ձեռք բերել նրա գրած-ստացած «կարևոր թղթերի, վկայագրերի, դիմումների» պատճենները: Կաթողիկոսական դիվանն արդեն 1919 թ. փետրվարի 4-ին վերջինիս փոխանցեց իր տրամադրության ներքո եղած Ազգային պատվիրակության գործունեությանը վերաբերող վավերաթղթերի պատճենները⁷:

Այսպիսով, Գևորգ Ե Սուրենյանց Կաթողիկոսն անում էր այն ամենը, ինչը կնպաստեր հայկական զույգ պատվիրակությունների, ինչպես նաև ՀՀ կառավարության միջև փոխհամագործակցության հաստատմանն ու ամրապնդմանը: Մյուս կողմից, Պողոս Նուբարի և Ավետիս Ահարոնյանի գրագրությունը Գևորգ Ե Սուրենյանցի հետ մախ և առաջ հետապնդում էր տեղեկատվության նպատակ և վկայում վերջիններիս՝ կաթողիկոսի անձի նկատմամբ տածած խորին հարգանքի մասին:

⁵ Նույն տեղում, գ. 194, թ. 5; գ. 207, թ. 37:

⁶ Նույն տեղում, գ. 194, թ. 10-13:

⁷ Նույն տեղում, գ. 191, թ. 1:

Գևորգ Ե-ի գրագրությունը օտար անհատների և կառույցների հետ:

Նման գրագրությունը կրում էր հիմնականում պաշտոնական, երբեմն մաս անձնական բնույթ: Այդ կապն իր բովանդակությամբ լայնածավալ էր և ընդգրկում: Փոխադարձ մամուլագրական կապի ընթացքում շոշափվում էին զուտ կրոնա-եկեղեցական հարցերից մինչև միջազգային ընդհանուր մշակութային հիմնախնդիրներ: Այսուհանդերձ, հարաբերակցության բովանդակության գլխավոր առանցքը մնում էր Հայկական Հարցը՝ արդարացի լուծման ակնկալիքով:

Գևորգ Ե Սուրենյանցը տարասփյուռ հայության ճակատագրով մտահոգ և հոգատար էր դեռևս մինչ ՀՀ հռչակումը: Դեռ 1918 թ. հունվարի 13-ին մա Պարսից շահին հայտնել էր Ղարադաղի (Ատրպատական) հայոց ծանր վիճակի մասին և այդ առնչությամբ շահի «բարձր հովանաւորութիւնը հայցում Ղարադաղի հայութեան վրայ»: Միաժամանակ, Գևորգ Ե-ն խնդրում էր սանձել տեղի խաների «անհանդուրժելի ապերասանութիւնը», «զսպել մոցա, պատժել և հրամայել արդարադատութեան, վերադարձնելով կողոպտված ինչքը հայերին»: Պատասխանում Պարսկաստանի արտգործնախարար Մուլավեր Ուլ Մամեդիքը փետրվարի 7-ին տեղեկացրեց, որ իր կառավարությունը միայն բնույթի ոչ մի տեղեկություն չի ստացել, սակայն և այնպես՝ «հաղորդագրուած է դէպքի առթիւ հսկելու վերոյիշեալ գաւառի հայերի ապահովութեան մասին»⁸:

Համրապետության հռչակումից հետո միայն բարձրաստիճան ակտ էր Գևորգ Ե Սուրենյանցի ուղերձը Ավստրո-Հունգարիայի Կարլ և Գերմանիայի Վիլհելմ Բ կայսրերին՝ հայ ժողովրդին օգնության ձեռք մեկնելու խնդրանքով: Մասնավորապես, կայսր Կարլին գրած մամուլում կաթողիկոսը մշտում էր հայերի կոտորածների մասին և մրա ուշադրությունը հրավիրում մոտ 800 հազար հայ գաղթականների ծանր դրության վրա՝ շեշտելով, որ եթե մրանք անհրաժեշտ օգնություն չստանան, ապա մրանց վիճակը աղետալի կդառնա: Նա, միաժամանակ, խնդրում էր ազդել դաշնակից Թուրքիայի վրա, որպեսզի գաղթականներին թույլատրվի վերադառնալ իրենց հայրենիք: Այս դիմումն Ավստրո-Հունգարիայի արտգործնախարար Բուրյանի միջնորդագրով սեպտեմբերի 17-ին հանձնվել էր կայսրին: Իր հերթին, Բուրյանը կայսրին հայտնում էր, որ գաղթականների՝ հայրենիք վերադառնալու ուղղությամբ դիվանագիտական ուղիներով հարկ եղած հրահանգներ արդեն արվել են⁹:

Անդրկովկասում գերմանական ներկայացուցիչ Ֆոն Կրեալը 1918 թ. հոկտեմբերի 10-ին Գևորգ Ե Սուրենյանցին հայտնել էր մրա մամուլի՝ Վիլհելմ Բ կայսրին հանձնելու մասին:

Հայոց դատի հետապնդմանն էր ուղղված 1919 թ. մայիսի 17-ին Իտալիայի թագավոր Վիկտոր-Էմանուելին Գևորգ Ե Սուրենյանց Կաթողիկոսի գրած մամուլը, ո-

⁸ «Արարատ», Ս. Էջմիածին, 1918, թ. Ա-Գ, էջ 17:

⁹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 176, թթ. 22-23: Ա. Օհանջանյան, 1915 թվական, Անհերքելի վկայություններ, Երևան, 1997, էջ 178-179:

րը մասն հտալիայի և ՀՀ միջև բարիդրացիական կապերի ամրապնդմանն ու բարգավաճմանն էր նպատակաուղղված¹⁰:

ՀՀ ԱԳՆ ընդհանուր քարտուղար Աբրահամ Տեր-Հակոբյանը 1919 թ. հունիսի 30-ին կաթողիկոսական դիվանին տեղեկացրեց, որ Գևորգ Ե Կաթողիկոսի կոնդակը Կ. Պոլսում ՀՀ ներկայացուցիչ Թախթաճյանը թարգմանել է տվել իտալերեն և այն «գեղադիր» ընդօրինակվել է Վենետիկի Մխիթարյանների կողմից: Ընդ որում, Թախթաճյանն անձամբ և առանձին գրությամբ այն պետք է ներկայացներ Կ. Պոլսում իտալիայի բարձր կոմիսար Սֆորցային: Ստանալով մամակը՝ Սֆորցան, որ այդ ժամանակ արդեն իտալիայի արտգործնախարար էր դարձել և պետք է մեկնե՝ Հոմ, ասաց. «Հաճելի պարտք եմ համարում ինձ, հենց որ հասնեմ Հոմ, մամակը կհանձնեմ Նորին Վսեմություն Թագավորին, հաղորդեցեք կաթողիկոսին իմ խոնարհ հարգանքները»¹¹:

Իտալիայի պետական նախարար Մաթթեոլին հուլիսի 30-ին Վիկտոր-Էմանուելի անունից պատասխան մամակ ուղարկեց Գևորգ Ե Սուրենյանցին: Նա հայտնում էր, որ թագավորը «մասնատրապէս զգացում է Ձերդ Սրբազանութեան ուշադրութեան համար» և հանձնարարել է վստահեցնել, որ «կը պահի իբր սիրելի մուէր այս թանկագին վաւերաթուղթը»: Վերջում մա հաղորդում էր «ամենաջերմ բաղձանքներ Ձեզ եւ Հայաստանի համար, որն անցեալում այնքան հարաբերութիւններ է ունեցել իտալիայի հետ»¹²:

Որ Ամենայն Հայոց կաթողիկոսությունը 1918-20 թթ. եղել է առաջին Հանրապետության քաղաքական անցուղարձի կարևոր կենտրոններից մեկը՝ անվերապահ ընդունում էին ՀՀ ղեկավարությունը և օտար դիվանագետները: Հայրենի և օտարազգի բոլոր ներկայացուցիչներն իրենց պարտքն էին համարում այցելել Ս. Էջմիածին: Այդ հանգամանքն ամենակին էլ քաղաքավարության արդյունք չէր և սոսկ սիրալիր լինելու նպատակ չէր հետապնդում: Այսպես, 1918 թ. հուլիսին Ս. Էջմիածին են այցելել գերմանական և ավստրիական ներկայացուցիչներ Ֆոն Կրեսը և ֆոն Ֆրանկենշտեյնը, ՀՀ վարչապետ Հովհաննես Քաջազնունին, օգոստոսին՝ թուրքական բանակի հրամանատար Խալիլ փաշան, Երևանում թուրքական դեսպան Մեհմեդ Ալի փաշան, սեպտեմբերին՝ Վրաստանի ներկայացուցիչ Ս. Մդիվանին:

1919 թ. այցելել են. հունվարին՝ ֆրանսիական ներկայացուցիչ Պուադեբարը, մարտին՝ Զորավար Անդրանիկը, ապրիլ-մայիսին՝ անգլիական գեներալներ Բիչը, Միլը, Թոմսոնը, Կոբին և Դևին, հուլիս-օգոստոսին՝ Մակուի 6 խաները, Հունաստանի ներկայացուցիչը, սեպտեմբեր-հոկտեմբերին՝ իտալական ներկայացուցիչ Գաբրիան, ամերիկյան ներկայացուցիչներ Վիլյամ Հասկելը և Ջեյմս Հարբորդը, անգլիական ներկայացուցիչ Օլիվեր Ուորդրոպը, Տրապիզոնի հույն միտրոպոլիտ Քրիստանթոսը, նախարարներ Աբրահամ Գյուլխանդանյանը, Նիկոլ Աղբալյանը, Սարգիս Ա-

¹⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 197, թթ. 1-2, 4-5, 7-8:

¹¹ Նույնը, թթ. 4-5:

¹² Նույնը, թթ. 7-8, իտալերեն թնագիրը և հայերեն թարգմանությունը:

րարատյանը: 1920 թ. ընթացքում մամաբնույթ բարձրաստիճան մերկայացուցիչների այցելությունները ևս շարունակվեցին¹³:

1919 թ. դեկտեմբերի 14-ին անգլիացի պատմաբան և պետական գործիչ Գիբբոնը (մա 1918 թ. ապրիլին գորավար Անդրանիկի հետ այցելել էր կաթողիկոսին) Լոնդոնից Գևորգ Ե Սուրենյանցին իր հարգանաց հավաստիքն էր հաղորդում և շնորհավորում Ս. Ծնունդը¹⁴:

Օտար ռազմա-քաղաքական մերկայացուցիչների և եկեղեցական բարձրաստիճան գործիչների Ս. Էջմիածին այցելության մասին ՀՀ կառավարական մարմինները մշտապես կանխավ տեղեկացնում էին կաթողիկոսի դիվանին՝ Երևանի պարետ Արշո Ծախաթունուց, ներքին գործոց նախարար Արամ Մանուկյանից մինչև Ա.Գ.Ն¹⁵:

Որոշ օտար մերկայացուցիչների հետ Գևորգ Ե Սուրենյանցը պահպանում էր բարեկամական կապեր: Մասնավորապես, Անդրկովկասում անգլիական մերկայացուցիչ Օլիվեր Ուորդոպը Երևանում իր մերկայացուցիչ Գրեյսի միջոցով 1920 թ. փետրվարի 3-ին կաթողիկոսին մվիրեց Բրիտանական թանգարանի հայերեն և վրացերեն ձեռագրերի մեծահատոր ցուցակը¹⁶:

Օտար այցելուներից շատերին Գևորգ Ե Սուրենյանցը ողջույնի և օրհնության խոսքեր էր ուղղում, օրինակ՝ 1919 թ. հոկտեմբերի 1-ին՝ ֆրանսիական մերկայացուցիչ Պուադեբարին¹⁷:

Վերոշարադրյալի ենթատեքստում արժեն հիշատակել Կ. Պոլսի Զավեն Պատրիարք Եղիայանի և Գևորգ Ե Սուրենյանցի գրագրությունը՝ կապված օտարագրիների գործունեության հետ: 1919 թ. մարտի 4-ին Զավեն Պատրիարքը կաթողիկոսական դիվանապետին խնդրում էր Փարիզի Վեհաժողովի ԱՄՆ-ի պատվիրակության կողմից Կովկաս ուսումնասիրության եկող Ֆ. Ռիկսին «արժանավայել» ընդունել, քանզի մա «հայասեր» է: Իսկ արդեն հոկտեմբերի 3-ին Զավեն Պատրիարքը Գևորգ Ե Կաթողիկոսին հայտնում էր, որ Ամերիկայի Եկեղեցուց առաջարկ է ստացել այնտեղ գումարվելիք եկեղեցական համագումարին մասնակցելու համար մերկայացուցիչներ ուղարկելու նպատակով: Այս առումով, Կ. Պոլսի Ազգային Կենտրոնական Վարչության Կրոնական Ժողովը քննելով հարցը՝ գտել էր, որ խնդիրը վերաբերում է ընդհանուր Հայ Եկեղեցուն և դրա համար էլ հրավիրագրերը մույնությամբ ուղարկում են կաթողիկոսի տնօրինությանը: Իր հերթին, դիվանը մոյնեմերի 29-ին պատասխանեց, որ Զավեն Պատրիարքին արտոնում են ուղարկել «խոհական և կարող» եկեղեցականներ¹⁸:

¹³ «Էջմիածին», 1920, թ. 1, էջ 14-15; թ. 2, էջ 30-31; թ. 5, էջ 78; թ. 8, էջ 127; թ. 10, էջ 160; թ. 11, էջ 176:

¹⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 211, թթ. 1-2:

¹⁵ Նույն տեղում, 184, թթ. 1-2; գ. 207, թթ. 9-18, 38-39, 45, 53-56, 59, 68:

¹⁶ «Էջմիածին», 1920, թ. 6, էջ 96:

¹⁷ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 207, թ. 64:

¹⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 207, թթ. 1, 3-8:

Գևորգ Ե Սուրենյանց Կաթողիկոսի օտարների հետ ունեցած փոխադարձ գրագրությունը մեկ անգամ ևս հավաստում էր վերջիններիս՝ Մայր Աթոռի և Կաթողիկոսի անձի հանդեպ տաժած հարգալից վերաբերմունքի և Հայոց Եկեղեցու ունեցած ազդեցության պատշաճ գնահատման մասին:

Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանի արտասահմանյան առաքելությունները:

ՀՀ միջազգային հարաբերությունների համակարգի սահմաններում ակտիվ մասնակցությունից և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ներսից համապատասխան կապերի հաստատումից զատ Եկեղեցին ունեցել է նաև արտաքին դիվանագիտական բեղուն գործունեություն: Վերջին համգամանքը հիմնականում շաղկապված էր Երևանի փոխթեմակալ Խորեն եպիսկոպոս Մուրադբեկյանի գործունեության հետ: Համաձին Խորեն եպիսկոպոսի՝ Մայր Աթոռում ունեցավ իր դիվանագետին՝ այդ բառի լայն ըմբռնմամբ և բուն նշանակությամբ: Եթե բնորոշելու լինենք Խորեն եպիսկոպոսին որպես դիվանագետի, անհրաժեշտ է շեշտել նրա անաչառությունը, իրապաշտությունը և անկախությունը:

Հենց այս բնորոշիչ հատկություններն էլ Խորեն եպիսկոպոսին հնարավորություն էին ընձեռում ժամանակի լարված միջազգային հարաբերությունների համակարգում կողմնորոշվել, տալ ճիշտ գնահատականներ, լինել չեզոք, բայց սրտացավ դիտորդ, անաչառ և իրատես մասնակից: Այս ամենին դեռ հարկ է ավելացնել կուսակցական համակարգից նրա անկախությունը և միջկուսակցական պայքարին խառնվելուց հրաժարվելը: Խորեն եպիսկոպոսի վերոնշյալ գործնական բոլոր հատկանիշներն ի հայտ եկան հատկապես Անգլիա և ԱՄՆ կատարած առաքելությունների ընթացքում, որոնց հատկանշական գլխավոր առանձնահատկությունն այն էր, որ թեպետ Հայ Եկեղեցու գործունեությունն արտաքին ասպարեզում տեղի էր ունենում պետական կառույցներից դուրս և անկախ, սակայն նպատակաուղղված ծառայում էր ՀՀ արտաքին վարկի և հեղինակության ամրապնդմանը:

Փոխթեմակալի պաշտոնը կարևորվում էր հատկապես նրանով, որ ՀՀ կառավարության և Երևանում հավատարմագրված օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցիչների հետ Մայր Աթոռն անմիջական շփումներ ու հարաբերություններ էր հաստատում հենց նրա միջոցով: Փաստորեն, Խորեն եպիսկոպոսը Երևանում Ս. Էջմիածնի յուրօրինակ դեսպանն էր: Ըստ այդմ, ՀՀ կառավարությունն արժանվույց էր գնահատում Խորեն եպիսկոպոսի մեամօրինակ դիրքը: Այդ երկուստեք համագործակցությունը սկիզբ էր առել ՀՀ առաջին կառավարության և Ազգային խորհրդի Երևան ժամանումից սկսած: Հիշյալ մարմիններին ողջունելու համար Գևորգ Ե Սուրենյանցը Երևան էր ուղարկել Հուսիկ արքեպիսկոպոս Զոհրաբյանին: Հատկանշական է, որ պաշտոնական ընդունելությունը կատարվեց առաջնորդարանում: Խորեն եպիսկոպոսը Հուսիկ արքեպիսկոպոսի հետ միասին այցելեցին Ազգային խորհրդի նախագահ Ավետիք Սահակյանին, վարչապետ Հովհաննես Քաջազունուն, ներքին գործոց նախարար Արամ Մանուկյանին: Խորեն եպիսկոպոսի հեղինակության մասին է վկայում այն հանգամանքը, որ նրան վստահվեց կատա-

րել Կենտրոնական և Երևանի Ազգային խորհուրդների միացյալ միտի բացումը: Այս ամենի մասին մա 1918 թ. հուլիսի 23-ին տեղեկացրեց կաթողիկոսին¹⁹:

Այդ ընդունելության մասին դեռ հուլիսի 8-ին Գևորգ Ե Կաթողիկոսին հաղորդել էր Հուսիկ արքեպիսկոպոսը²⁰:

Հետագայում, խորեն եպիսկոպոսը մշտապես մասնակցել է կառավարության կազմակերպած դիվանագիտական ընդունելություններին, որոնց ժամանակ օտարերկրյա ներկայացուցիչները կաթողիկոսի մասին միշտ արտահայտվել են խորին հարգանքով: Մասնավորապես, Ադրբեջանի ներկայացուցիչ Թեքինսկին առաջնորդարանում կազմակերպված ընդունելության ժամանակ շեշտել է, որ ինքը «ներկայացել է հայ ազգի Պետին հայտնելու որդիական ամենախոնարհ հարգանաց հավաստիքը»²¹:

Նման փոխադարձ հարգալից հարաբերություններ են եղել նաև օտարերկրյա մյուս դիվանագետների հետ:

Խորեն եպիսկոպոսը հաճախ մասնակցել է ՀՀ կառավարության միստերին: Այդ ամենի և քննարկված բոլոր հարցերի վերաբերյալ մա դիվանին մանրամասն քաղաքական վերլուծականներ էր ներկայացնում: Այսպես, կառավարության 1919 թ. դեկտեմբերի 9-ի ընդլայնված միստում, որին մասնակցում էին նաև կառավարող Հ.Յ.Դ. կուսակցության բյուրոյի անդամները, հաշվի առնելով կաթողիկոսի ազդեցիկ դիրքը՝ միստը միաձայն ցանկություն հայտնեց, որ մա «որ այնքան սրտին մօտ է ընդունում իր սիրած Հայաստանի անկախութեան գաղափարը» - «յատուկ յորդոր» կարդա, որպեսզի Պողոս Նուբարը ընդունի միացյալ պատվիրակության նախագահի պաշտոնը և աջակցի ՀՀ կառավարությանը: Միաժամանակ, միստում ցանկություն հայտնվեց կազմակերպել քրդական առաջնորդ Աբդուլ Կադերի այցելությունը Գևորգ Ե Սուրենյանցին, և որ կաթողիկոսը հայկական մանդատի առնչությամբ հարկ եղած դիմումները կատարի ամերիկյան պետական գործիչներին: Այս ամենի մասին դեկտեմբերի 17-ին խորեն եպիսկոպոսը բավականին հանգամանալից և մանրամասն քաղաքական վերլուծական ներկայացրեց Գևորգ Ե Կաթողիկոսին²²:

Խորեն եպիսկոպոսն առավել հետաքրքրվում և ակտիվ էր հատկապես արտաքին ասպարեզում կատարվող աշխատանքների հանդեպ: Նա դեռևս 1919 թ. սկզբին վարչապետ Հ. Քաջազունում առաջարկել էր Եվրոպա ուղարկել նաև մի բարձրաստիճան հոգևորական: Կաթողիկոսին հայտնելով այդ մասին՝ խորեն եպիսկոպոսը նշում էր, որ մա թող որոշի, թե ով է գնալու, ընդ որում, հատկանշական

¹⁹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 190, թթ. 5-6; վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, գիրք Բ, խորեն Ա Մուրադբեկյան, կազմեց՝ Ս. Բեհրոյանը, Ե., 1996, էջ 56-57: Այսուհետև՝ վավերագրեր:

²⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 190, թ. 1:

²¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 207, թթ. 2-4; վավերագրեր, էջ 65-66:

²² Տե՛ս մանրամասն - ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 205, թթ. 3-7; վավերագրեր, էջ 76-80:

է, որ իր գնալու մասին նա վարչապետին ոչինչ չէր ասել: Այս խնդիրը որոշվեց դրական և թողնվեց վարչապետի հայեցողությամբ²³:

Հետագայում, նկատի ունենալով խորեն եպիսկոպոսի արժանիքները, Գևորգ Ե Կաթողիկոսը 1919 թ. մայիսի 31-ին նրան նշանակեց լիազոր ներկայացուցիչ՝ Անգլիա և Ամերիկա գնալու, այնտեղի վիճակի վերաբերյալ զեկուցագիր կազմելու, տեղի թեմի համար նոր սահմանադրություն մշակելու և մի շարք կարևորագույն խնդիրների լուծման նպատակով²⁴:

«Էջմիածին»-ը 1920 թ. հունվարի 11-ին հաղորդում էր, որ «Ն.Ա. Կարգադրութեամբ» մոտ օրերս Ամերիկա է մեկնելու Երևանի փոխթեմակալ խորեն եպիսկոպոսը, որը «նշանակուած է նաեւ կառավարութեան ներկայացուցիչ»²⁵:

Այսպիսով, խորեն եպիսկոպոսի առաքելությունն ուներ ինչ-որ չափով նաև պետական բնույթ:

1920 թ. մարտի 4-ին նա Բաթումից դուրս եկավ և Տրապիզոն-Կ.Պոլիս-Իտալիա գծով մարտի 15-ին նա հասավ Փարիզ, որտեղից շտապ անցավ Լոնդոն, ուր գտնվում էին Պողոս Նուբարը և Ավետիս Ահարոնյանը: Լոնդոնում նրա գլխավոր նպատակը «պատուիրակութեանց միացումը եւ համերաշխութեան գաղափարի իրագործումն» էր, որի համար ուներ կաթողիկոսի «հրամանը» և կառավարության «հրահանգը»: Սակայն, իրենից անկախ պատճառներով, գոյություն ուներ պատվիրակությունների սուր մրցակցություն, նա չկարողացավ իրագործել միացումը, որն այնքան օգտակար կլիներ Հայ Դատի հետագա ընթացքի համար:

Այդ ժամանակ Փարիզում և Լոնդոնում էին գտնվում նաև Կ. Պոլսի Զավեն Պատրիարք Եղիայանը և Կիլիկիո Սահակ Բ Խապայան Կաթողիկոսը, որոնք եկել էին եվրոպական տերությունների մոտ «հարկավոր դիմումներ» անելու: Այս կապակցությամբ, խորեն եպիսկոպոսն իրավացիորեն «շատ ցանկալի» էր գտնում, որպեսզի Գևորգ Ե Կաթողիկոսի կողմից մի հոգևորական կարգվի Եվրոպայում, որպեսզի այլևս հոգևորականներից ոչ մեկն առանց նրա «կամքի ու հրամանի» չգործի: Այս մասին խորեն եպիսկոպոսը 1920 թ. մարտի 22-ին Լոնդոնից տեղեկացնում էր Գևորգ Ե Կաթողիկոսին²⁶:

Նա փորձառու քաղաքագետին վայել հմտությամբ ներկայացնում և վերլուծում էր ոչ միայն արտասահմանում հայ կուսակցությունների գործելակերպի տարբերությունները և առկա հակամարտությունը, այլև եվրոպական երկրների ունեցած դիրքորոշումը Հայաստանին առնչվող ամենատարբեր հարցերի վերաբերյալ:

Ինչ վերաբերում է խորեն եպիսկոպոսի՝ ԱՄՆ-ում ունեցած գործունեությանը, ապա այդ մասին նա 1920 թ. հոկտեմբերի 14-ին բավականին մանրամասն երկու անգամ տեղեկացրեց Գևորգ Ե Կաթողիկոսին: Նա հայտնում էր ԱՄՆ-ի՝ ՀՀ և հայ

²³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 192, թ. 1-1 հալ.:

²⁴ Վավերագրեր, էջ 73-75:

²⁵ «Էջմիածին», 1920, թ. 2, էջ 31:

²⁶ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 222, թթ. 1-6; Վավերագրեր, էջ 81-86:

ժողովրդի հանդեպ ունեցած վերաբերմունքի ու Ամերիկայի հայոց թեմի պառակտված վիճակի մասին: Հատկանշական է, որ դեռևս Լոնդոնում գտնվելու ժամանակ նրան խորհուրդ չեն տվել մեկնել ԱՄՆ, քանզի այնտեղ «պառակտումը չափազանց քարացած է», սակայն մա, «զգալով իր պաշտօնի լրջությունը եւ ծանր պատասխանատվությունը», այնուամենայնիվ, որոշել էր գնալ և «ամեն զոհողութեան գնով ջանալ սրբութեամբ» կատարել կաթողիկոսի պատվերը:

Ամերիկայում գտնվելու ժամանակ խորեն եպիսկոպոսն ամերիկյան պետական այրերին էր հաճախել Գևորգ Ե Կաթողիկոսի կոնդակները, ունեցել մի շարք հանդիպումներ դիվանագիտական շրջանակներում: Ուշագրավ է հատկապես նրա տված գնահատականները ԱՄՆ-ում ընթացող մերքաղաքական մրցակցությանը, որի արդյունքում «Հայկական հարցը դարձել է ընտրական պայքարի խնդիր»²⁷:

Այսպիսով, մինչև աշուն տևած առաքելությունների ընթացքում խորեն եպիսկոպոսը հնարավորության սահմաններում կատարեց այն ամենը, ինչ պետք է կայունացներ արտասահմանում միջկուսակցական պայքարը և փոխեր տարբեր տերությունների վերաբերմունքը ՀՀ նկատմամբ: Նմանատիպ առաքելությունների շնորհիվ առանձնահատուկ շեշտվեց Եկեղեցու ունեցած դերը և նշանակությունը: Եվ օրինաչափ էր, որ Գևորգ Ե Սուրենյանց Կաթողիկոսի 1920 թ. դեկտեմբերի 11-ի կոնդակով խորեն եպիսկոպոսին շնորհվեց արքայական պատիվ²⁸:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և ՀՀ անկախության տոնը:

1919 թ. անկախության առաջին տարին նշվեց համաժողովրդական ընդգրկմամբ: Տոնակատարությանն իրենց գործուն մասնակցությունը բերեցին հոգևորականները: Կառավարական հանձնաժողովի նախագահ Գևորգ Մելիք-Ղարապետյանը 1919 թ. մայիսի 24-ին դիմեց Կաթողիկոսին՝ խնդրելով ներկա գտնվել տոնակատարությանը²⁹:

Մայր Աթոռի լուսարարապետ Գարեգին եպիսկոպոսը հայտնում էր, որ կաթողիկոսի հրամանով Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանը և Տիրայր եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը նշանակվել են Նորին Սրբության ներկայացուցիչներ այդ տոնին ներկայանալու համար³⁰:

Իսկ վաղարշապատի ազատության տոն կազմակերպող կոմիտեի նախագահը դիվանին ուղղված գրությամբ խնդրում էր, որ կաթողիկոսը բարեհաճի կարգադրել մաղթանք կատարել քաղաքի հրապարակում հանում ՀՀ և հայրենիքի ազատության համար զոհված հերոսների հիշատակի³¹:

²⁷ Տե՛ս մանրամասն - ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 222, թթ. 8-13; գ. 223, թթ. 2-4: Վավերագրեր, էջ 87-90:

²⁸ Վավերագրեր, էջ 87-90:

²⁹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 225, թ. 3:

³⁰ Նույն տեղում, գ. 199, թ. 1:

³¹ Նույնը, թ. 3:

Մինչև Երևանում մայիսի 28-ին կատարվելիք տոնակատարության սկիզբը Գ. Մելիք-Ղարաբյոյանը գեներալ Թովմաս Նազարբեկյանի հետ երեք մեքենաներով գնացին առաջնորդարան, որտեղից Գևորգ Ե Կաթողիկոսին, խորեն եպիսկոպոսին և Կաթողիկոսի շքախմբին պատվո պահակախմբով ուղեկցեցին հանդիսությունների կենտրոնատեղի, ապա վարչապետ Ալեքսանդր խատիսյանը Գևորգ Ե Կաթողիկոսին ուղեկցեց պառլամենտի շենք, որտեղ առաջին ելույթի պատիվը տրվեց Հայոց Հայրապետին³²:

ՀՀ տարբեր շրջաններում անցկացված տոնական միջոցառումներին տեղի եկեղեցականներն ամենագործուն մասնակցությունն ունեցան: Հետագայում ևս, պետության կյանքում տեղի ունեցող բոլոր քաղաքական մշտականից իրադարձություններին Եկեղեցու ղեկավարությունը մշտապես ներկա էր լինում: Օրինակ, 1919 թ. հուլիսի 31-ին Հայաստանի խորհրդարանի նախագահ Ավետիք Սահակյանը Գևորգ Ե Կաթողիկոսին թ. 1006 գրությամբ հայտնում է, որ «պատիւ ունի խնդրել Կաթողիկոսին, որ բարեհաճի շնորհ բերել պառլամենտի բացմանը ներկա լինելու օգոստոսի 1-ին»³³:

Հատկանշական է, որ խորեն եպիսկոպոսը 1919 թ. հոկտեմբերի 16-ին Գևորգ Ե Կաթողիկոսին հայտնում էր մի շատ կարևոր հանգամանք, որը հայ իրականության մեջ մեծ դեր է կատարում. այդ՝ Կաթողիկոսի «վարած քաղաքականությունը եւ բռնած դիրքն» է ՀՀ կառավարության հանդեպ, իսկ նրա վերաբերմունքը «հիացմունք է պատճառում անկախ Հայաստանի կողմնակիցներին» ու զսպում կուսակցական հաշիվներով այդ կառավարությանը «դեմ գնացողներին»: Ամփոփելով, խորեն եպիսկոպոսը շեշտում էր, որ Գևորգ Ե Կաթողիկոսի դիրքը «մեծ արժեք ունի մեր պետութեան կայունութեան եւ մեր ժողովրդի համերաշխութեան համար»³⁴:

1920 թ. մայիսի 27-ին վարչապետ Համո Օհանջանյանը Գևորգ Ե Կաթողիկոսին թ. 3474 գրությամբ խնդրում էր իր ներկայությամբ «պատուել մայիսի 28-ի Միացեալ եւ Անկախ Հայաստանի ազգային մեծ տօնը»³⁵:

Պետականության համար մեծ կարևոր մշտականություն ունեցող տարելիցների հանդեպ ուշադիր էր մաս «Էջմիածին» պաշտոնաթերթը: Այսպես, «ՀՀ ազատութեան տարեդարձը» խմբագրականում շեշտվում էր «բնաջնջման վերջին պահում գերմարդկային թափով, մոխիրների տակից վերածնունդ հայ պետութեան» կարևորությունը: Մայիսյան տոնակատարությունների ժամանակ «հայ չարքաշ ժողովրդի հետ» Եկեղեցին ևս կատարում է «Հայոց խնկելի Հայրապետների երազ-իդեալների, հրաշալի տեսիլների մարմնացման տօնը» և աղոթում Աստծուն «զՀանրապետութիւն Հայաստան աշխարհի պահեա համայն ամս ի շինութեան, ի խաղաղութեան եւ

³² ՀՀ Հասարակական-քաղաքական կազմակերպությունների Փաստաթղթերի կենտրոնական Պետական Արխիվ, ֆ. 4033, ց. 7, գ. 21Ա:

³³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 207, թ. 41:

³⁴ Նույն տեղում, գ. 222, թթ. 14-15:

³⁵ Նույն տեղում, գ. 225, թ. 1:

յանաստանություն»³⁶։ Իսկ Արսեն ծ. վարդապետ վեհունին, բանաստեղծական ոճով, բարձր գնահատելով մայիսի 28-ը՝ ՀՀ ծնունդը, այն համեմատում էր վահագնի ծննդի հետ³⁷։

ՀՀ պետականության հետ սերտորեն առնչվող մյուս կարևոր հարցը Հայաստանի փոխառության խնդիրն էր։ Այդ առթիվ Գևորգ Ե Կաթողիկոսը 1920 թ. հուլիսի 24-ին կողակով, որում «սրտին մոտ ընդունելով այդ գործը», հորդոր էր կարդում մեր ժողովրդի «բոլոր հարազատ զաւակներին սիրով եւ լիառատ ընդառաջ գնալ»։ Նման համաժողովրդական աջակցությունը, կաթողիկոսի համոզմամբ, պետք է ցույց տար, որ «հայրենիքի կուլտուրական վերաշինությունը, ձեռք բերած ազատությունը շատ թանկ է բոլորիս համար»³⁸։

Կաթողիկոսի այդ հայրենասիրական կոչի շարունակությունն էր Մեսրոպ եպիսկոպոս Տեր-Մովսիսյանի «Ազատ Հայաստանի առաջին փոխառությունը» հոդվածը։ Բարձր գնահատելով փոխառության նշանակությունը, սրբազանը շեշտում էր, որ այն գալու է «վերամշակելու Հայաստանի անապատ դարձած դաշտերը, շենացնելու ամայությունն մատնուած Հայաստան աշխարհը»³⁹։

Վերջապես, Սևրի պայմանագրի կնքումից հետո Գևորգ Ե Կաթողիկոսը անկախության փոխառության ֆոնդին փոխանցեց մեկ միլիոն ռուբլի⁴⁰։

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և ՀՀ ճանաչումը։

1920 թ. հունվարի 23-ին ՆԳ նախարարի օգնական Մանասյանը կաթողիկոսական դիվանին հայտնեց ՀՀ ճանաչման մասին և շնորհավորեց կաթողիկոսին⁴¹։

1920 թ. հունվարի 24-ին Գևորգ Ե Կաթողիկոսը հեռագրեց վարչապետ Ալ. Խատիսյանին, ուր ողջունում էր Հայաստանի «քաղաքական ծնունդը» և օրհնում «քաղաքի զինությունները եւ սիրելի հայ ժողովրդին» և աղոթում «Բարձրելոյն որ արժանացնէ տեսնելու Մասիսի գլխին հայկական դրօշակի ծածանումն ու Միացեալ Մեծ Հայաստանի հաստատությունը»⁴²։

Կարսի նահանգապետ Ղորղանյանի հունվարի 24-ի Գևորգ Ե Կաթողիկոսին հղած շնորհավորական հեռագրում նշվում էր, որ «Հայոց Հայրապետությունը պէտք է լինի այն մնայունը և անձեռնմխելին, որի առաջ որդիական մեծ պատկառանքով կը խոնարհուի ամեն մի հայ»։ Ուշագրավ է հեռագրի վերջին մասը. «Կեցցէ՛ այսօր Հայաստանը եւ մորա հետ անբաժան մեր սրբազնագոյն կաթողիկոսը»։ Անկախությո-

³⁶ «Էջմիածին», 1920, թ. 10, էջ 145-147։

³⁷ Նույնը, էջ 147-148։

³⁸ «Հայաստանի ձայն», Ե., 1920, թ. 108։

³⁹ Նույնը, թ. 109։

⁴⁰ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 94, թ. 13։ «Էջմիածին», 1920, թ. 11, էջ 175։

⁴¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 214, թթ. 2-3։

⁴² Նույնը, թ. 6։

յան ճանաչման առթիվ Գևորգ Ե Կաթողիկոսին շնորհավորեց մահ Կարսի փոխանորդ Կորյուն վարդապետը⁴³:

Կաթողիկոսական դիվանը հունվարի 26-ին թթ. 37-38 գրություններով պատասխանեց նրանց շնորհավորական հեռագրերին⁴⁴:

Իսկ «Էջմիածին» ամսաթերթի «ՀՀ անկախությունը» խմբագրականում մշվում էր, որ «ոչ մարդասիրութեան եւ ոչ էլ փոքր ազգերի իրաւահաւասարութեան մի ակտ էր այս, այլ մեծ տէրութիւնների ինչ-որ քաղաքական ըմբռնումների մի արդիւնք», որ ճանաչումը «յամենայն դէպս հայ ժողովրդի համար մի շնորհ չէր», որովհետեւ հայի մինչ այդ «թափած արիւնը, արած զոհաբերութիւնը, պատմական կուտորական խոշոր աշխատանքը» նրան լիուի իրավունք է տվել ունենալու այդ քաղաքական ազատությունը: Այսուհանդերձ, ճանաչման փաստը դեռեւս հայկական իղձերի «լիակատար թարգմանը չէ, մա կիսատ է եւ անորոշութիւններ ունի»: Այդ կիսատությունը, ըստ այդմ, կամխորշված է «առայծմ միայն գոյություն ունեցող» ՀՀ ճանաչմամբ, քանզի արեւմտահայ յոթ մահաճգները դուրս են մնացել այդ ճանաչումից. «Վեհաժողովը վճռում է հայկական հարցը թերի և առանց Տաճկահայաստանի»:

Այս քննադատական մոտեցմանը զուգահեռ ներկայացվում էին մահ «մխիթարող կողմեր», այն է՝ հայ ժողովուրդը քաղաքականորեն անկախ ապրելու «իրավունքի վկայական ստացաւ, թէեւ շատ ուշ ու արիւնաքամ լինելուց յետոյ»: Ափոփիչ էր համարվում այն հանգամանքը, որ հայ ժողովուրդը «մի ազատ անկիւն ստացաւ երկրագնդի վրայ» և ունեցավ «շատ փոքր, սահմանափակ մի հողամաս, որի իրավունքները միջազգայնորեն ընդունվում են»: Վերջում եզրակացնում էին, որ հայ ժողովուրդը և Հայ Եկեղեցին սպասում են, որ «Միացեալ եւ անկախ Հայաստանի աւետիքը կը գալ Փարիզից»⁴⁵:

Ինչ վերաբերում է անկախության ճանաչման դիվանագիտական կողմին, ապա այդ առթիվ հունվարի 28-ին Գևորգ Ե Կաթողիկոսը մի շարք շնորհավորական հեռագրեր հղեց տարբեր երկրների կառավարություններին և գործիչներին⁴⁶:

Անտանտի Գերագույն Խորհրդի նախագահ, Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Կլեմանսոյին իր և հայ ժողովրդի անունից երախտագիտություն էր հայտնում Հայաստանի անկախության համար ցուցաբերած «անկեղծ հոգատարութեան» համար: Ծանաչման փաստը կաթողիկոսն ընդունում էր որպէս «մարդասիրութեան եւ արդարութեան ակտ», որի մեջ տեսնում էր դաշնակիցների կողմից հայերի «արեւան հեղեղների» գնով վաստակած իրավունքների ճանաչումը:

⁴³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 214, թթ. 2-3: «Էջմիածին», 1920, թ. 4, էջ 61:

⁴⁴ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 214, թթ. 7-8:

⁴⁵ «Էջմիածին», 1920, թ. 4, էջ 49-52:

⁴⁶ Տես - ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 214, թթ. 6, 9-16, 18-20, 23-27; գ. 222, թ. 8: Վավերագրեր, էջ 86: «Էջմիածին», 1920, թ. 4, էջ 58-62; թ. 6, էջ 96:

Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Լորդ Քերզոմին հայտնում էր շնորհակալություն, իսկ «բրիտանական մեծ ազգին ու զաւիհին»՝ երախտագիտություն:

Անգլիկան Եկեղեցու պետ Քենթրբերիի արքեպիսկոպոսին հայտնում էր «անկեղծ շնորհակալություններ»՝ հայոց օգտին նրա «անխնայ ջանքերի» համար, որը նրան պատիվ է բերում: Կաթողիկոսը վստահություն էր հայտնում, որ արքեպիսկոպոսը չի ձգի «մեր դատը», մինչև որ ամբողջ աշխարհի կողմից չճանաչվի «աւելի ընդարձակ Միացեալ Հայաստան»:

Հեռագրերի այս շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում բրիտանացի հայասեր լորդ Ջեյմս Բրայսին ուղղվածը, ուր Գևորգ Ե Կաթողիկոսը հայտնում էր շնորհակալություն իր «տառապեալ ժողովրդին» նրա ցույց տված «բոլոր սիրո և համակրանքի» համար, որի «ջանքերի շնորհի» Գերագույն Խորհուրդը Հայաստանը ճանաչեց փաստացի մի պետություն: Կաթողիկոսն ավելացնում էր, որ այդ համաձայնագրը «խնդրեւիս եւ յոյս» է տվել, որ շուտով պիտի գա այն օրը, երբ «աւելի ընդարձակ եւ Միացեալ Հայաստան պիտի ճանաչի ոչ միայն փաստօրէն, այլեւ իրաւօրէն»:

Ծնորհավորական հեռագրեր ուղարկվեցին նաև Անդրկովկասում անգլիական, ֆրանսիական և իտալական ներկայացուցիչներ Ուորդոքային, Նոնանկուրին, Գաբրային: Գևորգ Ե Կաթողիկոսը Հայաստանում Փարիզի Վեհաժողովի ներկայացուցիչ ամերիկացի Հասկելին հայտնեց շնորհակալություն «հայ ազգի ֆիզիկական գոյությունը պահպանելու նրա մարդասիրական ջանքերի համար»:

Ֆրանսիայի նախագահ Պոլ Դեշանելին Գևորգ Ե Կաթողիկոսը նախ շնորհավորեց ընտրվելու առթիվ, ապա համոզմունք հայտնեց, որ նա կշարունակի իր «բարձր եւ օգտակար օժանդակութիւնը Միացեալ Հայաստանի վերստեղծման համար»:

Իր ուղարկած հեռագրերին Գևորգ Ե Կաթողիկոսը փոխադարձաբար ստացավ հետևյալ պատասխանները⁴⁷:

Կ. Պոլսում ֆրանսիական բարձր կոմիսարը նախագահ Դեշանելի անունից մարտի 18-ին կաթողիկոսին շնորհակալություն հայտնեց բարի մաղթանքների համար:

Անգլիայում գտնվելու ժամանակ Խորեն եպիսկոպոսն անձամբ «մեծ հայասերներ Ջեյմս Բրայսին եւ Վիլեմսին» հայտնել էր կաթողիկոսի «Հայրապետական ողջունը եւ օրհնութիւնները»: Երկու անգլիացիներն էլ «անչափ գոհ եղան» և Խորեն եպիսկոպոսին խնդրեցին կաթողիկոսին հայտնել. «Անչափ գոհ եւ հպարտ ենք զգում մեզ Ն. Ս. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուշադրութիւնից: Մենք պատրաստ ենք միշտ կատարել Վեհափառ Հայրապետի հրամանները եւ ծառայելու նրան, նամանաւոր, որ հայ ժողովուրդին մենք սիրում ենք, գիտենք նրա պատմութիւնը, նրա վիճակը, նրա ընդունակութիւնը եւ հաւատում ենք նրա լաւագոյն ապագային»:

⁴⁷ «Էջմիածին», 1920, թ. 9, էջ 144; թ. 10, էջ 159-160; թ. 11, էջ 174:

Յայտնեցէք Վեհին, որ քանի կենդանի ենք՝ պետք է աշխատենք օգտակար լինել մրա հօտին»⁴⁸:

Զ. Բրայսը փետրվարի 20-ին Գևորգ Ե Կաթողիկոսին գրած մամակում, որը ապրիլի 11-ին անձամբ կաթողիկոսին է հանձնում անգլիացի քահանա Հարկորդը, հայտնեց իր շնորհակալությունը և բարեմաղթանքները: Մյուս կողմից, մա տեղեկացնում էր, որ «բազմատանջ ժողովրդի բոլոր բարեկամներին մեծ հաճոյք է եղել Երեւանի համրապետութեան ճամաչումը եւ այսպիսով շատ տարիների խաւարումից վերջ ազատութեան եւ անկախութեան արեգակը դարձեալ ծագում է Հայաստանի վրայ» ու հայ ժողովրդին ցանկանում էր հաջողություն և բարգաւաճում⁴⁹:

Ամրկովկասում բրիտանական ներկայացուցիչ Ուորդրոպը մարտի 19-ին Գևորգ Ե Կաթողիկոսին տեղեկացրեց, որ հաղորդել և լորդ Քերզոնից ստացել է պատասխան, ուր վերջինս կաթողիկոսին շնորհակալություն էր հայտնում բարի ցանկությունների համար: Ուորդրոպն իր կողմից ավելացրել էր, որ կաթողիկոսը կարող է միանգամայն վստահ լինել, որ «Մեծ Բրիտանիայի ժողովուրդն ու կառավարութիւնը ներշնչուած են ամենապսեմ հարգանքի զգացմունքներով դէպի Ձերոյ Սրբութիւնը եւ բարեկամութեան ու բարեացակամութեան զգացմունքով՝ դէպի հայ ժողովուրդը»⁵⁰:

1920 թ. հուլիսի 1-ին Քենթերիի Արքեպիսկոպոսը Գևորգ Ե Կաթողիկոսին ուղղված մամակում տեղեկացնում էր, որ ընդունել է Զավեն Պատրիարքին և Խորեն եպիսկոպոսին ու հայտնում էր շնորհակալություն «այնքան բարի եւ սրտագին ողջոյնի պատգամի համար»:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և ԱՄՆ-ի մանդատի հարցը:

Հայ-ամերիկյան փոխհարաբերություններում Մայր Աթոռը ցուցաբերում էր մեծ հետաքրքրություն՝ հատկապես կապված ՀՀ կառուցմամբ ԱՄՆ-ի ակնկալվող մանդատի առթիվ: Այս պարագան լավ էր հասկանում մաս ՀՀ կառավարությունը և հարկ եղած դեպքում միշտ դիմում կաթողիկոսի աջակցությանը: Կառավարության 1919 թ. դեկտեմբերի 9-ի ընդլայնված նիստում, որին մասնակցում էին կառավարող Հ.Յ.Դ. բյուրոյի անդամները և Երևանի փոխթեմակալ Խորեն եպիսկոպոսը, ի թիվս բազմաթիվ հարցերի, քննվեց մաս ամերիկյան մանդատի խնդիրը հենց մշտապես տեսանկյունից: Կառավարությունը ցանկալի համարեց, որ կաթողիկոսը մոր դիմումներ հղի ամերիկյան պետական գործիչներին՝ համոզված լինելով, որ դրանք «իրանց մեծ արժեքը կ'ունենան եւ անպայման կը շտապեցնեն ամերիկեան հովանաւորութեան եւ Միացեալ Մեծ Հայաստանի անկախութեան խնդրի լուծումը»: Այս մասին

⁴⁸ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 222, թ. 6: Վավերագրեր, էջ 86:

⁴⁹ «Էջմիածին», 1920, թ. 9, էջ 144:

⁵⁰ Նույնը:

Գևորգ Ե Կաթողիկոսին դեկտեմբերի 22-ին տեղեկացրեց խորեն եպիսկոպոսը՝ փոխանցելով նաև կոնդակներ ուղարկելու ցանկալի անձանց ցուցակը⁵¹:

Քիչ անց, ՀՀ ԱԳՆ Երևանի փոխթեմակալ խորեն եպիսկոպոսին դեկտեմբերի 26-ին պաշտոնապես տեղեկացրեց ամերիկյան գործիչների ցանկը: Ի պատասխան ՀՀ ԱԳՆ խնդրանքի՝ Գևորգ Ե Կաթողիկոսը 1919 թ. դեկտեմբերի 31-ին համապատասխանաբար թթ. 873-878 օրհնության կոնդակներ հղեց ԱՄՆ-ի պետքարտուղար Ռոբերտ Լանսինգհին, Հայաստանի Անկախության Ամերիկյան Կոմիտեի (ՀԱԱԿ) նախագահ Ջեյմս Ջերարդին, Միջազգային պարենավորման կոմիտեի նախագահ Հերբերտ Հուվերին, սենատորներ Հեմրի Լոջին և Հիչքոկին, ՀԱԱԿ-ի մամուլի բյուրոյի քարտուղար Վահան Քարտաշյանին, իսկ 1920 թ. հունվարի 6-ին՝ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնին թ. 903 կոնդակը⁵²:

ԱՄՆ-ում դիվանագիտական առաքելության ընթացքում խորեն եպիսկոպոսն ամփոփականորեն զբաղվեց այդ կոնդակների հանձնմամբ⁵³:

Նա հենց այդպես էլ տեղեկացրեց Գևորգ Ե Կաթողիկոսին. «Ամերիկա հասնելուն պես անցայ Վաշինգտոն կատարելու Ձերդ Սրբութեան պատուէրը, կոնդակները յանձնեցի ըստ պատկանելեաց»: Ամերիկյան ժողովրդին (իմա՝ Վիլսոնին) ուղղված կոնդակը հանձնել է արտագործնախարար Կոլբին, որն էլ, համաձայն խորեն եպիսկոպոսի խնդրանքի, հենց նրա ներկայությամբ կարգադրել է կոնդակը հրապարակել ամերիկյան լրագրերում: Մյուս կոնդակները խորեն եպիսկոպոսը հասցեստեղծեցին է հանձնել ԱՄՆ-ում ՀՀ ներկայացուցիչ Գարեգին Փաստրմաճյանի և Վ. Քարտաշյանի ընկերակցությամբ: Կոնդակները հանձնելիս խորեն եպիսկոպոսը բոլորին հայտնել է կաթողիկոսի «Հայրապետական ողջոյնները եւ Հայրական օրհնութիւնները», գոհունակություն և շնորհակալություն՝ հայ ժողովրդին ցույց տրված օժանդակության և բարեկամական վերաբերմունքի համար: Ամերիկյան գործիչների պատասխանը հիմնականում հանգում էր հետևյալին. «Յայտնեցէք Ն. Ս., որ մենք շատ պարտականութիւններ ենք յանձն առել հանդէպ հայ ժողովրդի եւ դժբախտաբար խօսքից գործի չենք անցել, համոզուած եղէք, որ մենք խօսքից գործի կ'անցնենք, երբ կը պարզուի մեր քաղաքական դրութիւնը: Ասացէք Վեհափառ Հայրապետին, որ մենք արժանի չենք այն պատուին, որին նա մեզ արժանացնում է, բայց կ'աշխատենք արժանի լինել»:

Խորեն եպիսկոպոսը հանդիպել է նաև Վաշինգտոնի Անգլիկան Եկեղեցու եպիսկոպոս Հարդինգին, որի կողմից հարգալից ընդունելության է արժանացել: Վերջինս ասել է. «Իմ յարգանքներս տարէք Հայ Առաքելական ամենաբին Եկեղեցու Պետին, ասացէք, որ Անգլիկան-եպիսկոպոսական Եկեղեցին Հայաստանեայց Եկեղեցու կրտսեր քոյրն է և մշտական բարեկամը հայ ժողովրդի»:

⁵¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 205, թ. 7; Վավերագրեր, էջ 80:

⁵² ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 210, թթ. 1-10:

⁵³ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 222, թթ. 11-13; Վավերագրեր, էջ 94-95:

Ամերիկյան մերձավորարևելյան քաղաքականության հանդեպ Եկեղեցու ուշադիր վերաբերմունքի ուշագրավ վկայությունն էր նաև ՀԱԱԿ-ի նախագահ Ջերարդի՝ սենատի ԱԳ ենթահանձնաժողովի նախագահ Հարդինգին ուղղված մամակի հրապարակումը «Էջմիածին» պաշտոնաթերթում⁵⁴:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և Սևրի պայմանագիրը:

1920 թ. օգոստոսի 10-ին Փարիզի արվարձան Սևրում կնքվեց հաշտության պայմանագիր դաշնակից տերությունների և Օսմանյան կայսրության միջև: Այդ պայմանագրի հաղթող կողմերից մեկը ՀՀ-ն էր: Հայ ժողովրդի գրեթե բոլոր հասարակական-քաղաքական խավերը ողջունեցին և դրական գնահատեցին այն: Այս հարցի առնչությամբ ևս Մայր Աթոռը գտնվեց իր բարձրության վրա:

1920 թ. սեպտեմբերի 3-ին վարչապետ Համո Օհանջանյանին ուղղված հեռագրում Գևորգ Ե Կաթողիկոսն իր գոհունակությունն էր հայտնում այս պայմանագրի կնքման առթիվ: Կաթողիկոսը գրում էր. «Ի սրտե փափագող իմ սիրեցեալ ազգիս երջանկութեան եւ իմ պանծալի Հայրենիքի եւ Պետութեան բարգաւաճման եւ յարաբերութեան եւ շարունակ աղօթում էի, որ Աստուած ինձ արժանացներ տեսնել իմ հայրենիքի ազատութիւնը, անկախութիւնը եւ միացումը»:

Վեհափառը Սևրի պայմանագրի կնքմամբ համարում է «մեծ Հայաստանի լրացման ակտը կատարուած» և անձամբ Մայր Տաճարում օգոստոսի 29-ին մատուցել է Ս. Պատարագ, օրհնել և սրբագործել «անկախ, միացեալ եւ մեծ Հայաստանի տունը»: Այս ամենից հետո, կաթողիկոսը Մայր Տաճարի գավթում կատարում է հայրապետական մաղթանք «մեր հայրենիքի բարգաւաճման եւ Հանրապետութեան յարատևութեան համար»: Վերջապես, որպեսզի «լիակատար կատարած լինի Հայոց Հայրապետն իր պարտքը դէպի հայրենիքը»՝ կաթողիկոսը Ս. Էջմիածնի կողմից Հայաստանի փոխառության ֆոնդին տալիս է 1 միլիոն ռուբլի⁵⁵:

Գևորգ Ե Կաթողիկոսն ուխտել էր պատարագել միայն այն ժամանակ, երբ կստորագրվի «Միացեալ Անկախ Հայաստանի» համար պայմանագիրը: Եվ փաստորեն, օգոստոսի 29-ին, նա կատարեց «իր սրտին այնքան մոտ սրբազան ուխտը»: Աստվածածնա Վերափոխման օրը Հայրապետը հանդիսավոր Պատարագ մատուցեց, ապա վանքի բակում հոծ բազմության առջև ՀՀ համար մաղթանք կատարեց: «Օրվա պատշաճ խօսք» ասաց դիվանապետ Կորյուն վարդապետը⁵⁶:

Ուշագրավ էր Մայր Տաճարի գավթում արված մաղթանքի խորագիրն իսկ. «Մաղթանք վասն Հանրապետութեան Հայաստան Աշխարհի»⁵⁷:

⁵⁴ «Էջմիածին», 1920, թ. 6, էջ 84-87:

⁵⁵ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 94, թթ. 13:

⁵⁶ «Էջմիածին», 1920, թ. 11, էջ 175:

⁵⁷ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 225, թթ. 7-10:

Այդ «Հայրապետական մաղթանքը» Գևորգ Ե Կաթողիկոսի կարգադրությամբ ուղարկվեց թեմեր ու վիճակներ՝ «ի գործադրութեան»⁵⁸:

